

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ  
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРХЕОЛОГИЧЕСКИЕ РАСКОПКИ В АРМЕНИИ

№ 22

ДВИН  
III

Г. Г. КОЧАРЯН

ДВИН В АНТИЧНУЮ ЭПОХУ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЕНИИ  
ЕРЕВАН 1991

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

№ 22

Դ Վ Ի Ն

III

Գ. Գ. Ք Ո Ջ Ա Ր Ց Ա Ն

ԴՎԻՆԸ ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1991

Տպագրվում է Հայաստանի ԳԱ հնագիտության և ազգագրության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝  
պատմական գիտությունների դոկտոր  
Գ. Ա. ՏԻՐԱՅՑԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝  
պատմական գիտությունների քեկնածուներ  
Ա. Ա. ՔԱՆԱԹԱՐՏԱՆԸ և Ֆ. Ի. ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՈՎԸ

**Քոչարյան Գ. Գ.**

Ք 822 *Դվինը անտրյ դարաշրջանում/Պատ. իմր. Գ. Ա. Տիրացյան:*  
Հայաստանի ԳԱ հնագիտ. և ազգագր. ին-ա.—Եր.: ՀԳԱ հրատ.,  
1991.—115 էջ. 14 թ. նկ. (Հնագիտ. պեղումները Հայաստանում  
№ 22. Դվին III)

Աշխատությունը նվիրված է Դվինի անտիկ դարաշրջանի բնակավայրի նյութական մշակույթի ուսումնասիրությանը: Ներկայացվում է բնակավայրի, դամբարանադաշտի և ջրչակ տարածքի հնագիտական ուսումնասիրությունը: Փննարկվում են նյութական մշակույթի ասարհը բնագավառները արտացոլող և տնտեսական կյանքին, արաադրական դործունեությանն առնչվող նյութերը, պատմական աղբյուրները, սրանց հիման վրա տրվում մի շարք եզրահանգումներ: Հնագիտական նյութի նման ուսումնասիրությունը բացահայտում է ոչ միայն վերջինիս օրգանական կապը տվյալ դարաշրջանի հուշարձանների հետ, այլև նպաստում Հայաստանի կուլտուր-պատմական առնչությունների բացահայտմանը առաջավորասիական, հատկապես՝ իրանական, մասամբ նաև հունա-հռոմեական աշխարհի հետ:

Նախատեսված է պատմարան-հնագետների և ընթերցող լայն շրջանների համար:

0504000000  
Ք 85—89  
703(02)—91

ԳՄԴ 63.4(22)

ISBN 5—8080—0039—4

Հայաստանի ԳԱ հրատարակչություն, 1991

## Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Անտիկ Դվինը ձևավորվում է այն ժամանակ, երբ հելլենիստական քաղաքակրթության փուլը թեակոխած Հայաստանը առաջավորատիական մյուս երկրների հետ ընթանում էր ստրկատիրական հասարակարգի ուղիներով: Դվինի անտիկ շրջանի մշակույթը իր մօջ յուրովը արտացոլել է Հայաստանի տվյալ պատմաշրջանի ինքնատիպ դժբեր, որոնց հետադոտությունը դալիս է նպաստելու Հելլենիստական Հայաստանի պատմության ու մշակույթի ընդհանուր ուսումնասիրությանը:

Դվինի բնակավայրի ուսումնասիրության այժմեականությունը պայմանավորված է Հայաստանի անտիկ հնագիտության զարգացման հրատապ խնդիրներով: Հին Հայաստանի հնագիտության առաջընթացի արդի փուլում, երբ ուսումնասիրվում են այդ դարաշրջանի նշանավոր կենտրոնները՝ Արմավիրը, Արտաշատը, Գառնին, Շիրակավանը, համեմատարար «շարքային» բնակավայրերի-ուսումնասիրության պրոբլեմի լուծման և ստեղծված բացիլրացման նպատակով ձեռնարկված՝ Կարճաղբյուրի, Մոխրարլուրի, Շամիրամի, Ավանի, Դվինի պեղումները առանձնակի կարևորություն են սաանում: Սրանց շնորհիվ բացահայտվում են այդ իսկ բնակավայրերի բնույթը, վերջիններիս դերը երկրի սոցիալ-տնտեսական, մշակութային, թերևս նաև քաղաքական կյանքում, հետևաբար և, մեծապես նպաստում են երկրի տվյալ դարաշրջանի կյանքի պատկերը խոր և համակողմանիորեն հետազոտելուն:



Այսօր, երբ Դվինի անտիկ դարաշրջանի բնակավայրը դարձել է հատուկ ուսումնասիրության առարկա, գիտական նոր իմաստավորում են ստանում դրավոր տարբեր աղբյուրներում Դվինի մասին եղած տեղեկությունները:

Դվինի մասին արժեքավոր վկայություններ են հաղորդում հայ միջնադարյան գրավոր աղբյուրները, որոնց անդրադառնալով մասնագետներից ումանք շոշափում են նաև անտիկ դարաշրջանի Դվինին առնչվող ուշագրավ շատ հարցեր: Առաջին տեղեկությունները պատկանում են Փավստոս Բուզանդին և Մովսես Խորենացուն. «Ու հտ հրաման թագաւորն ղօրավարին իւրոյ՝ հանել խաշար յաշխարհն բազում, և բերել ղվայրենի կողին մայրեաց,

և տրնկել զայն յկյրարատեան զաւառին. և առեալ յամուր բերդէն արքունի, որում կոչեն Գառնի, մինչև ՚ի դաշան Մեծամօրի ՚ի բլուրն՝ սր անուանեալ կոչի ՚Իուիճ. որ կայ ՚ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Արսաշատու, զգետն խոնարճ մինչև յապարանսն Տիկնունի՝ տնկեցին զկաղնիսն՝: «Նա (խոսրով Բ Կոտակը—Գ. Ք.) և զարքունիսն փոխէ վերոյ անտառին յոստ մի, ապարսնս հովանաւորս շինեալ, որ ըստ պարսկապետն լեզուին Դուին կոչի, որ քարգմանի բլուր»<sup>2</sup>:

Պատմիչների այս վկայություններից ելնելով, Դվին անվան և նրա ստուգարանության հարցերով զբաղվել են մի շարք հայագետներ: Ըստ Սեն-Մարտենի, ժամանակակից պարսկերենում չնա Դվին բառը, սակայն չի բացառվում նման բառի ղոյությունը հին պարսկերենում<sup>3</sup>: Ն. Ադոնցը Դվին անվան ստուգաբանությունը փորձում է բխեցնել Փոքր Հայքի Դարանա, Իոկ Կ. Ղաֆաղարյանը՝ դեռևս էնեոլիթյան շրջանում ըլրի վրա ապրող ցեղի կամ տոհմի անուններից<sup>4</sup>: Գ. Ք. Զահուկյանը, նկատի առնելով Ն. Բյուզանդացու մասնանիշ արված կելտական զուգահեռները, հնդեվրոպական լեզուների նորագույն ստուգարանական բառարանների համեմատական տվյալների լսզմակողմանի հաշվառման հիման վրա, բացահայտում է, որ հիշյալ կելտական բառերը ծագում են հնդեվրոպական ձիւս-արմաաից և զուգահեռներ ունենալով հունարենում, գերսանական լեզուներում և այլուր, նշանակում են՝ ռավազաթումբ, հողաթումբ, թումբ, բարձունք, լեռ, ըլուր»<sup>5</sup>:

Դվին անվան ստուգաբանության ընդունելի վտրկածը պահպանում է Մ. Վ. Մինորսկուն<sup>6</sup>: Վերջինս Դվին բառը ավանդված է դանում Կասպից ծովի հարավարևելյան խիստ որոշակի շրջանի տեղանվանության մեջ: Այդ շրջանն այժմ պատկանում է Ասարաբազի նահանգին և Կամուպատասխանում է հին Հիրկանիայի (Վրկանաց աշխարհ) մի մասին: Այստեղ հայանի են Գիրա-դուվին (Gira—dovīn), Լալա-դուվին (Lala—dovīn), Սուլթան-դուվին (Sultān-dovīn), Կաֆիր-դուվին (Kāfir-dovīn), Սանգ-դուվին (Sāng-dovīn) տեղանուններով արհեստական բլուրներ: Հին ժամանակներում դրանք կազմել են ամրացված բնակավայրերի շարք՝ ընդդեմ հյուսիսային քոչվոր ցեղերի: Ըստ հայերենի հնչյունական օրենքների, Դուվինը (dovīn) իրանցիներից փոխանցված պետք է ապր Դվին (dvīn): Խորենացու մեթոհիշյալ հատվածը լիովին արգարացվում է. Դվին բառը համարվում է ներմուծված հայ Արշակունիների ժամանակ<sup>7</sup>, որպես կուլտուր-ախնիկական տերմին, ռերված նրանց նախնիների կողմից իրանց արևելյան հայրենիքից: Ավելին, հեղինակը վկայակոչում է Յաքուտի աշխարհագրական բառարանից Դավին (Davin) գյուղը, Դավին (= Դվին) քաղաքի նույնանունը, որ գտնվում էր Ուսաուվայում՝ ներկայումս Քուլան: Իսկ Ուստուվա ('Аусту҃҃҃҃), նահանգն, ընկած պարթևական թագավորության հյուսիսարևելյան ծայրամասում, Արշակունիների հարստության օրրան էր, քանի որ այստեղ էր նրանց հիմնա-

<sup>2</sup> Հյուսիսային Միջագետքում (Ջազոստոս 'ձի' արևմուտք), որտեղ Արշակունյաց ազգերությունը նույնպես ուժեղ է եղել, հատուկ են երկու տեղավայր ևս Դուվին բաղադրիչով Խալա-Դուին (Kal'a-Dovīn) և Ավի-Դուվին (Āwi-Dovīn):

կան սրբավայր Ասաակ (Aosax) քաղաքը\*, որտեղ պարթևական թագավորության անգրանիկ արքան՝ Արշակն առաջինն էր, որ արքա հռչակվեց, ուր և պահպանվում էր հավերժական կրակը<sup>7</sup>:

Ս. Ս. Երեմյանը անդրադարձած այս հոդվածին՝ Ասաակի կապակցությամբ՝ Ասուակը «Աշխարհացոյցում» Քուսաի Խորասան վարչական միավորի մեջ հիշատակվում է «Դվին-Աւազակ»<sup>8</sup> (պետք է լինի՝ Դվին-Ազաակ): Ս. Երեմյանը այս և Մ. Մինորսկու վերոհիշյալ կարծիքի, ինչպես նաև Ազաթանգեղոսի հաղորդած վկայության<sup>10</sup> հիման վրա ենթադրում է, որ Տըրդատ Առաջինը պարթև Արշակունիների առհմի ավանդույթի համաձայն, սրբազործել է իր գահակալութունը՝ Արտաշատի հյուսիսարևելյան արվարձանում հիմնելով Դվին-Ասաակ սրբավայրը՝ Տիր աստծուն նվիրված «Երազամունջ» նույնտղ տաճարով\*\*:

Սաացվում է, որ Դուին-Դվինը կուլտուր-տեխնիկական տերմին է, որ առնչվում է Արշակունիների գերիշխանության և իրանական կուլտուր-պատմական միջավայրին. ուստի պատահական չէ, որ պատմահայրը՝ Դվին անվանը փակցնում է «պարսիկների» պրակալը: Այս բոլորից ելնելով, Դվին անվան տակ պետք է հասկանալ նախ պաշտպանական համակարգ՝ բլուրամրոց, որ հայանի էր Հիրկանիայում, ապա նաև պաշտամունքային-կրոնական համալիր, որպիսին էր Ասաակը. ուր թագադրվել է Արշակունի առաջին թագավորը:

Դվինի մասին հալ պատմիչների վկայությունների քննությունները ընդհանուր են այն համոզման, որ Դվին և Բլուր հասկացությունները սերտորեն ազդեցված են եղել միմյանց. մի ռեպրում (Բուզանդ, Արծրունի)\*\*\* բլուրն անվանել են Դվին, մյուս դեպքում (Խորենացի, Բարձրբերդցի)\*\*\*\* Դվին և Բլուր հասկացությունները հանդես են գալիս իբրև բառային կամ սինվանական հոմանիշներ, մեկը՝ պարսկերեն, մյուսը՝ հայերեն և փոխարինում են իրար:

Ուշադրավ է, որ «Ասաակ» անունը ևս պահպանվել է հայ իրականության մեջ, ի գեմս հայոց հին տոմարի 17-րդ օրվա, որ կոչվել է «Ասաակ»<sup>11</sup>:

\* Վ. Տոմաշեկը Ասաակը նույնացնում է Քուսան վայրի հետ, որը գտնվում է Մելիտեից 148 կմ հյուսիս-արևմուտք՝ Գուրգան տանող աղեղնաձև ճանապարհի վրա: Գ. Հոֆմանը և Ն. Դիրվոլը նույն կարծիքն են հայտնում (Schippmann K. Die iranischen Feuerheiligtümer. Berlin-New York, 1971, S. 33):

\*\* Ս. Երեմյանը Դվինի կաթողիկեի նախկին շինությունը համարում է Ազաթանգեղոսի հիշատակած «Երազամունջ» կոչված տաճարը, որը հավաստի կովանների բացակայություն պատճառով չի ապացուցվում (Խաչատրյան Օ. Դ. Իրանահայկական դիցարանական ուղերսների հարցի շուրջ, ԼՂԳ, 1981, № 2, էջ 59—62):

\*\*\* Ըստ Քոմմա Արծրունու. «...յիննն քարամբք ղմծծ եկեղեցին զսուրբ Գրիգոր ի Բլուր անդվազն, ...»: «...հանդեպ քաղաքին Արտաշատու, որ Բլուրն նորուն ասի, յորում շահաստանն Դուինն, ...» (Թովմայի վարգապետի Արծրունույ Պատմութիւն ասանն Արծրունեսց, ՍՊԲ., 1887, էջ 28, 230):

\*\*\*\* Ըստ վարգան Բարձրբերդցու. «Իսկ մերն Խոսրով... շրնէ գԴուինն, որ ասի Բլուր...» (Մեծին վարդանայ Բարձրբերդցույ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 65):

Սա նույնպես առնչվել է Տրդատ Առաջինի գործունեության հետ<sup>12</sup>: Նշենք նաև, որ հայոց հին առատրի ամիսների օրանունների մի մասը կապվում է հեթանոսական աստվածների և՛ նրանց պաշտամունքի նշանավոր աեղավայրերի հետ:

Վերը հիշատակված տարբեր աղբյուրներում պահպանված տեղեկությունները մեզ բերում են այն հետևություն, որ ինչպես Հիրկանիայում, Դվին անվանական րաղադրիչով կազմված աեղավայրերը եղել են պաշտպանական համակարգի արհեստական ըլուրներ, իրենց կրոնապաշտամունքային համալիրներով, այնպես էլ Հայաստանի նոր տերերը՝ Արշակունիները, իրենց բուն Հայրենիքի՝ Պարթևստանի ավանդական օրինակով հնամենի ըլուր-տեղավայրը անվանել են կուլտուր-աեխնիկական նոր տերմինով՝ Դվին իբրև Արքադան ըլուր և գարձրել պաշտպանական ու պաշտամունքային կարևոր աեղավայր (հավանաբար, քրիստոնեության լայն տարածման, հասատման շրջանում արդեն նոր գավառանքի կենտրոն՝ հայոց կաթողիկոսների նստավայր դարձած Դվինը ընդմիջտ մոռացության է մատնել իր հեթանոսական պիտակը՝ «Ասաակ» անունը):

Պատմական այս հետևությունները տակավին հնագիտական ամուր հիմքեր չունեն, քանի որ դեռևս բացահայտված չեն մ.թ. առաջին դարերի հնագիտական շերտը, ինչպես նաև Դվին-Ասաակ սրբավայրի գլխավոր տաճարը: Այսուհանդերձ չի կարելի անտեսել Արտաշատ մայրաքաղաքի հյուսիս-արևելքում գտնվող Հայաստանում Դվին անունով միակ ըլրի և հայ իրականության մեջ պահպանված «Ասաակ» անվան գոյության փաստերը: Սրտնք բացահայտում են ոչ միայն Դվինի անտիկ ընկավայրի կյանքի ցարդ անհայտ մնացած կարևորագույն կողմերը, այլև բացում հայ-իրանական, մասնավորապես հայ-պարթևական, կուլտուր-պատմական առնչությունների ուսումնասիրության մի նոր և հետաքրքիր ասպարեղ:

Ի տարբերություն վերը հիշատակված մասնագետների, Դվինի հնագիտական գիտարշավախմբի ղեկավար (1946—1976 թթ.)՝ Կ. Դ. Ղաֆադարյանը իր մի շարք աշխատություններում ոչ միայն գրավոր աղբյուրների, այլև հնագիտական նյութի ընդգրկմամբ անդրադառնում է քննվող դարաշրջանի Դվինին: 1952 թ. լույս տեսավ Կ. Ղաֆադարյանի «Դվին քաղաքը և նրա պեղումները» գիրքը՝ 1937—1950 թթ. միջնադարյան Դվինի պեղումների արդյունքները ընդհանրացնող, դիտական սմփոփ մի աշխատություն, որը արժեքավոր ներդրում էր միջնադարյան հնագիտության մեջ ընդհանրապես: Հեղինակը այս աշխատության մեջ անդրադարձավ նաև Դվինի կյանքի ավելի վաղ շրջափուլերին և առաջին անգամ հայտնեց այն միտքը, որ անտիկ դարաշրջանում միջնաբերդում գոյություն է ունեցել բնակավայր, իսկ կենտրոնական թաղամասում՝ դամբարանադաշտ<sup>13</sup>: Այստեղ, ինչպես նաև հեղինակի՝ «Դվին քաղաքի հիմնադրման ժամանակի և միջնաբերդի հեթանոսական մեհյանի մասին» հոդվածում կենտրոնական տեղ է գրավում Դվինի վաղ քրիստոնեական դարաշրջանի հուշարձաններից՝ սր. Գր'գոր կաթողիկե եկեղեցուն հեթանոսական ծագում վերագրելու հարցը<sup>14</sup>: Դեռևս ճար-

տարապետ թ. Թորամանյանը, ինչիկ վարգապետ Դադյանի պեղումների շնորհիվ միայն ծանոթ լինելով Դվինի կաթողիկեին, ինչպես նաև հենվելով մատենագրական տվյալների վրա, ենթագրել է, որ եկեղեցին շինված է մեհյանի տեղում, նույն իսկ մեհյանի քարերով<sup>15</sup>։ Նման ենթագրությունը հիմնված էր ուշ շրջանի պատմիչների (Հովհաննես Դրասխանալիբրտցու, Թովմա Արծրունու և Վարդան Բարձրբերդցու) վկայությունների վրա, որոնք քաղված են մեղ անհայտ լուրերից, համարվում են ժամանակավրեպ և արտացոլում Սասանյանների V—VI դդ. կրոնական քաղաքականությունը՝ պայմանավորված Հայաստանում կրակապաշտական մեհյանների կառուցմամբ և դրանով իսկ ոչ մի անշուք շունեն նախկին հեթանոսական աս-ճարների հետ<sup>16</sup>։

Կ. Ղաֆաղարյանը ենթադրում է, որ եկեղեցու հնագույն մ.թ. IV դ. տրևելյան կիսաբոլոր արտիդը չի կապվում սյգրնական շինության հետ, և որ շենքն իր արևելյան կողմում ուղիղ պատ է ունեցել։ Բացի այդ, արտիդի քարերի վրա առկա են նտխաքրիստոնեական ընույթի որմնանկարները՝ հետքեր, որոնք միմյանց հետ չեն կապվում, քանի որ քարերը բերվել են ավելի հին շինության վրայից։ Քրիստոնեություն մուտքի ժամանակ քանդել են տաճարի արևելյան ուղիղ պատի կենտրոնական մասը և նրա տեղում կառուցել շենքի ընդհանուր քառանկյունի կազմությունից դուրս շեշաված անկյունավոր ավագ խորանը<sup>17</sup>։

Դվինի կաթողիկե եկեղեցուն հեթանոսական ծագում վերադրելու հարցը պատմամշակութային կարևոր մի պրոբլեմ է, որ առնչվում է ընդհանրապես անտիկ գարաշրջանի տաճարաշինության հետ։ Հայ մատենագրություն մեջ պահպանվել են կարևոր տեղեկություններ Հին Հայաստանում գոյություն ունեցող տաճարական շենքերի մասին։ Դրանց մի մասը ոչնչացվել է քրիստոնեության տարածման ժամանակ, և տաճարների արտաքին տեսքի մասին մնում է միայն կոահումներ անել։ Սակայն հեթանոսական մի շարք մեհյաններ վերածվեցին քրիստոնեական եկեղեցիների։ Փավստոս Բուղանդի վկայությամբ, հեթանոսական կառույցները սրբազործվում էին և անփոփոխ վերածվում քրիստոնեական պաշամունքի շենքերի<sup>18</sup>։ Քանզված որոշ հեթանոսական տաճարների տեղում էլ կանգնեցվել են քրիստոնեական պաշամունքի կառույցներ, ընդ որում, ինչպես երևում է Ձինոբ Գյակի կարևոր մի վկայությունից, քրիստոնեական եկեղեցու համար ընդունվել է հատակագծային ան հորինվածքը, որն ունեցել է հեթանոսական տաճարը, ընդերկայնական ուղղանկյուն հատակագծով<sup>19</sup>։ Նման իրողությունը թույլ է տալիս ենթադրելու, որ մի շարք վաղմիջնադարյան եկեղեցիներ ունեցել են հեթանոսական ծագում։ Սակայն վերջին տարիների հնագիտական, հատկապես շերտագրական տվյալները ժխտում են՝ Դվինի կաթողիկեն դասել նման վաղ քրիստոնեական եկեղեցիների շարքին։

«Դվին քաղաքի հիմնադրման ժամանակի և միջնաբերդի հեթանոսական մեհյանի մասին» հիշյալ հոդվածում Կ. Ղաֆաղարյանը փորձում է նաև մատենագրական վկայությունների հիման վրա արծարծել ընկալվայրի գոյու-

թիան հարցը Դվինում՝ նախքան միջնադարյան քաղաքի հիմնադրվելը<sup>20</sup>։ Հեղինակը ուշադրություն է հրավիրում հայ և օտար այն աղբյուրների վրա, ուր Դվինը հիշատակված է ավելի վաղ, քան խոսքով Կոտակի կողմից արքունիքի տեղափոխելը Արտաշատից Դվին, այսինքն՝ մինչև մ. թ. IV դ. 30-ական թվականները։ Հեղինակը այս առիթով վկայակոչում է «Ակրտու-թիւն Հայոց, Վրաց, Արխաղաց և Ալանաց ի սրրոյն Գրիգորէ» գրքի այն վկայությունը, որի համաձայն Դվինը հիշատակվում է IV դ. սկզբին։ Հայաստանում քրիստոնեությունն ասրածոյ Գրիգոր Լուսավորիչը առանձին եպիսկոպոսություն է հաստատում այստեղ՝ Դվինում<sup>21</sup>։ Ասորի պատմիչ Զենտր Գյուկը գրում է, որ քրիստոնեության մուտքի ժամանակ՝ Գրիգոր Լուսավորիչը Դվինի եպիսկոպոս է նշանակում ասորի Դիմառոսին<sup>22</sup>։ Ուխտանեսն պատմիչը ևս հիշատակում է Դվինը՝ հայոց սոաջին եպիսկոպոսների և Հոփփոսիմյանց կույսերի կապալցոթիւյամբ<sup>23</sup>։ Եվ, վերջապես հեղինակը վկայակոչում է նաև «Քարթլիս ցխովրեբան», ուր Դվինը IV դ. արգեն հիշատակվում է իրրև քաղաք<sup>24</sup>։ Կ. Ղաֆազարյանը փորձում է գիտական շրջանառության մեջ դնել դրավոր աղբյուրների վերահիշյալ տեղեկությունները, որոնք համարվելով ժամանակավրեպ, երբեք անհրաժեշտ արձագանք չեն ստացել։ Փաստորեն այս հոգվածում դարձյալ շոշափվում է մեր թվականության առաջին դարերում Դվինի դոյություն հարցը, որը, հատկապես, հնադիտական առումով, դեռևս ենթակա է լուրջ հետազոտության։

Ի սկզբանե առանձին ուսումնասիրության առարկա դարձավ 1925 թ. Դվինի տարածքից հայտնաբերված արձանների քարե գլուխների քննարկման և թվագրման հարցը։ Կ. Գ. Ղաֆազարյանը քննվող արձանների գլուխների հարդարանքները նմանեցնելով Արտաշիսյան հարստության թագավորների «հայկական թագին» համարել է աշխարհիկ իշխանավորների քանդակներ, դիաբելով գրանք՝ Հայաստանի անտիկ գարաշրջանի քանդակագործության սոսկ որպես ժողովրդական ոճի արտահայտություն<sup>25</sup>։ Գ. Ա. Տիրացյանը ընդունելով՝ մոխրագույն տուֆեց կերաված, բորձը կոնաձև թագ կրող գլխի քանդակի ցայտուն արտահայտված տեղական արձաններն ու բնույթը, այն նմանեցրել է Հայաստանի հեա քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային սերտ փոխհարաբերությունների մեջ գտնվող հարևան կոմմագենեի՝ Նեմրութ լեռան նշանավոր սրբավայրի աստվածների քանդակներին<sup>26</sup>։ Հ. Ա. Մարտիրոսյանը, ևս համակարծիք լինելով վերը հիշատակված մասնագետների հետ, դրանք վերագրեց անախկ դարաշրջանի ժողովրդական քանդակագործության դպրոցին, որի ակունքները գալիս են դեռևս առաջին հաղարամյակի սկզբից<sup>27</sup>։ Բ. Ն. Առաքելյանը Հայաստանի անախկ դարաշրջանի քանդակագործության ժողովրդական-ավանդաձև ուղղության ավելի մանրադնին ուսումնասիրության շնորհիվ՝ Դվինի քննվող քանդակների վերաբերյալ հանգեց այն նույն կարծիքին, որ դրանք կերտված են հին հայկական ժողովրդական քանդակագործության ոճով, վերջիններս ավելի որոշակի թվագրելով՝ մ.թ.ա. I-ին դ., թերևս՝ հին ու նոր թվականությունների սահմանագծով։ Բացի այդ, ընդունելով, որ դրանք աշխարհիկ մարդկանց

արձանների գլուխներ են, կա պեց թագավորների նախնիների պաշտամունքի հետ<sup>28</sup>,

Այս արձանների գլուխները ի հայտ են եկել Ներքին Դվրն գյուղի կուտնտեսությունից գաղտերի տարածքում, որտեղից հետագայում (1969, 1975 թթ.) հայտնաբերվեցին մ.թ.ա. I-ին հազարամյակի սկզբի դամբարաններ՝ երկու տասնյակի շահ մահարձաններով, որոնք կերտված են գրեթե նույն ոճով, ինչ Շամիրամի համաժամանակյա բնակավայրի դամբարանադաշտի քանդակագործական հուշարձանները<sup>29</sup>։ Այսուհանդերձ, հատկապես, ընդհանուր առմամբ թագ կրող արձանի գլուխը, ձևաբանական և գեղագիտական առումներով ավելի ավարտուն գործ է (տախտ. XXVIII, 1)։ Վերջինիս գլխի հարգարանքի նմանությունը Արտաշեսյան հարստության թագավորների «հայկական թագին», երկճյուղանի գնդիկավոր քունքի օղերի առկայությունը\*, պատկերագրական ընդհանուր առնչությունը Կոմմադենների նմանությամբ լեռան սրբավայրի քանդակներին, ինչպես և 1975 թ. նույն միջավայրում անտիկ դարաշրջանի մատնեքավոր սյան բնի գլուխը, վերջերս նաև Շիրակավանի<sup>30</sup> մ. թ. ա. I—մ.թ. I և մ.թ. III դդ. շերտերից հայտնաբերված նույն՝ արխտիկ ոճով կերտված գլուխները\*\*, իրավամբ, կարևոր կովաններ կարող են հանգիստնալ ապագա հնագիտական նոր փաստարկների և նյութական վկայությունների շնորհիվ քննվող հարցի վերջնական լուծման համար։

Դվրնում 1937—1938 թթ. պեղումների շնորհիվ ի հայտ եկած V—VII դդ. ճարտարապետական հուշարձանների համալիրները հատուկ ուսումնասիրության առարկա դարձան Վ. Մ. Հարությունյանի «Դվրնի 5—7-րդ դդ. ճարտարապետական հուշարձանները» մենագրական աշխատության մեջ<sup>31</sup>։ Այստեղ հիշատակվում են նաև սյան «առտիկական» խարիսխներ և մատնեքավոր գլանի բեկոր, որոնց առկայությունը հեղինակին խորհել է տալիս Դվրնում և նրա շրջակայքում անտիկ ճարտարապետական կառույցների գոյության մասին։

Դվրնի ամենամյա պեղումների շնորհիվ կուտակվել էր հնագետական առաջնություն և վերջինիս հետ կապված ծագել բաղմամբիվ խնդիրներ։ Հետևաբար, 60-ական թվականներից սկսած նկատվեց ընդգծված մի հակում ուսումնասիրության առարկա դարձնել ավելի նեղ հարցեր, հետազոտել նյութական մշակույթի այս նման այն որոշակի ոլորտ կամ հատուկ անգրագանալ հնավայրի կյանքի ավելի վաղ փուլերը։

Խ. Ա. Մուշեղյանի 1962 թ. հրատարակած «Դվրնի դրամական շրջանառությունը դրամագիտության տվյալներով» մենագրության մեջ մասնագիտական քննության են առնվում այսանդից հայտնաբերված՝ V—XIII դդ. պատկանող դրամագիտական նյութերը<sup>32</sup>։ Հեղինակը վերլուծելով միջնադարյան

\* Ճյուղավորված, գնդիկավոր, քունքի օղերը Հայաստանում և հարակից երկրներում երևան են գալիս ոչ վաղ, քան մ.թ.ա. VI—V դարերում։

\*\* Նման ոճի քարե գլուխներ հայտնաբերվել են Օշականի մ.թ.ա. 7—8-րդ դդ. պատկան համալիրում (Евзян С. А., Раскопки колонного зала в Ошакане. —АО 1979, XI. 1980, с. 424).

այս հսկայական նյութը, մի քանի խոսքով ներկայացնում է նաև քաղաքի տարածքից հայտնարեբրված հոռմեական կայսերական և Բոսփորի թագավորության գրամներ, դրանցից առաջինները կապելով Դվինի նախաքրիստոնեական ժամանակաշրջանի պամոնիայան հետ:

1982 թ. հրատարակված «Դվին քաղաքը և նրա պեղումները» աշխատության երկրորդ հատորում Կ. Ղաֆադարյանը՝ հետազոտության հիմնական առարկա գարձենելով միջնադարյան Դվինը, զուտ միայն հնագիտական դիտարկումների շնորհիվ, փորձում է վեր հանել և ըստ հայտել Դվին հնավայրի ամրոցական պատկերը ընդհանրապես՝ գիտական ասպարեզ բացելով անտիկ և ավելի հին ժամանակների նյութական մշակույթների հետագա ուսումնասիրության համար<sup>33</sup>:

Դվինի հնագիտական սրշավախմբի աւգամ, իսկ 1976 թ. նաև ղեկավար, Ա. Ա. Քալանթարյանը իր «Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ.» մենագրական աշխատության մեջ ընդհանուր միջնադարյան նյութից զատելով վաղմիջնագարյանը, բնութագրում է նշված ժամանակի նյութական մշակույթը իր բոլոր առանձնահատկություններով, վերհանում ժառանգական, օրգանական կապը նախորդ և հաջորդ ժամանակների մշակույթների միջև<sup>34</sup>: Հեղինակը իր աշխատության տողատակում անդրադառնում է նաև Դվինի նախորդ շրջանի պամոնիայան, մատնանշելով անտիկ դարաշրջանի բնակավայրի գոյությունը այստեղ: Նույն հեղինակը «Կենտրոնական թաղամասի պեղումները» իր երկրորդ մենագրական աշխատության մեջ, հուշարձանի շերտագրական գիտարկումների առիթով, անգրագառնում է վաղ երկաթի ժամանակաշրջանի հնագիտական շերտին՝ բնորոշ նյութերով և հիշատակում հելլենիստական գարաշրջանի նյութեր՝ պատահական հայտնարեբրված կենտրոնական թաղամասում, որտեղ չի բացառում նաև անտիկ շինությունների գոյությունը<sup>35</sup>:

Այսպիսով Դվինի պեղումները՝ լուսաբանելով միջնագարյան քաղաքի ընդամենի հարցեր, պարզաբանում են նաև նրա կյանքի վաղագույն փուլերը՝ ամրոցացնելով ընդամենը հնավայրի պատկերը:

Տարիների ընթացքում կուտակվել էին վաղագույն շրջանի նյութեր, որոնք վկայում էին կյանքի գոյությունը քննվող հուշարձանում սկսած դեռևս մ.թ.ա. III հաղարամյակից: Սակայն հատկապես 60-ական թվականներին, երբ հնավայրի որոշ հատվածներում՝ արդեն պեղված միջնագարյան շերտերի տակ բացահայտվում են հնագույն մշակութային շերտեր բնորոշ նյութական մնացորդներով, հարց է ծագում ձեռնամուխ լինել նաև սրանց ծրագրված, սխտեմատիկ ուսումնասիրությանը: Վերջինիս արգյունքը հնագիտացավ Կ. Ք. Քուշնարյուվայի «Դվինի հնագույն հուշարձանները» գիրքը, որը լույս տեսավ 1977 թ.<sup>36</sup>: Այս մենագրությունը նվիրված է Դվինի մ.թ.ա. I հաղարամյակի սկզբի նյութական մշակույթի ուսումնասիրությանը, որի շնորհիվ ուրվագծվում է քննվող ժամանակի ընկալվալը՝ որպես Արարատյան դաշտավայրի արհեստագործական և պաշտամունքային խոշորագույն կենտրոն՝ ուրարտական նվաճումների նախաշեմին: Ներկայացվում է Դվինի կյանքի մ.թ.ա. I հաղարամյակի սկզբի պատկերը իր բարե մոտումեն-

տալ ճարտարապետութեամբ, հարուստ և ինքնատիպ խեցեղինով, ուղիստանքային գործիքներ, զինք և բողմազան դարդեր արտադրող մետաղամշակման արհեստանոցով, պաշտամունքային յուրօրինակ համալիրով, որի պատկերադարձ կալե զոհարանների առջև կատարվել են կրոնածիսական արարողութիւններ, սերտորեն աղերսված ընկալութեան կյանքի և կենցաղի՝ էրկրագործութեան արգասսովորման, որսորդութեան և հատկապես մետաղամշակման հետ: Հեղինակը, Դվինի շերտագրական հարցերը շոշափելիս՝ արձանագրում է նաև հելլենիստական դունազարդ խեցեղենի հայտնաբերման փաստը՝ վազ և միջնադարյան հորիզոնների միջև նշմարվող, աղյուսանի բեկորներով հարուստ, հրդեհված շերտում:

Մասնագետներից ոմանք երբեմն անդրադարձել են նաև Դվինում հայտնաբերված անտիկ դարաշրջանի նյութական մշակույթին պատկանող առանձին նյութերի ուսումնասիրութեանը:

Այսպես, բաղմիցս հասուկ ուսումնասիրութեան առարկա գարձան Դվին րաղաքի տարածքից՝ վերին Արտաշատի կարասային թաղամիջ հայտնաբերված ապակե սրվակները<sup>37</sup>:

Դվինի հելլենիստական դարաշրջանի դամբարանադաշտում՝ կարասային թաղման մեջ հայտնաբերված քարե րաղմանիստ կնիքը մանրակրկիտ վերլուծութեան է ենթարկել Ժ. Դ. Խաչատրյանը «Հայաստանում հայտնաբերված բաղմանիստ կնիքները» հոգվածում<sup>38</sup>: Հեղինակը այդ կնիքը՝ պատրաստման աեխնիկայի, ձևի, սյուսեի և գեղարվեստական ոճի, ինչպես նաև համապատասխան աղերսների համաձայն կապում է հունա-պարսկական կնիքների հետ՝ թվագրելով մ.թ.ա. V դ. կեսով: Նա գրում է. որ. «... այս ժամանակագրութեանը շին հակասում նաև կնիքի հետ դտնված հնագիտական նյութերը»: Մեզ թվում է. որ նման եղրակացութեանը առարկելի է, քանի որ Դվինի դամբարանադաշտը պահանում է հելլենիստական՝ մ.թ.ա. II—մ.թ. I դարերին: Քննվող կարասային թաղման նյութերը, որոնք ամենայն մանրամասնութեամբ ուսումնասիրված և թվագրված են 1980 թ. հրատարակված մեր իսկ հոգվածում<sup>39</sup> բնորոշ են նշված՝ մ.թ.ա. II—մ.թ. I դարերին: կնիքների ուսումնասիրութեան րածնում փորձում ենք բերել հնագիտական լրացուցիչ կովաններ, որոնք մասամբ հնարավորութեան են ընձեռում բաղմանիստ կնիքների ընգունված՝ մ.թ.ա. V—I դդ. ընդգրկող ժամանակագրական շրջանակները սեղմել:

1981 թ. հրատարակվեց Ժ. Դ. Խաչատրյանի «Թրանա-հայկական գիցարանական աղերսների հարցի շուրջ» հոգվածը, որտեղ հեղինակը Հայաստանի անաիկ գարաշրջանի հուշարձաններում, գլխավորապես՝ Արտաշատում հայտնաբերված որոշակի տիպի կալե արձանիկների քննարկման առիթով, անդրագտնում է պաշտամունքային մի շարք կարևոր հարցերի այդիսկ կապակցութեամբ փորձում է վերաշարադրել նաև Դվինի անտիկ ընակավայրի ողջ պատմութեանը մի շարք գիտողութեաններով: Առկա հնագիտական նյութերը, ինչպես իրավացիորեն գտնում է հեղինակը, վկայում են, որ մ.թ.ա. VIII դ. հետ կյանքը հառնում է Դվինում մ.թ.ա. II դ.՝ նորստեղծ Արտաշատ մայրաքաղաքի հետ միասին: Ժ. Խաչատրյանի կողմից

կտրականապես ժխտվում են՝ Դվին-Ասաակ սրբավայրի գոյության, սբ. Գրիգոր կաթողիկէ եկեղեցուն հեթանոսական ծաղում վերագրելու հարցերը: Հեղինակը Դվինում հայտնաբերված որոշ նյութեր (ղոհասեղան, ծածկի սալ) համարում է բերված կամ Արտաշատից, կամ էլ Գառնիից<sup>10</sup>: Խուսափելով կրկնութուններից, քանի որ այս բոլոր հարցերը իրենց պատշաճ մակարդակի պատասխանն են դառնում համապատասխան դուրիսերում, նշենք միայն հետևյալը: Օձաքարից, տուֆրց, սպիտակ ավաղաքտրից վարպետորեն կերտված աաւրեր չափերի սյան խարխսխների, մատնեքավոր գլանի, սրբասաւ սաւրի օրեցօր համալրվող հավաքածուն, այժմ արդեն բլրի դադաթին հայտնարերված շինարարական համալիրը, սյունաղտրդ և կտնոնավոր սրահներով, հասարակական կամ պաշտամունքային ընույթի շինութունների երբեմնի գոյության նյութական վկայութուններն են: Ընդ որում ուսումնասիրութունը չի բացառում հիշյալ ճարտարապետական մանրամասների մի մասի պահպանելութունը մեր դարասկզբին, ուստի հեղինակի ընդգծված հակումը՝ քննվող իսկ հուշարձանի տարածքից հայտնարերված անտիկ նյութերը համարել բերված Գառնիից կամ Արտաշատից, փորձելով պարզունակ դարձնել մեր պատկերացումները անտիկ Դվինի պատմության որոշ ասպեկտների վերաբերյալ համողիչ չի թվում:

Ինչպես վերը տեսանք, Դվինի պեղումների և ուսումնասիրության պատմության ամբողջ ընթացքում այստեղից հայտնարերված անտիկ գարաշրջանի նյութերը թեև երբեք չեն անահսվել և միջնագարյան հուշարձանը հետադոտող շատ մասնագետներ անդրագարձել են դրանց, սակայն սոսկ միայն մասնակիորեն գլխավորապես՝ շերտագրական դիտողութունների կամ բաղմաշերտ հնավայրի ամբողջական պատկերը վեր հանելու նպատակով: հայանել են իրենց արժեքավոր ենթադրութուններն ու կարծիքները հուշարձանի կյանքի քննվող փուլի մասին կամ հրապարակել որոշ նյութեր առանձին առիթներով: Այսուհանդերձ հարկ է նշել, որ 70-ական թվականների պեղումների արգունքները պահանջեցին հանրագումարի բերել, սխասնավորել մինչե այդ ձեռք բերտծը, լրացնելով, ամբողջացնելով և ամփոփելով այն նորագույն պեղումների, գիտողութունների և ուսումնասիրությունների ավյալների հիման վրա: Այսինքն՝ Դվինի անտիկ դարտշրջանի նյութական մշակույթը ևս նպատակային ուսումնասիրության առանձին առարկա դարձնել, քննության առնել այն՝ Հայաստանի անտիկ ժամանակի նյութական մշակույթի ամբողջության մեջ՝ անկախ միջնագարյան կամ հնագույն Դվինին վերարերող իւրնդիրներից:

Դվինի բաղմակողմանի ուսումնասիրութունը՝ հավաքտելով հելլենիստական գարաշրջանի մի ամբողջական հուշարձան համալիրի դոյութունը, շարունակվում է: Այսպիսով, քննվող հնավայրի ուսումնասիրութունը հասել է մի մակարգակի, որը պարզաբանելով հին և միջնագարյան Դվինին առընչվող բաղմաթիվ հարցեր, հնարավորութուն է ընձեռում Հայաստանի պատմական դարգացման տարբեր դարաշրջանների սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի վերարերյալ կարեւորագույն ընդհանրացումների և եղրահանգումների:

I. ԴՎԻՆԻ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ  
ԵՎ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԸ

Հելլենիստական Հայաստանում ծավալված բուռն քաղաքաշինութեան ժամանակաշրջանում, մասնավորապես Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրման առնչութեամբ՝ վերջինիցս հյուսիս-արևելք, Արարատյան դաշտի բերրի հողերում, շրջակայքի նկատմամբ իշխող գիրք գրավող բլրի վրա ձևավորվում է անտիկ Դվինը (տախտ. I, 1): Նորաստեղծ ընկալվալորի տնտեսական և քաղաքական բարգաւաճմանը մեծապես նպաստում է նաև Արտաշատի և Գառնիի երկու արքայազան նստավայրերի հաղորդակցման հանգուցակետում և, հատկապես, միջադպային առևտրի կարևորագույն խաչմերուկում գտնվելու իրողութունը:

Քննվող անտիկ ընկալվալորը այսօր գտնվում է միջնագարյան Դվինի տվերակների տակ:

Միջնագարյան Հայաստանի մայրաքաղաք՝ վաըչակտն, տնտեսական և պատմամշակութային խոշորագույն կենտրոն Դվինի ավերակները գտնվում են ՀՀ տարածքում Արտաշատի շրջանում, Երևանից հարավ՝ 35 կմ հեռավորութեան վրա: Քաղաքի միջնաբերդը տեղագրված է բլրի վրա, որը 30 մ բարձրութեամբ և 4000 քառ.մ գտգաթի հարթութեան մակերեսով հատած կոն է հիշեցնում: Միջնաբերդին արևմուտքից հարել է քաղաքի այսպես կոչված կենտրոնական թաղամասը՝ կրոնական կենտրոնը եկեղեցական (սր. Գրիգոր կաթողիկե և միանավ եկեղեցիներ, V և VII դդ. կաթողիկոսական պալատներ) և աշխարհիկ շինութուններով: Բուն քաղաքային թաղամասերը ընդգրկել են ներկայիս Այգեստան Բերգիկ, Վերին Արտաշատ, Նորաշեն, Ներքին Դվին և Հնաբերդ գյուղերի աարածքը:

Հուշարձանի սիստեմատիկ հնագիտական աշխատանքները ընթացել և շարունակվում են գլխավորապես՝ միջնաբերդում և կենտրոնական թաղամասում:

Դվին քաղաքի ուսումնասիրութեան առաջին օրվն արվեց անցյալ գարի 90-ական թվականներին: 1899 թ., Պետերբուրգի Կայսերական հնագիտական հանձնաժողովի հանձնարարութեամբ, Ն. Յա. Մառը ձեռնարկեց հետախուղական պեղումներ այստեղ՝ Հին Հայաստանի մայրաքաղաքներ՝ Արտաշատի կամ Դվինի (այն ժամանակ գեոևս անհայտ) տվերակները ի հայտ բերելու նպատակով: Կարճատև պեղումների, ինչպես նաև շրջակայքի

րնակիչների ջանքերի շնորհիվ հավաքվեց հնագիտական իրերի և զրամների ժողովածու, հայնաբերվեցին միմյանց ազուցված ջրաաար կավ խողովակների մի հատված, թոնիրների, սուրկերկրյա զաղտնուղու հետքեր և աղն: Այս արդյունքները և ամբողջ անդանբը՝ մեծ բլուրը անկանոն ետանկյուն կաղմող բլրակներով շղթայված, ակնհայտորեն վկայում էին հին և հղոր ընակավարի ավերակների գոյությունն այստեղ: Սակայն այն ույժ կարևոր հարցը՝ Արտաշատի թե՞ Դվինի ավերակներն են, լուծվեց ավելի ուշ՝ 1907—1908 թթ. էջմիածնի միտրան՝ հաշիկ վարդապետ Դադյանի պեղումների շնորհիվ: Պեղումների ընթացքում հայնաբերվեցին սր. Գրիգոր կաթողիկե եկեղեցին՝ տիրամոր խճանկար պատկերի մնացորդներով, միանավ տաճարը, ճորտարապետական մնացորդներ և հնագիտական առարկաների ուշագրտվ մի հավաքածու:

Այսպիսով, նախախորհրդային շրջանում մասնակիորեն կատարված հնագիտական այս սշիւստանքները՝ թեպետ կարճատև, անպլանային և անկանոն էին, սակայն ուրվադժեցին և խթանեցին Հին Հայաստանի պատմամշակութային կարեորտղույն հուշարձաններից մեկի՝ միջնադարյան Դվինի հետադա գիտական ուսումնասիրությունը: Ուստի պատմահական յէ, որ Դվինը հանդիսացավ Խորհրդային Վայաստանի պատմական հուշարձանների սիստեմատիկ ուսումնասիրության առաջնեկներից մեկը: ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի պատմության ինստիտուտի գիտարշավախումբը 1937 թ. ձեռնամուխ եղավ Դվինի սիստեմատիկ պեղումներին: 1937—1939 թթ. պեղումները ղեկավարել է Ս. Վ. Տեր-Ավետիսյանը, 1946—1976 թթ.՝ Կ. Գ. Ղաֆուզարյանը, 1976 թ. առ այսօր՝ Ա. Ա. Քալանթարյանը:

Դվինը համարվել է նախ և ոտուջ միջնադարյան իռոչորագույն հուշարձան, ուստի պեղմել և ֆիքսացվել է ասրիներ շարունակ սոսկ որպես այդպիսին: Եվ միայն 60-ական թվականների երկրորդ կեսից սկսվեց վաղ մ.թ.ա. I հաղարամյակի սկզբի իսկ 70-ական թվականներից՝ անտիկ դարաշրջանի հնագիտական շերտերի կանոնավոր և նպատակային ուսումնասիրությունը:

Անտիկ դարաշրջանի Դվինի նախնական պաակերը վերհանելու և որոշ ընդհանրացումներ կատարելու համար անհրաժեշտ էր ի մի բերել՝ 1937 թ. ի վեր տարիների ընթացքում կուտակված նյութերը՝ շաղկապելով նոր ձեռքբերված տվյալների հետ: Այսպիսով, Դվինի հնագէտական արշավախմբի անդամների դաշտային օրագրերի<sup>4</sup>, որոշ հրապարտկումների, և հասկապես վերջին տարիների պեղումների և շերտագրական գիտողությունների շնորհիվ միայն սահղծվում է Դվինի անտիկ բնակավայրի, շարագրանքում ներկայացվող, հնագիտական պաակերը:

Քննվող շերտի ուսումնասիրությունը ընկանարար սկսվում է բլրից, որտեղ վերին մայարգտկից սկսված հաստատված է՝ միջնադարյան (IV—XIII դդ.), հելենիստական (մ.թ.ա. II—մ.թ. I դդ.), վաղ երկաթի (մ.թ.ա. I հաղարամյակի սկիզբ) և վերջուպես՝ վաղ բրոնզի (մ.թ.ա. III հաղարամյ.

յակ) դարաշրջանների հնագիտական շերտերի հիշյալ հերթագայությունը Գիտարկումները ցույց են տալիս, որ հելլենիստական դարաշրջանի շերտը, համատարած սփռված լինելով բլրի վրա, միշտ է՝ որ պահպանում է հիշյալ հաջորդականությունը՝ հանդես գալով յուրաքանչյուր հատվածում (ուրովի)։

Այսպես, կան արդեն պեղված հատվածներ (սրունց թիվը մեծ է)՝ որտեղ միջնադարյան՝ դրեթե հաղարամյա կյանքի տեղումնամբ հղոր շերտը շրջել և ասկնավրա է արել հելլենիստական դարաշրջանի՝ ներկայիս տվյալներով ընդամենը երկու հարյուրամյա հղորության շերտը։ Ավերիչ դեր են կատարել նաև բաղամտթիվ միջնադարյան հորեր, որոնց մեծագույն մասը կտրել անցել է տարբեր դարաշրջանների մշակութային շերտերը՝ հիմնովին տեղահանելով դրանք։ Ուստի հիշյալ հատվածներում՝ ցայտուն միջնադարյան նյութի հետ մեկտեղ, հայտնաբերվում են հելլենիստական՝ դունաղարդ և նույնիսկ վաղ երկաթի դարաշրջանի՝ սև փայլեցված խեցեղեն։

Հելլենիստական խեցեղեն հաճախ նաև երևան է դալիս րացառապես վաղ միջնադարյան կամ միայն՝ վաղ երկաթի դարաշրջանների նյութերի՝ Լուսիկերոհիշյալ երեսույթները դիտվում են հատկապես բլրի հարավարևմտյան հատվածում դտնվող՝ «չրտվաղան» կոչվող, քարե կտր շինության շրջակայքում և սրանից արևելք՝ հյուսիսից հաղավ ձգվող սի՝ շաքք քառակուսիներում (-h-5, -g-5, -f-5, -h-4, -g-4, -f-4), ինչպես նաև այլ՝ առանձին հատվածներում (-a-13, -c/d-3, -e-13/14, -c-1, -a-3, -e-12)։

Այսուհանդերձ բլրի մոտ առկա են հատվածներ, որտեղ պեղումների ընթացքում դիտվում է տարբեր դարաշրջանների հնագիտական շերտերի կանոնավոր հաջորդականության ամբողջ դինամիկան, սկսած՝ մ.թ. XIII դ.—մ.թ.ա. III հազարամյակը ներառյալ։ Նման արդյունքներ տվեցին 70-ական թվականներին բլրի հարավային կողմում՝ 1000 քառ.մ մակերեսով պեղավալրին կից նոր՝ —1+5, —1+6, —1+7, —1+8, —1+9, —1+10 քառակուսիների (յուրաքանչյուրը՝ 5×5 մ մակերեսով) պեղումները՝ կրկին անդամ պարզորոշ ընդգծելով՝ վաղ միջնադարյան և վաղ երկաթի դարաշրջանների միջև՝ մոխրառատ, այրված աղյուսներով և գունաղարդ խեցեղենով հաղեցած հելլենիստական շերտը։

Հելլենիստական շերտ՝ in situ. պահպանվել է նաև միջնաբերդի գաղաթում՝ «բակ» կոչված պեղավայրում, որանդ դեռևս 1948—1955 թթ. բացվել էր VIII դ. հում աղյուսե մեծ շինությունը<sup>5</sup> (աախա. II, 1)։ 1966—1967 թթ. այդ շփքը ընդարձակ րակը պեղելիս ի հայտ եկան վաղ միջնադարյան մոնումենտալ քարե շինությունը պատկանող հիմնապատեր, ժամանակին բնորոշ խարխախներ և V—VI դդ. նյութեր՝ խեցեղեն, կղմինդրներ, ապակյա անոթներ, դարդեր և այլն։ Այստեղ՝ 50 քառ.մ մակերեսով մի հատված (—b—11, —b—12 քառ.) հեռացնելիս, անմիջապես վաղ միջնադարյան հատակի տակ՝ 0,2 մ խորությունից հայտնաբերվեցին բայառապես հելլենիստական ժամանակաշրջանի նյութեր՝ խոշոր գունաղարդ ապիաշշի կանթավոր բեկոր, օլնոխոլայի վերնամաս, ձիթածրագ,

թաս-քրեղաններ և բազմաթիվ դուրսագարդ խեցեղենի այլ բեկորներ, լույն-խակ՝ դուրդի անիվի ստորին մաս, դետաքարից պատրաստված սրաքարեր և վերջապես, խոշոր և մանր եղջերավոր անասունների ոսկորներ: 1982 թ. նույն տեղանքում շերտազրական նպատակով կատարված պեղումները արդեն 250 քառ.մ ընդարձակ մակերեսով բացահայտեցին հելլենիստական շերտի առկայությունը, որը հստակ սահմանադրամաս էր վազ միջնադարյան և մ.թ.ա. I հազարամյակի սկզբի շերտերի միջև: Հրվահված և որոշ տեղերում նույնիսկ մոխրաշերտի վերածված այս շերտը պարունակում էր կրակից թրծված աղյուսների կտորտանք և դուրսագարդ ու հասարակ խեցանոթների բազմաթիվ բեկորներ: որոնք հիմնականում կրկնում էին արդեն վերը հիշատակված խեցեղենի ձևերը:

Այսուհանդերձ հելլենիստական շերտի շրջափակումը և ընդլայնված բացահայտվեցին միայն 1982—1985 թթ. ընթացքում միջնաբերդի դադաթի արևելյան մասում կատարված հնադիտական աշխատանքների շնորհիվ: Այստեղ, հիջյալ տարիների ընթացքում, վաղ միջնադարյան՝ IV—V դդ. մեծ բազիլիկ և V—VI դդ. սյունադարձ կառույցների միջև ընկած հայտնարիքվել է հելլենիստական դարաշրջանին պատկանող շինարարական համալիրի՝ 300 քառ.մ ասրածք դրավող, մի ընդարձակ հատված: Պարզվել է, որ վերջինս ներկայացնում է ուսումնասիրվող շինությունից սոսկ ծայր հյուսիստեղծարարական հասվածք: Մինչդեռ համալիրը հիմնականում տարածվում է դեպի հարավ, բլրի կենտրոնական մասը, որտեղ բազիլիկ սրահի ներկայիս գոյությունը, բնականաբար, թույլ չի տալիս պեղելու և տմրոզացնելու քննվող շինությունը:

Համալիրի դրեթե կենտրոնական մասում ուղղաձիգում է բավական հզոր քարե պատերով (1,0—1,15 մ լայն., 0,60—1,0 մ բարձր.) կազմված, հյուսիսից հարավ ձգվող դահլիճը (տախտ. IV, 1), որի պահպանված հատվածի (7,0×8,0 մ) ստորին հասակի վրա, իրենից նախնական տեղում, հայտնարիքվեցին սպիտակ ավաղաքարից կերտված ղույզ տորածե խարիսխներ (դտնվում են յուրաքանչյուր պատից՝ 2,25, իսկ միմյանցից՝ 3 մ հեռավորությամբ վրա): Սյունադարձ դահլիճին անմիջապես դիմադրող արևելյան կողմում, վերականգնվեց նույնպիսի քարե պատերով (1,0 մ լայն., 0,80—0,90 մ բարձր.) կազմված ևս մեկ կանոնավոր սրահ (մոտավորապես՝ 5,30×4,5 մ մակերեսով): Վերջինիս, ինչպես և սյունադարձ դահլիճի հիմնական մասը՝ ձգվելով դեպի հարավ, շարունակվում էր բազիլիկ սրահի տակ (տախտ. V): Համալիրի պահպանված մասի արևելյան թևի հնադիտական ուսումնասիրությունը և ստուգողական ընթացքի պեղումները բազիլիկ սրահի առանձին հասվածներում բացահայտեցին, որ միջնաբերդի նոր կառուցապատման նպատակով Դվինի 12—13-րդ դդ. ընտելիչները՝ ներթափանցելով մշակութային ստորին շերտերը, հսկայական կորուստ են պատճառել ոչ միայն վտղ միջնադարյան, այլ նաև ոչնչացրել անտիկ դարաշրջանի շերտը, որի երբեմնի դոյուսյան մասին են վկայում սոսկ հիմնապատերի մնացորդների և ժամանակին հատկանշական խեցեղենի հայտնարիքումները:

Համալիրի արևմտյան թևում հայտնաբերված միջնորմների մնացորդները՝ կառուցողական անասնկյուծից, վկայում են սյունադուրգ դահլիճին կից՝ արևմտյան սենյակների երբեմնի գոյութունը (տախա. IV, 2): Ուսումնասիրության ենթարկվեց նաև համալիրի հյուսիսարևմտյան ընդարձակ հատվածը, որտեղ դեռևս 60-ական թվականներին բացահայտվել էր անսիւ դարաշրջանի շերտը՝ շինարարական մնացորդներով՝ սպիտակ ավազաքարից կերտված զույգ ստորածև խարիսխների առկայությամբ (տախա. VII, 1—4): Այստեղ հայտնաբերվեցին կավակերտ վերնամասերի հետքերով քտրե իմնապատեր, որոնք հասվելով և կազմելով առանձին ըջիջներ առնչվում են ընդհանուր համալիրին: Պարզվում է, որ այս հիմնապատերը կառուցված են ուղղակի նախորդ (մ.թ.ա. I հազարամյակի սկզբի) մշակութային շերտին պատկանող քարե շինվածքների վրա:

Այսպիսով համալիրի պեղումների շնորհիվ փաստարկվում են կարևորագույն շերտագրական անցումներ. վաղ միջնադարյանից՝ անտիկ և վերջինիցս՝ մ.թ.ա. I հազարամյակի սկզբի շերտերի (տախա. VI):

Քննվող շինությունը թեև չէր ամրոցանում, այսուհանդերձ առանձին հատվածների հստակ հստակագծային պատկերների շնորհիվ բացահայտվում է. որ սյունադարձ դահլիճը կազմել է համալիրի կենտրոնական մասը, որին անմիջապես կից արեելյան և արևմտյան թևերում հարել են այլ սենյակներ (տախա. III):

Համալիրի կառուցման ժամանակ կիրառվել է հետևյալ շինարարական տեխնիկա: Պատերը շարված են խառը և անկանոն, հիմնականում միջին շափերի ( $0,18 \times 0,26 - 0,15 \times 0,27$  մ), մոխրագույն և անտաշ, միմյանց կավե շաղախով շաղկապված դետաքարերի հորիզոնական շարքերից: Առանձնակի ուշադրության է արժանի սյունազարդ դահլիճի արևմտյան պատի հյուսիսային ծայրում, քարե շաղվածքի մեջ՝ կրկնակի օգտագործված սպիտակ ավազաքարե սրբատաշ սալը (շափերն են՝  $0,57 \times 0,9 \times 0,22$  մ), որը նյութով և մշակումով աղերսվում է նույն տարածքից հայտնաբերված ևս երեք նման սրբատաշ սալերին (շափերն են՝  $0,50 \times 0,54 \times 0,26 - 0,51 \times 0,31 \times 0,26 - 0,50 \times 0,35 \times 0,22$  մ): Միջնորմների քարե հիմնախարիսխները օժտված են եղել հում աղյուսե վերնամասերով: Բացված հատակները կավակերտ են, խնամքով ծեփված և կոկված:

Շինությունը, հավանաբար, ընդգրկել է ժամանակագրական ընդհանուր շրջանակներ (շուրջ 200 տարի), քանի որ իր գոյության ընթացքում վերանառուցվել և կրել է մի շարք փոփոխություններ, որոնք ակնհայտորեն նկատվում են տարրեր մակարդակների՝ թվով երեք կավակերտ հատակների առկայության և պատերի վերանորոգումների շնորհիվ: Իսկ երկրորդ հատակի վրա առաջացած ավերված և հրդեհված շերտը՝ կազմված մոխրաշերտի վերածված վեղի՝ երրորդ կավակերտ հատակից, բանդված պատերի հում աղյուսների կտորտանքից (հաճախ հրդեհից թրծված) և ուղղակի շարդուփշուր արված խեցանոթների բազմաթիվ բեկորներից. վերջապես, երես-

նիվայր ընկած գանգի առկայութիւնը անմիջապէս սյունաղարդ գահիճի հաաակի վրա վկայում են, որ ուսումնասիրվող համալիրը վերջնականապէս դազարել է գոյութիւն ունենալուց ինչ-որ հարձակման՝ մեծ ավերման և հըր-գեհի հետեանքով:

Շինարարական համալիրը ներկայացնող 1,5 մ հղորութիւնը հնագի-տական մշակութային շերտը հագեցված էր Արմավիրի, Արտաշատի, Գառնիի, Դվինի մ.թ.ա. II—I գդ. համանման՝ գունաղարդման բազմապիսի տարբե-րակներով առատ, խեցանոթների ընկերներով: Հեաաքրքիր է նրբախեցի սըր վտկը (բեկոր) ներմուծված փոքրասիական հելլենիսական տարածքից:

Այսպիսով, ներկայացված համալիրը՝ կանոնավոր սրահների հստակ հատակագծով, տորածև իարիսիոների, ընորոշ շինարարական աեինիկայի և հարուստ գունաղարդ խեցեղենի առկայութիւնը հավաստում է հելլենիս-ական գարաշըջանում, բլըրի գագաթի հյուսիսարեելյտն մասում ինչ-որ կարևոր, հավանաբար, հասարակական բնութի շինութիւն գոյութիւն մա-սին:

Դվինի շրջակա տարածքում քարհանքերի բացակայութիւն պաաճառով կավը ծառայում էր որպէս շինարարական հիմնական նյութ: Քարը օգ-տագործվել է միայն հիմնապատերի և մոնումենտալ շինութիւնների համար: Ուստի միջնագարում և հետագայում նույնպէս նախորդ գարաշըջանների կա-ռույցները քանգել և գրանց քարերը կրկնակի օգտագործել են: Մինչև օրս էլ հայտնաբերվում են անտիկ ժամանակի քարե ճարտարապետական բաղ-մաթիվ մանրամասներ քաղաքի ամրող տարածքից և նույնիսկ մերձակա գյուղերից: Հիշյալ հանգամտնքը հասցրել է կործանիչ հարված հնագույն քա-րե կառույցներին: Բացի այդ, Դվինի միջնարեերդի հելլենիստական շերտը բնութագրվում է մոխրաշեըտով և այրված աղյուսների բազմաթիվ կտոր-տանքով, որն իր հերթին հում աղյուսե շինութիւնների գոյութիւն վկայու-թիւնն է քննվող գարաշըջանում: Դրանք հիմնահատակ քանգվել և քայքայ-վել են բնակավայրը ավերողների և հրգեհողների, իսկ հետագայում նաև միջ-նագարյան երկարամյա քաղաքի բնակիչների կողմից:

Կյանքի երկտրտուե հարատեութիւնը բլըրի վրա, այսինքն՝ տարրեր դարաշըջանները՝ մ.թ.ա. I հաղարամյակի սկղրի, հելլենիստական, այնու-հետև միջնագարյտն բնակավայրերի հաջորգումը միմյանց, ընականարար ստեղծում են ժառանգականութիւն կապերի բաղմաթիվ գրսևորումներ, որոնք նախ երևան են գալիո բլըրի կտորուցապատման ընթացքում: Այս կարգի ժա-ռանգական կապերը ակնհայտ են՝ ուրարտական և անտիկ քաղաքների մի-ջև, ինչպէս, օրինակ՝ Տուշայու-Վան, Արգիշտիիսինիլի-Արմավիր, էրեթունի-Նրեան, իսկ Շամիրամի անտիկ ընակավայրում, որն առաջացել է վաղ եր-կաթեղարյան քաղաքատեղիում՝ օգտագործվել է նախկին պաշտպանական համակարգը, իհարկե որաշակի փոփոխութիւններով՝ և այլն: Բացառված չէ, որ Դվինում ևս հելլենիստական կառույցների հատանագծային ցանցը կաղ-մելիս, որպէս ելակետ, մասամբ նաև ոգտագործված լինեն նախորդ տվյալ

դեպքում մ.թ.ա. I հազարամյակի սկզբի քարե հիմնապատերը՝ Չի բացառվում կառուցողական նման սկզբունքների կիրառում սյստեղ՝ նաև անտիկ և վաղ միջնադարյան ժամանակաշրջանում, հակապես, որ Դվինում հիշյալ կապերն ու երևույթները արձանագրվում են անգամ միջնադարում՝ շինարարական տարբեր փուլերի միջև:

1949 թ. բլրի հյուսիսարևմտյան մասում, ստորին շերտերը պեղելիս՝ 8—10 մ խորության մեջ հայտնաբերվել են փայտե սյան երկու տորածև խարիսի, մրսյանցից 1,90 մ հեռավորության վրա՝ շրջափակված քարե հիմնապատերով (տախտ. IX, 1): Պահպանված է եղել նաև ժամանակադրոյեն հաջորդող կառույցի քարե հիմնապատը, որը ձգվելով դեպի խարիսիներից մեկը գրեթե ծածկել է այն: Խարիսիները գտնվել են համատարած մոխրաշերտում (պեղավայրի կտրվածքի վրա նկատվել են մեծ հրդեհի հետքեր), սրանց շրջակայքից հայտնաբերվել են սև և կարմիր խեցեղենի աննշան բեկորներ, իսկ միջնադարյան նյութերը իսպառ բացակայել են այստեղ: Նման սյան տորածև խարիսիների հետաքրքիր մի տարրերակ են ներկայացնում վերը հիշատակված՝ դեռևս 60-ական թվականներին հելլենիստական շերտում հայտնաբերված, սպիտակ ավազաքարից պատրաստված գույգ խարիսիները (տախտ. VII, 1—4): Յուրաքանչյուրը կաղմված է միմյանց վրա գրված երկուական տորուսից, որոնցից ստորինը՝ մեծ է, իսկ վերինը՝ համեմատաբար փոքր և երկուսն էլ ընդգծված անցումներով հենված հն քտանկյուն սալաքարի վրա: Խարիսիներից յուրաքանչյուրը վերին մակերեսի վրա ունի մեկական դարակ: Սյան տորածև խարիսիներ հայտնաբերվել են նաև կենտրոնական: Թողամասում և շրջակայքում, երբեմն էլ միջնադարյան պատերի շարվածքի մեջ<sup>9</sup> (տախտ. VII, 5—6, տախտ. VIII, 3, 5, 6, տախտ. IX, 2—6):

Այս խարիսիների ժամանակադրության և կուլտուր-պատմական պատկանելության հարցը արժանի է հատուկ ուշադրության:

Դվինից հայտնաբերված սյան տորածև խարիսիները պատրաստված են տեղական սպիտակ ավազաքարից, բացի VII դ. կաթողիկոսական պալատի սյունազարդ դահլիճի ոձաքարե միակ նմուշից (տախտ. VIII, 5): Խարիսիների տորուսները՝ հենված հարթ, հաճախ էլ երկաստիճան քառանկյուն սալի վրա, վերին մակերեսին ունեն մի նեղ դարակ: Նման խարիսիներ, սակայն տեղական մանրահատիկ կրաքարից, բավական մեծ թվով հայտնաբերվում են Հին Հայաստանի մայրաքաղաք Արտաշատից: Սրանց տորուսը

<sup>9</sup> Այս առումով արժեքավոր են Կ. Քուչնարյովայի դիտողությունները, որոնք համաձայն անտիկ և մ.թ.ա. I հազարամյակի սկզբի կառույցների պատերի ուղղութիւնները որպես կունոն համընկնում են միմյանց հետ, քանի որ անտիկ շինությունների համար նազույն պատերի հում աղյուսե վերնամասերը քանդու, վերացրել են և սրանց քարե հիմքերի վրա գրել նոր հիմքեր: Վերջիններս իրենց տեղադրութամբ երբեմն աստիճան են կազմում հին հիմքերի հետ, որի հետեանքով նոր կառույցը փաստորեն հանդես է գալիս կրկնակի քարե հիմքով (տախտ. II, 2) (Кушварева Կ. Х. Древнейшие памятники Двина, Ереван, 1977. с. 17):

վերին մակերեսի վրա ունի մի նեղ դարակ և հենվում է հարթ կամ երկաստիճան, քառանկյուն սալի վրա: 1967 թ. Փոքր Վեդի գյուղի հարավարևելյան ծայրամասում, րացի լատիներեն արձանագրություններից, մ.թ. I—III դդ. խեցեղենի հետ միասին դանվել են նաև համանման խարիսխներ<sup>10</sup>: Տորաձև խարիսի է հայտնաբերվել Մոխրաբլրի անտիկ ժամանակաշրջանի շերտից<sup>11</sup>: Այդօրինակ խարիսխներ ի հայտ են եկել նաև Շիրակավանի և Ավանի պեղումներից<sup>12</sup>:

Խարսխի այս ձևը, սկսած մ.թ.ա. II դ. լայն ասրածում է դտել Ադրբեջանական ԽՍՀ ասրածքում (Կապաղակ, Շեմախա, Թաղաքենդ, Աղղամ, Շամխուր, Ֆիղուլի)<sup>13</sup>: Միայն Կապաղակի խարիսխները, որոնք թվագրվում են մ.թ.ա. I դ. երկրորդ կեսով և մ.թ. I դարով, տարբերվում են վերոհիշյալներից՝ տորուսի կենտրոնում փայտյա սյուն ամրացնելու նպատակով արված փորվածքի առկայությամբ: Ընդամենը նույն նպատակով են կիրառվել Արմազցի-խե 1-ին սյունաղարդ դահլիճի աորաձև խարիսխների փոսիկավոր վզիկները<sup>14</sup>:

Ուշագրավ են նաև հարևան Կոմմադենների, Նյումփայոս դետի վրա տեղադրված Արսամեա քաղաքի նմանօրինակ խարիսխները, որոնք թվագրվում են մ.թ.ա. I դարով<sup>15</sup>:

Տորաձև խարիսխները բնորոշ են մ.թ.ա. III—I դդ.՝ Պարթևսաանի (Հաթրա, Նիսա) և Բակտրիայի (Ալթամ, Խաթին-Մաբաթ, Հին Թերմեզ, Խալլա-յան, Ուշտումբուլան, Կորադիան) ճարտարապետությանը<sup>16</sup>:

Աքեմենյան ճարտարապետությունը ևս ներկայացնում է ուսումնասիրվող ձևի խարիսխների բաղաձայն օրինակներ<sup>17</sup>:

Արևելյան օրդերի հիմքը կաղմող այս աորաձև խարիսխները, որոնք ծաղման ակունքները բացահայտ ասիական են, դալիս են սկսած մ.թ.ա. II հաղարամյակի երկրորդ կեսից, հելլենիսական ժամանակաշրջանում դրավելով հիշյալ հսկայական ոեդիոնը, հարատևում են Հայաստանում հաև վսղ միջնադարում: Դրանք վերամշակվում և ստանում են արտաքին նոր հարդարում՝ օժտվելով ներքնասալի վրա շորս եռանկյունաձև ելուստներով<sup>18</sup>: Այդպիսիները հայանի են Դվինում, Զվարթնոցում և Նղվարդում<sup>19</sup>:

Դվինի միջնաբերդի վերոհիշյալ հատվածներում անտիկ դարաշրջանի ճարտարապետությունից մնացել են սոսկ արձանաքներ՝ շինարարական մնացորդների և ճարտարապետական մանրամասների ձևով: Այստեղանդերձ մի բան պարզ է, որ ըլուրը՝ անտիկ դարաշրջանում կառուցուպատված է եղել քարե հիմնապատեր ունեցող հում ողյուսե, անդամ քարե վերնամասեր ունեցող սյունաղարդ շինություններով:

Դվինի անտիկ դարաշրջանի բնակավայրի պատկերը չուսարանելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև կենարոնական թաղամասի ուսումնասիրության արդյունքներին:

1937 թ. ի վեր կենտրոնական թաղամասում հայտնաբերվել էին կարասալին թաղումներ, ճարտարապետական մանրամասներ, գունազարգ խեցեղենի բեկորներ: 1973 թ. այստեղ մեր կողմից սկսվեցին հետախուզական պեղումներ՝ անտիկ դարաշրջանի շերտ հայտնաբերելու և ուսումնասիրելու նպատակով:

Առաջին աշխատանքները կենտրոնացվեցին VII դ. կաթողիկոսական պալատի ներսում՝ հարավարևելյան անկյունում № 2 (2,5×2,5 մ մակերեսով) և դրսում՝ վերջինիս և միանավ եկեղեցու միջև՝ № 1 (3×3 մ մակերեսով) ըջիջներում: Եվ, քանի որ 50-ական թվականներին միանավ բազիլիկ եկեղեցու շրջակայքից հայտնաբերվել էին հելլենիստական ժամանակի կարասալին թաղումներ, նման սպասելիք կար նաև այս անգամ: Առաջին իսկ արդյունքները գոհացուցիչ էին, ուստի դրսում պեղվող ըջիջն աստիճանարար ընդարձակվեց և 1973 թ. ամռան ընթացքում՝ կաթողիկոսական պալատի և միանավ եկեղեցու միջև՝ հարավից հյուսիս պեղվեց՝ 12×3 մ մակերեսով մի հատված, որի շնորհիվ ստեղծվեց շերտագրական հետևյալ հստակ պատկերը: Միջնադարյան նախնին հզոր շերտից պահպանվել էր միայն VII դարի 0,2—0,5 մ թույլ հղորության մի շերտ, որի հենց վերին մակարդակից սկսվեցին պեղումները: Առաջին նյութերը, բնականաբար, միջնադարյան կիսակլոր և տափակ կզմինդրների, երբեմն նաև IX դ. ջնարակած հատուկենտ խեցեղենի բեկորներ էին: Սրանց հաջորդեց լափաղանց ամուր՝ դժվարությամբ քանդվող 0,35—0,40 մ հաստությամբ սպիտակ խճե հարթակ:

Ա. Ա. Քալանթարյանը տարիներ շարունակ կենտրոնական թաղամասի հնագիտական մանրագին ուսումնասիրության շնորհիվ հիշյալ հարթակը իրավամբ համարում է եղանավ բազիլիկ տաճարի քարաշեն շինության ժամանակ (IV դ. մեղջե V դ. սկիզբ), սպիտակ ավաղսեքարի տաշվածքներից առաջացած շինարարական հրապարակ (տախտ. X, 1): Ի դեպ կենտրոնական թաղամասում՝ կաթողիկե եկեղեցուց հարավ և հարավ-արևմուտք դիտվել է ևս մեկ նման շինարարական հրապարակ՝ միայն տուֆե տաշվածքների մնացորդներից: Շինարարական այս երկրորդ հրապարակը առաջացել է արդեն VII դ. սկզբում, երբ եկեղեցին հիմնովին վերակառուցվել է նոր հատակադժով և նախկին ավաղաքարի փոխարեն նոր շինանյութով՝ տուֆ քարով<sup>20</sup>:

Այսպիսով, կենտրոնական թաղամասի թե՛ IV—V դդ., և թե՛ VII դ. իճե հարթակները ժամանակագրական և շերտագրական լավագույն ուղեցույցներն են: Եվ իրոք, պեղվող հասվածում՝ IV—V դդ. խճե շերտի՝ վաղ միջնադարյան նյութական մշակույթի այս սահմանագծի տակ երևան եկավ ժամանակագրորեն հաջորդ՝ 0,5—0,6 մ հղորությամբ հելլենիստական հորիզոնը, հաղեցած բաղմաթիվ և բազմատեսակ, հասարակ և գունազարգ խեցեղենով: Իսկ 0,9—0,1 մ խորությունից սկսեցին հայտնվել արդեն մ.թ.ա. I հազարամյակի սկզբի քարե ճարտարապետություն, բնորոշ սե խեցեղեն և նույնիսկ քավե պատկերազարդ զոհարան<sup>21</sup> in situ: Այսպիսով 1973 թ. պեղված հատվածը հանդիսացավ կենտրոնական թաղամասում անտիկ դարաշրջանի շերտ հայտնաբերելու և ուսումնասիրելու առաջին և դրական փորձը:

1973 և 1974 թթ. պեղումների ընթացքում վերը հիշատակված հատվածը ընդարձակվեց դեպի հյուսիս: Հելլենիստական շերտը այստեղ ևս ներկայացվեց նույն հաջորդականությամբ, ուստի փոփոխություն չկատարվեց արդեն ընդունված շերտադրական պատկերի մեջ: Քննվող շերտը ներկայացվեց, հաակապես հարուստ դունաղարդ խեցեղենով՝ դոտեզարդ տափաշշերի, երեքնուկաձև ծորակով անթոսների, թաս-քրեղանների, ըմպանակների, հաստապատ կոնքերի շրթնամասերի բեկորներով և, վերապես, ամենակարևոր դյուտն էր տուֆից պատրաստված դուրդի անիվի ստորին մասը:

1978 թ. պեղվեց  $19,5 \times 5$  մ մակերեսով մի հատված՝ միանավ եկեղեցուց հարավ և դրան ղուգահեռ: Քանի որ այստեղ արդեն բացակայում էր սահմանադիտ հանդիսացող խճե շերտը, ուստի ստացվեց հետևյալ շերտադրական պատկերը. վերին մակարդակից՝ VII, երբեմն նաև IX դդ. նյութերի հետ սկսվեց երևան գալ նաև հելլենիստական խեցեղեն: Սակայն վերին մակերեսի այս խառը շերտը աստիճանաբար դրվեց անտիկ նյութերի բացահայտ դերակշռությամբ և շուտով ընդհուպ՝  $0,5-0,7$  մ խորությունից սկսեցին հայտնաբերվել բացառապես հելլենիստական նյութեր: Որպես սնտիկ դարաշրջանի կառույցի գոյություն վկայություն, պեղվող հատվածում ի հայտ եկավ հյուսիսից դեպի հարավ ձգվող քարե հիմնապատի մնացորդ: Ուշադրավ էր նաև պեղավայրի արևմտյան մասում, անմիջապես հելլենիստական շերտում հայտնաբերված կարասային թաղումը: Հելլենիստական շերտի տակ, ինչպես և սպասվում էր, ուրվագծվեցին մ.թ.ա. I հազարամյակի սկզբի քարե հիմնապատեր, բնորոշ սև խեցեղեն:

1979 թ. նախորդ տարվա պեղավայրին կից, դեպի հարավ, պեղվեց ևս մեկ հատված՝  $3,5 \times 8,5$  մ մակերեսով, որանց և կրկնվեց կենարոնական իրադամասին բնորոշ շերտադրությունը: Միևնույն ժամանակ ուսումնասիրվեց կաթողիկե եկեղեցու հին աբսիդից հարավ՝ վերջինիս ղուգահեռ, արևիկից արևմուտք ուղղությամբ՝  $6,7 \times 4,7$  մ մակերեսով մի հատված, որը 1980 թ. ընդարձակվեց դեպի արևմուտք՝  $4,5 \times 7$  և  $5 \times 4$  մ, իսկ 1981 թ. պեղումների ընթացքում՝  $5 \times 5,5$  մ մակերեսով: Իրդեն դիտված շերտադրությունը ստույգ և հստակ կրկնվեց այս նոր պեղավայրում ես: նվ քանի որ պեղվող հատվածը կից էր կաթողիկե եկեղեցուն, ուստի այստեղ VII դ. նյութանան մշակույթի հորիզոնից ներքե բացվեց բավական հզոր՝  $0,5-0,6$  մ հաստությամբ, դժվարամաշելի, ամուր խճե հարթակ, ի տարբերություն վերը հիշատակված հատվածների ավելի թույլ հղորության խճե շերտերի ( $0,2-0,4$  մ): Այս միջավայրից հայտնաբերվեցին V—VII դդ. բնորոշ ապուկե անոթների բեկորներ և տանիքի ծածկի բաղաձայնի վաղ կղմինդրներ, որոնց տափուկ օրինակները ձևաբանորեն հարում են ոչ միայն VII դ., այլև անտիկ դարաշրջանի կղմինդրներին: Այսպիսով, այս խճե հարթակը միջնդարի նյութական մշակույթը պարզորոշ սահմանադատում է հելլենիստական ( $0,4-0,5$  մ հղոր.) և մ.թ.ա. I հազարամյակի սկզբի շերտերից: Պեղվող հատվածում ուշադրավ էին թվում լորս կարասային թաղումները: Սրանք բոլորը մխրճված էին  $1,20-1,40$  մ խորության՝ մ.թ.ա. I հազարամյակի

սկզբի շերտի մեջ\*, որտեղ և երևան հկան վաղ շրջանի քարե հիմնապատերի առաջին պարզորոշ հետքերը:

Ուշագրության արժանի էր պեղավայրի արևմտյան մասում 1 մ խորության մեջ՝ մոտավորապես 5×8 մ մակերեսով տոփանված կավե հարթակի մնացորդների ի հայտ գալը հելլենիստական խեցեղենի ընկերների հետ: Նշենք նաև, որ այս նույն հատվածում, միջնադարյան քարե հիմնապատի շարվածքի մեջ հայտնաբերվել է կրկնակի օգտագործված սպիտակավուն ավազաքարից պատրաստված անտիկ սյան խարիսխ: VII դ. կաթողիկոսական պալատում ևս պահպանվել է անտիկ դարաշրջանի, բայց օձաբարից պատրաստված տորածե խարիսխ:

Այսպիսով, վերջին տարիների պեղումները և շերտադրական դիտողությունները կենարոնական թաղամասում առաջին անգամ բացահայտեցին հելլենիստական դարաշրջանի նյութական մշակույթին պատկանող՝ 0,5—0,6 մ հզորությամբ շերտ, հաստատեցին՝ համաժամանակյա դամբարանադաշտի, իսկ պահպանված շինարարական մնացորդների և ճարտարապետական մանրամասների շնորհիվ նաև շինութունների երբեմնի գոյությունը:

1938 թ. ի վեր քննվող թաղամասում հայտնաբերվում են կարասային թաղումներ: Հայաստանի պատմության պետական թանգարանում պահվող Դվինի արշավախմբի նյութերի տվյալները, ինչպես նաև հրատարակված նյութերը և վերջին տարիների դաշալին հնադիտանյութն աշխատանքները՝ արդյունքները հնարավորություն են ընձեռում ներկայացնել Դվինի դամբարանադաշտի ընդհանուր պատկերը<sup>22</sup>:

Դամբարանադաշտը փոխված է եղել գլխավորապես կաթողիկե նաև միսնավ եկեղեցիների և կաթողիկոսական պալատի շրջակայքում (տախտ. X, 2):

Կարասային թաղում № 1. հայտնաբերվել է 1938 թ. կաթողիկոսական պալատի հարսավայրի կողմի փոքր սենյակներից մեկում, 1,4 մ խորությունից (տախտ. XI, 4): Կարասում կմախքի մնացորդներից բացի, գտնվել են նաև բրոնզե, մանկական փոքր ապարանջան, ականջօղ, շքասեղի գլխիկի մի բեկոր և տարատեսակ ուլունքներ, պարաստված՝ քարից, բրոնզից, ապակե շաղախից (տախտ. XXV, 6, 9, 10, 15):

Կարասային թաղում № 2. սրա մնացորդները հայտնաբերվել են 1946 թ. կաթողիկոսական պալատի և կաթողիկե եկեղեցու միջև, արևելյան կողմում՝ հորի մեջ\*\*:

Կարասային թաղում № 3. 1947 թ. կաթողիկե եկեղեցու հին արսիդի շրջակայքից հայտնաբերվել է փոքր կարաս՝ մանկան կմախքի մնացորդներով, բրոնզե, պարզ օղսկածե մանկական ապարանջան և մատանի, հաստ

\* Կարասային թաղումների խորությունը գրանցված է ներկայիս վերին՝ VII դ. հնագիտական շերտի պահպանված մակարդակից:

\*\* Միջնադարյան հորը ներթափանցել է ավելի վաղ ժամանակաշրջանի մշակութային շերտերի մեջ:

ապարանջանի մի բեկոր, որ, ըստ երևույթին, եղել է ոտքի ապարանջանի կտոր և հինգ ուլունք. մեկը՝ հասալիսից, գնդաձև, երկու կողմից սեղմված, ոսկրագույն (պուտերը՝ վարդագույն), իսկ մյուսը՝ ապակու շաղախից, նուրբ ոսպնյակաձև (տախտ. XXV, 5, 8, 11, 14):

Կարասային քաղում № 4. 1947 թ. կաթողիկե եկեղեցու հին արսիդի աջակողմյան պատին կից դրսից հայտնաբերվել է համեմատաբար լայն նստուկով, հաստիրան, թերի՝ վզի և պսակի մասը ամբողջապես կոտրված մի կարաս (պահպանված բարձր.՝ 92 սմ, իսկ ամենալայն մասի տրամագիծը՝ 50 սմ): Կարասը տեղագրված է եղել հորիզոնական դիրքով: Հողով լցված կարասի մեջ գտնվել է լավ պահպանված, կծկված կմախք՝ գանգը նստուկի մոտ, երեսը ուղղված հյուսիս-արևմուտք: Կմախքի հետ հայտնաբերվել են բրոնզե, ակոսաղարոված զույգ ականջօղ, օղակաձև մատանի, որի ծայրերը միմյանց շեն գոդված և շքասեղ՝ թերի կոտրված, առանց վերնամասի, վերջին իրը չի պահպանվել (տախտ. XXV, 12):

Կարասային քաղում № 5. 1948 թ. կաթողիկե եկեղեցու հին արսիդի շրջակայքից հայտնաբերվել է թերի՝ առանց վերնամասի, կոտրված փոքր կարմիր կարաս, որի մեջ եղած դեղնավուն փխրուն հողը պարունակել է մանկան կմախքի ոսկորներ:

Կարասային քաղում № 6. 1949 թ. կաթողիկե եկեղեցու հարավային հիւսիս արևելյան ծայրամասից հարավ գտնվել է հորիզոնական դիրքով տեղադրված, պսակի մասը հյուսիս ուղղված, խիստ ջարդոտած մի կարաս, որի վերին մասը բոլորովին էլ եղել է 2 սմ լայնությամբ, ժապավենաձև, միմյանցից 20 սմ հեռավորությամբ, առանց ղարգանկարի երկու գոտիներով: Շրջակայքում անկանոն թափված են եղել քուրեր: Կարասի մեջ գտնվող ամուր կովահողը պարունակել է մարդու ատամ և մի քանի ոսկոր:

Կարասային քաղում № 7. հայտնաբերվել է 1950 թ. մրանավ տաճարի արևելյան մասում, հորիզոնական գիրքով՝ բերանը արևմուտք ուղղված (տախտ. XI, 1): Կարասը եղել է ամբողջական, սակայն ճաքճաքած, պակասել են միայն պսակի և ուսամասի մի քանի բեկորներ: Պահպանված լուսանկարներից դատելով կարասն ունեցել է դուրս ցցված, դանգվածեղ շրթով պսակ: Թաղման անոթը, լցված հողախառն քարերով և հենց իր ջարդոտված մի քանի բեկորներով, պարունակել է ամբողջական կմախքի փածո ոսկորներ և հարուստ նյութեր: Դրանք են՝ երկու քարե կնիք, քարե և ապակե բաղամաղան և բազմաձև ուլունքներ, արծաթե քունքի օղ՝ ադաթե կախիկով, արծաթե օղի բեկորներ (հավանաբար քունքի օղի մնացորդներ են), բրոնզե շքասեղ՝ գլխիկի մասը կոտրված և պղնձե գմբեթաձև կոճակ, որը չի պահպանվել (տախտ. XXIII):

Կարասային քաղում № 8. հայտնաբերվել է 1950 թ., նախորդի կողքին (տախտ. XI, 5): Կարասը տեղագրված է եղել հորիզոնական գիրքով՝ արևելքից արևմուտք, պսակը արևմուտք ուղղված: Կարասի բերանը ծածկված է եղել քարե սալով: Թաղման անոթի մեջ գտնվել է ձախ կողքին պառկեցված, կծկված մի կմախք, գանգը կարասի բերանի մոտ, այսինքն՝ ուղղված արև-

մուտք: Կմախքի վղի և ձեռքերի մոտ հայանաբերվել են մետաղե, քարե, ապակե ուլունքներ և սարգիոնե կախիկներ (վերջիններս չեն պահպանվել), արծաթե քունքի օղեր ագաթե կախիկներով և ըրոնղե, թերի (առանց գլխամասի) շքասեղ (տախտ. XXIV):

Կարասային թաղում № 9. հայանաբերվել է 1951 թ. կաթողիկե եկեղեցու հիմքերի մոտ, հարավային աբսիդի մեջ: Եկեղեցու հիմքերը գնելիս կարասն ամբողջովին փշրվել է, որի հեռանքով մեջը գտնված կմախքը փտել է: Կմախքի հետ գտնվել են ապակե տարատեսակ ուլունքներ (տախտ. XXV, 13), ըրոնղե օղի բեկորներ և կոնաձև կոճակ: Վերջին երկուսը չեն պահպանվել:

Կարասային թաղում № 10. 1951 թ. կաթողիկե եկեղեցու հարավարևելյան անկյունում, գրսից՝ հայտնաբերվել են մեծ կարաս և վերջինիս կպած երկու փորր կճուճ (աախտ. X, 3, տախտ. XI, 6): Դժբախտաբար, սրանցից ոչ մեկը մեղ չի հասել: Միայն պահպանված լուսանկարից երևում է. որ կարասն ունեցել է հարթ նստուկից աստիճանաբար լայնացող հասափոր իրան և դուրս փոխած շուրթ, որը գրսից նդերված է փորագիր ասամնաձև նախադարձով: Կճուճներից մեկը ունեցել է շեփորաձև, լայն բերան և շափալանց ուռուցիկ իրան: Կարասի մեջ գտնվել են միայն կմախքի ոսկորներ:

Կարասային թաղում № 11. հայանաբերվել է պեղումների ժամանակ 1976 թ. V գ. կաթողիկոսական պալատից տրեկելք ընկած հատվածում: Տափակ, հարթ նստուկով կարասը տեղադրված էր ուղղահայաց դիրքով, սակայն թերի՝ առանց վերնամասի: Կարասը լցված էր հողով և պարունակում էր կմախքի մի քանի ոսկոր:

Կարասային թաղում № 12. հայտնաբերվել է 1978 թ. միանավ եկեղեցուց հարավ՝ հելլենիստոան ժամանակաշրջանի շերտում: Կարասը գանընդում էր հորիզոնական դիրքում՝ մեծ և խոր կոնքով ծածկված բերանը դեպի արևելք: Նստուկի և իրանի որոշ բեկորներ ջարգոավտծ վիճակում ընկած էին հենց կարասի մեջ: Թեպետ նստուկի պսկասող մասերը չգտնվեցին, սակայն ելնելով անոթի ընդհանուր ձևից և համեմատելով նմանատիպ կարասների հետ, ենթադրվում է. որ դրա դուրս ցցված ղանգվածեղ շուրթը և հաստապաա ուռուցիկ իրանը հինվել են ապակե նստուկի վրա: Կարասի պահպանված բարձրությունը՝ 120 սմ է, բերանի արամագիծը՝ 42, իսկ ամենալայն մասինը՝ 94 սմ: Կմախքը պակած էր աջ կողքին, կծկված վիճակում, գլուխը դեպի կարասի բերանը, դեմքը՝ հյուսիս: Դեմքի և ձեռքերի մոտ գանվեցին գնգաձև իրանով տափաշիշ (աախտ. XIII, 3) և ներս հակված շրթով փոքր թաս:

Կարասային թաղում № 13. հայտնաբերվել է 1979 թ. կաթողիկե եկեղեցու հին աբսիդից հարավ՝ 1,35 մ խորության մեջ՝ վաղ երկաթի գարաշրջանի շերտում: Կարասը գտնվում էր հորիզոնական դիրքում՝ բերանը դեպի արևելք: Թաղման անոթը բավական վնասված էր, սակայն հնարավոր եղավ մասամբ վերականգնել՝ թե՛ ձևը և թե՛ չափերը: Կարասի հարթ նստուկից (մեջտեղում՝ անցք) կողերը գրեթե անմիջապես լայնանալով կազմում են գնգաձև փոր և ընգգծված համեմատաբար բարձր վիղ՝ դուրս կլտ-

րացող շրթով: Պահպանված չափերն են. բարձրությունը՝ 0,5 մ, բերանի րացվածքի տրամագիծը՝ 0,25 մ, նստուկը տրամագիծը՝ 0,2 մ: Կճուճ հիշեցնող այս փոքր կարասում, ինչպես և ենթագրվում էր, հայտնաբերվեցին՝ մանկան կուչ եկած և արդեն փտած կմախք՝ դեմքը դեպի հարավ, իսկ առջևում՝ ձեռածեփ, մբապատ պուլիկ (տախտ. XIV, 6):

Կարասային քաղում № 14. հայտնաբերվել է 1979 թ. կաթողիկե եկեղեցու հին արսիդից հտրավ, դերը նկարագրած թաղումից՝ 0,30 մ դեպի արևելք, 1,40 մ խորության մեջ, որտեղ պարզորոշ նկատվեցին մ.թ.ա. 1-ին հաղարամյակի սկզբին պատկանող քարե հիմնապատեր: Կարասը գտնվում էր հորիզոնական դիրքում, շուրջանակի եզերված քարերով, իսկ տափակ սալաքարով ծածկված բերանը՝ դեպի հյուսիս-արևմուտք: Թեպետ թողման անոթը խիստ չարդտված էր, սակայն վերականգնվեց դրա ընդհանուր ուղղապատկերը: Տափակ նստուկից կողերը բարձրանալով կաղմում են ուռուցիկ փորով, կլորավուն շրթով, կարճ մտով՝ նույնպես կճուճ հիշեցնող (ինչպես նախորդը) փոքր կարաս՝ բարձրությունը 0,60 մ, բերանի տրամագիծը՝ 0,27 մ, ամենալայն մասի շրջագիծը՝ 0,45 մ: Մանկական թաղում էր կմախքը կծկված՝ գանգը դեպի անոթի բերանը, դեպի արևելք: Հայտնաբերվեցին գեմբի առջև՝ ձեռածեփ, երկկանթանի, փորշ պուլիկ (տախտ. XIV, 8), իսկ ձեռքերի մոտ՝ բրոնզե ապարանջան, օղակաձև մատանի, գրմթթած կոճակ և գնդաձև փոքրիկ խաղաքար:

Կարասային քաղում № 15. հայտնաբերվել է 1980 թ. կաթողիկե եկեղեցու հին արսիդից հարավ՝ նույնպես վաղ շրջանի շերտում՝ 1,50 մ խորության մեջ (տախտ. XI, 2—3): Կարասը դրսևում էր հորիզոնական դիրքում, իր իսկ բեկորով և տափակ սալաքարով ծածկված բերանը՝ դեպի արևելք: Հենց այսպեղ՝ բերանի առջև ի հայտ եկավ մոխրաոստ շերտ, որը հավանաբար առնչվել է թաղման արարողությանը: Կարասի նստուկի կեսը չկար, ուստի դրա փոխարեն հաղցված էր լայնաբերան կոնք (տախտ. XVI, 5): Թեպետ իրանի որոշ բեկորներ էս բացակայում էին, բայց կարսուի ընդհանուր ձևը պարզ էր՝ սրա տափակ փոքր նստուկից ձգվող հաստապատ կողերը աստիճանաբար կաղմում են ուռուցիկ իրան, կարճ վիղ և փոված լայն պսակ՝ ղանգվածեղ շրթով (բարձրությունը՝ 110 սմ, բերանի արամագիծը՝ 50 սմ, ամենալայն մասի շրջագիծը՝ 80 սմ): Կարասի մեջ հայտնաբերվեց միմյանց կողքին կծկված երկու կմախք: Կմախքներից մեկը տեղագրված էր կարասի արևմտյան մասում, գեմբը՝ դեպի արևելք, իսկ մյուսը՝ արևելյան մասում, դեմքը՝ ցած:

Կարասային քաղում № 16. հայտնաբերվել է 1981 թ. կաթողիկե եկեղեցու հին արսիդից հարավ՝ № 15 թաղումից երկու մետր դեպի հարավ-արևելք՝ մ.թ.ա. 1-ին հաղարամյակի սկզբի շերտում՝ 1,30 մ խորության մեջ: Կարասը տեղադրված էր հորիզոնական դիրքով, բերանը՝ դեպի հարավ, իսկ նստուկը՝ հյուսիս: Թաղման անոթի բերանը ծածկված էր ինչ-որ կարասի հաստապատ կողարեկորով և լավ կոկված, կարմրափայլ, կանթավոր մի մեծ անոթի բեկորներով: Թաղման կարասը վերին շերտերի ծանրությունից

գրեթե չուիմ ձգմվել և շարդուփշուր էր եղել՝ հստկուպես սրա վերին կեսը: Այսուհանդերձ պահպանվածից պարզվեց, որ վերջինս ունեցել է հելլենիստական ժամանակաշրջանին բնորոշ ձև և հարդարում՝ ցցված հաստաշուրթ պսակ, ուռուցիկ իրան, հարթ տափակ նստուկ, իսկ արտաքին մակերեսը բաց նարնջադույն և անխնամ մշակված (կարասի բարձրությունը՝ 110 սմ, բերանի տրամագիծը՝ 50 սմ, ամենալայն մասի շրջագիծը՝ 90 սմ): Ուշագրավ է, որ կարասի շուրջը բացելիս՝ նստուկի և հասկապես բերանի մոտ երևան եկավ կենդանիների ոսկորներով հարուստ, բավական հզոր (մոտավորապես՝ 40 սմ) մի մոխրաշերտ, որի մեջ գտնվեց նաև թեթևակի ներս հակված շրթով թասի բեկոր: Վերը նկարագրածը, անկասկած, թաղման ինչ-որ արարողության հետքեր են, թերևս հոգեհացի Կաբասի միջից հողը հեռացնելիս հայտնարեկվեց կմախքը կծկված վիճակում՝ գլուխը ուղղված դեպի անոթի բերանը, ոտքերը՝ դեպի նստուկը, դեմքը՝ արևմուտք: Կմախքի կրծքավանդակի մոտ գտնվեցին՝ ապակյա, գնդաձև մեկ ուլունք, սև քարից՝ թեղիկի գլուխ հիշեցնող կոճակ (տախտ. XVIII, 5, 6) և ըրտնդե լարից օղակաձև կախիկներ (վառ պահպանված):

Հայաստանի հելլենիստական դարաշրջանին բնորոշ դասական-ավտոնգական թաղման այս ձևը իր տիրույն աեղն է գրավում նաև Արտաշատի և Գառնիի անտիկ գամբարանազաշտերում<sup>23</sup>: Ուշադրության արժանի արդյունքներ է տալիս Դվինի գամբարանազաշտի ուսումնասիրությունը, որը բացահայտում է սերտ աղերսներ հիշյալ երկու հուշարձանների հելլենիստական ժամանակաշրջանի կարասային թաղումների հետ: Դվինի կարասային թաղումները՝ հանգուցյալի կծկված գիրքով, նրա գործածած իրերով, կարասը քարերով շուրջանակի եղերելը, վերջինիս բերանը քարե սալով կամ անոթով պարագիր ծածկումը, կարասի առջև խեցանոթների բեկորներով և կենդանիների ոսկորներով հարուստ մոխրառատ շերտի գոյությունը և այլն վկայում են որոշակի կրոնական աշխարհայացքի, հավատալիքների ու թաղման ծիսական արարողությունների նույնության մասին, որ աեսնում ենք Գառնիի և Արտաշատի նմանատիպ թաղումներում ևս: Այս երեք ընկալվալներում էլ, որպես թաղման անոթ, օգտագործել են տնտեսության մեջ արդեն գործածված կարասները, գիակը մացրել անոթի պսակը, ուսամասը կամ նստուկը էտրեկուց հետո և նորից կարկասել իր իսկ բեկորներով կամ ծածկել այլ անոթներով: Այս գամբարանազաշտերում կարասները թաղել են հորիզոնական, հաղվագեպ՝ ուղղահայաց դիրքերով: Բացակայում են տրոշակի գիրքորոշումը, սեռատարիքային տարբերությունները և այլն: Ուշադրության արժանի ընդհանրություններ են երևան գալիս նաև Դվինի, Գառնիի, Արտաշատի կարասային թաղումներում հանգուցյալին ուղեկցող նյութերի միջև (գատարկ կարասները փոքր թիվ են կազմում): Թաղման կուրասների մեջ գրվել են հանգուցյալի կյանքի ընթացքում գործածած իրերից՝ խեցեղեն, դարգեր, հաղվաղեպ են գրամները և գեռես բացակայում է դեմքը՝ միայն մեկ կեռ գանակ է հայտնարեկվել Գառնիում: Թաղման իրերից բոլոր երեք հուշարձաններում էլ որպես կանոն՝ որակով, առատությամբ և բաղմաձևու-

թյամբ առաջին տեղը գրավում են զարուհրը: Դրանք՝ արծաթյա, բրոնզյա, պղնձյա, երկաթյա ապարանջաններ (օղակաձև, ներձկված կամ օձազուխ ծայրերով), ականջօղեր կամ քունքի օղեր (երբեմն քարի կախիկներով), մատանիներ են, քարե և ապակյա կնիքներ՝ բազմանիստ կամ ձվածիր՝ ժամանակին ընտրող թեմատիկայով (հեծյալի և հետևակի, մարդու և կենդանու մենամարտի, կենդանիների փտրագիր պատկերներով), ուլունքներ, պարաստված ապակուց, ապակյա շաղախից, բազմատեսակ բարբրից, և փերջապես բրոնզյա հայելիներ, շքասեղներ, հերակայներ, ճարմանգներ, կախիկներ և այլն: Երկրորդ տեղը գրավում են խեցանոթները, որոնք, բնականարար, թաղման անոթի տարողունակության պատճառով չէին կարող դրվել մեծ քանակությամբ: Դրանք՝ ասփաղջի են, քրեղաններ, թասեր, անկանթ և երկկանթանի պուրիկներ:

Բացի վերը նշված ընդհանրություններից, Դվինի դամբարանազառտր առջվում է Գառնիի և Արտաշատի կարասային թաղումներին նաև խիստ որոշակի աղբյուներով: Այսպես, նախ հար և նման են թաղման կարասները՝ իրանի ուրվապատկերով, զանգվածեղ շուրթով և հարթ նստուկով, Դվինի քարե բազմանիստ կնիքի՝ հեծյալի և հետևակի մենամարտի պատկերը աննշան տարբերությամբ կրկնվում է Գառնիի բազմանիստի վրա, իսկ արծաթյա քունքի օղերը ձևով նույնանում են Արտաշատի ականջօղերի հետ (վերջիններս՝ բրոնզից և ապակուց են), կավանոթների հիմնական ձևերը նույնպես կրկնվում են՝ Դվինի ունկանման կանթերով պուրիկը նույնիսկ չափերով աղբյուրով է Գառնիի օրինակի հետ՝ ատկա են նաև այլ բաղամթիվ աղբյուներ:

Դվինի, Արտաշատի, Գառնիի կարասային թաղումների հնագիտական վերլուծությունը թույլ է տալիս այդ թաղումները համարել շարքային, սրածափին են խոսում տնտեսության մեջ գործածված, հաճախ արգեն ոչ պիտանի խեցանոթների զանգվածային օգտագործումը, թաղման նպատակով հատուկ իրերի պատրաստման բացակայությունը, հանգուցյալին ուղեկցող նյութերի ընդունված, միօրինակ կաղմը (միայն Գառնիում է դրամի առկայության երկու դեպք արձանագրված): Փաստորեն բացակայում են թաղման անոթների տեղի, գիրքորոշման, ուղեկցող նյութերի ակնառու տարբերությունները, որոնք հենց բնութագրում են բնակող թաղումներին պատկանողների հասարակական համեստ դիրքը:

Ուշագրավ է, որ Դվինի դամբարանազառտր՝ ի տարբերություն Արտաշատի և Գառնիի, որտեղ թաղման քննվող ձևը հանդես է գալիս ավանդական՝ սալարկղային, քարարկղային, հիմնահողային թաղումների կողքին, դեռևս բաղկացած է բացառապես կարասային թաղումներից: Երկնք նաև, որ մեկ կարասում զույգ թաղման առաջին դեպքը արձանագրված է միայն սյուսեղ՝ Դվինում: Դամբարանազառտր փոխված է կաթողիկե և միանավ եկեղեցիների և կաթողիկոսական պալատի շրջակայքում, ինչպես և նշված շինությունների ստորին շերտերում: Այս հանգամանքը իսկ լուրջ արգելք է՝ պարզելու թաղումների խտության աստիճանը: Եղած տվյալների համաձայն թաղումները հավասար չեն տեղորաշխված: Այսպես՝ կաթողիկե եկե-

ղեցու հին արսիգից հարավ, մոտավորապես 100 քառ.մ տարածքի վրա, հայանարերվել են թվով չորս կարասային թաղումներ միմյանցից՝ 0,30 մինչև 2 մ հեռավորության վրա:

Նվ վերջապես Դվինի դամբարանադաշտի նյութերը համախոս են ընկավայրի նյութերին:

Այսպիսով, հնագիտական աշխատանքների շնորհիվ ապացուցվում է հելլենիստական դարաշրջանի մշակութային շերտի գոյության փաստը թե՛ ըլրի վրա, և թե՛ կենտրոնական թաղամասում, իսկ օրեցօր հայտնաբերվող կարասային թաղումները հաստատում քննվող ժամանակաշրջանի մի ամբողջական հուշարձան-համալիրի գոյությունը Դվինում: Ուշագրավ է, որ պարզորոշ սահմանադատում բնակավայրի և դամբարանադաշտի միջև այստեղ չի նկատվում, ինչպես օրինակ՝ պարթևական ժամանակաշրջանում՝ Միջտգետքի քաղաքներում<sup>24</sup>: Անտիկ դարաշրջանում ընդունված է եղել հանգուցյալին թաղել այն նույն ընկավայրում՝ նույնիսկ ընկատրանում, որտեղ տպրում էին կամ նրան կից: Նման երևույթ գիտվում է նաև Հայաստանում՝ Արտաշատում, Շիրտկավանում<sup>25</sup>: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում, երբ Դվինի կենտրոնական թաղամասը՝ օրի խանգակով անջատված չի եղել ըլրից և կաղմել է վերջինիս անմիջական շարունակությունը, հավանարար, ընկավայրը տարածված է եղել նաև այստեղ, որը ըլրի և սրտն հարող տարածքի ընկերչների համար ժամանակին ընդունված սովորության համաձայն հանգիսացել է նաև դամբարանադաշտ:

• •

Անտիկ դարաշրջանի ընկություն հեաքեր ի հայտ են գալիս նաև անմիջապես ըլրի շրջակայքից, և նույնիսկ մերձակա գյուղերից: Դրանք րացահայտ են ըլրից արևելք մերձակա՝ Նորաշեն, Վերին Արտաշատ, և քիչ հեռու տեղագրված, Քաղցրաշեն գյուղերի տարածքում: Ընդ որում Նորաշեն և Վերին Արտաշատ գյուղերը հետագայում դարձան միջնագտրյան Դվինի արևելյան արվարձանները, որտեղ մինչև այսօր պահպանվել են այդ մեծ թաղը պատնեշող միջնագարյան պարսպի հետքերը, որոշ ճարտարապետական մանրամասներ, իսկ գաշտային աշխատանքների ժամանակ հայտնաբերվում են նաև բազմաթիվ հնագիտական նյութեր: Հնագիտական տվյալները վկայում են, որ հիշյալ գյուղերը անտիկ դարաշրջանում ևս ընկեցված են եղել: Այսպես Նորաշեն գյուղի այժմյան գերեզմանոցում, որը գտնվում է արհեստական ըլրակի վրա, փորումների ժամանակ, անմիջապես գետնի մակերեսին ի հայտ են գալիս բազմաթիվ և բազմատեսակ խեցանոթների մնացորդներ: Դրանք գունաղարգ, գոտեղարգ տափաշշերի, տափակ նստուկով և հյուսածո, ուտուցիկ գոտիով ըլրոված հաստաշուրթ պսակով կարասների, բաղմերանգ փիսլանների, ներս կտրացող նուրբ շրթով թասերի, խնամքով պատրաստված եղունգաղարգ կճուճների շրթնամասերի,

խոհանոցային մրապատ, դորշ անոթների բեկորներ են, որոնք թե՛ ձեարանորեն և թե՛ արտաքին դեղարվեստական հարդարմամբ սերտորեն աղերսվելով Դվինի միջնաբերդում և կենտրոնական թաղամասում հայտնաբերված մ.թ.ա. II—I դդ. հելլենիստական խեցեղենին, վկայում են նորաշենի ըլրի բնակեցված լինելու մասին հենց այդ նույն դարաշրջանում: Մինչդեռ վերին Արտաշատում նկատելի են ուշ՝ մ.թ. I դ. բնակության որոշակի ազդակներ: 1959 թ. հիշյալ գյուղում, հողային աշխատանքների ժամանակ, պատահաբար հայտնաբերվել է մ.թ. I դ. պատկանող կարասային թաղում՝ ապակե սրվակների, եղիպտական մածուկից պատրաստված ուսուներազմոր ուլունքի և ծովային իեցու հարուստ պարունակությամբ: Այս ուշագրավ հավաքածուն ժամանակագրորեն լրացնում են նույն գյուղի փողոցում, պատահաբար գտնված, հռոմեական Դոմիտիանոս կայսեր (մ.թ. 81—96 թթ.) դենարը և Բոսփորի արքա Ռիսկուպորիդես 2-րդի (մ.թ. 68—92 թթ.) պղնձե դրամը<sup>26</sup>: Քաղցրաշեն գյուղի հեղեղափ կտրվածքի վրա այսօր էլ նկատելի են կարասային թաղումների հետքեր և մնացորդներ: Ի դեպ 1950 թ. այս նույն հեղեղատից հայտնաբերվել է հնձանի խաղող ճղմելու սալ՝ տարապան<sup>27</sup>: Ինչպես տեսնում ենք, հելլենիստական ժամանակի բնակության հետքերն այստեղ ևս ակնհայտ են:

Միջնադարյան Դվինի հյուսիսային արվարձանները հանդիսացող՝ վերին Դվին և Ներքին Դվին դյուղերի ասրածքում ևս անսխիկ դարաշրջանին պատկանող հայտնաբերումներ են եղել: Ներքին Դվինում, 1925 թ. դաշապին աշխատանքների ժամանակ, հայտնաբերվել են արձանների քարե գրուխներ (որոնք համարվում են Հայաստանի անսխիկ դարաշրջանի արվեստի ժողովրդական՝ ավանդազան ոճին պատկանող սաեղծագործություններ), իսկ 1975 թ. անսխիկ՝ մասնեքավոր սյան վերնամաս<sup>28</sup>: Ներքին Դվինից պատահաբար ի հայտ են եկել Բոսփորի Ռիսկուպորիդես 6-րդ արքայի (318—332 թթ.) պղնձե մեկ գրամ և Օդոստոս Օկաավիանոսի (մ.թ.ա. 30—մ.թ. 14 թթ.) դենարը<sup>29</sup>:

1976 թվականին Դվինի ըլրի անմիջապես հարավ-արևմուտքից հարող Հնարերդի դաշից հայտնաբերվել է խաղող ճղմելու սալ՝ տարապան<sup>30</sup>: 1938 թ. ըլրից արևմուտք, մերձակա Կանաչուա (նախկինում՝ Դոխուղ) գյուղից Դվինի արշավախմբի անդամները բերել են սյան «աասիկական» ձևի տուֆե խարխիս<sup>31</sup>:

Բացի վերը հիշատակվածներից, քաղաքի տարածքից ժամանակի ընթացքում հայտնաբերվել են՝ Փիլիպոս 3-րդ Արիդայոսի (մ.թ.ա. 323—317 թթ.) և Տիգրան Բ-ի (մ.թ.ա. 95—55 թթ.) արծաթյա դրամները, Միհրի պաշտամունքին նվիրված դոհասեղան և սյան ռազմաթիվ աորածև խարխիսներ<sup>32</sup>:

Պեսք է նշել, որ վերոհիշյալ հայտնաբերումների մեծադույն մասը տարիներ շարունակ ըլրում և կենտրոնական թաղամասում տեղի գյուղացիների կողմից հող և շինանյութ տեղափոխելու (ժամանակին նույնիսկ ըլրի հողը առանձին սայլերով վաճառել են մերձակա գյուղերի բնակիչներին) հետե-

վանքով ցրվել և տարածվել է նման լայն շտապվիղով: Կասկածից վեր է, որ հիշյալ հնագիտական իրերից շատերը ժամանակին ունեցել են իրենց նախնական հիմնական տեղը հենց բլրի վրա: Այսուհանդերձ չպետք է անտեսել նաև բնակության այն բացահայտ հետքերը, որոնք Երևան են դալիս հատկապես Նորաշեն, Վերին Արտաշատ, Քաղցրաշեն, թերևս Ներսիս Դվին գյուղերի տարածքում, որտեղ, իհարկե, գերիշխող դերը կատարել է բուն Դվինի բնակավայրը սփռված՝ հիմնականում բլրի վրա և ժամանակին նրա անմիջապես շարունակությունը կողմող կենարոնական թաղամասում:

Դվինի հելլենիստական շերտի վրա հոր միջնադարյան քաղաքը բաղադրիկ նշանակություն ունեցող իր ճարտարապետական կառույցների դոյությամբ, ինչպես նաև ներկայիս գյուղերի առկայությունը՝ քննվող դարաշրջանի բնակավայրի հնագիտական ուսումնասիրությունը դարձնում են խիստ հատվածական: Ուստի առայժմ անհնարին է պարզել բուն Դվինի անտիկ բնակավայրը բնագրկող աարածքի տրոշակի սահմանները և աեղադրական տյլ հարցերը:

Առկա հնագիտական նյութերից դասելով, Դվինի անտիկ բնակավայրն իր մերձակայքով՝ հանդես գալով հելլենիստական դարաշրջանում, բնդհանուր առմամբ հարատեում է նաև մեր թվականության առաջին դարերում: Եվ, եթի բլրի վրա ինչ-իսկ հանդամանքների պատճառով կյանքն անդամ դադարում է (բլրի շերտադրական կտրվածքի վրա բացահայտ են մեծ հրդեհի և տվերվածության հետքերը), ապա շրջակայքում այն շարունակվում է. որի նյութեդեն վկայությունները ուշ անտիկ դարաշրջանին պատկանող վերոհիշյալ հայտնարերումներն են:

## II. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԴՎԻՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Դվինի հելլենիստական շերտերի ուսումնասիրության ընթացքում միջնարհրդում, քաղաքային թաղամասերում հայտնաբերվել են ընակչության տնտեսական կյանքին և կենցաղին առնչվող արժեքավոր նյութեր: Դրանք աղորիքներ, սանդեր, խաղող ճղմելու սալեր են, որոնք վկայում են զտրագացած երկրագործության մասին: Սա իր հերթին խթանելով խեցեգործության առաջընթացին արագացնում է խեցեղեն արտադրանքի թողարկումը, բարձրացնում վերջինիս որակը: Հիշյալ արհեստաճյուղի նյութական վկայություններն են հելլենիստական շերտից հայտնաբերված դուրգի անիվների րացառիկ նմուշները: Սրանք բոլորը հնարավորություն են ընձեռում ներկայացնել դարաշրջանի արտադրական դործունեությանը ընդհանրապես Դվինի անտիկ ընակավայրի տնտեսական կյանքի պատկերը, վերջինիս ղարդացման մակարդակը, կապերը հարեան երկրների հետ, ղրանցով իսկ րացահայտելով նաև ժամանակի նվաճումների յուրացման աստիճանը:

### 1. ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Հելլենիստական դարաշրջանի աշխատանքային գործիքների մեջ կարևոր տեղ են զբաղում Դվինում հայտնաբերված աղորիքները (ախտ. XII, 5, 7): Դրանք պատրաստված են չեղտ տրձաքարից՝ օվալտձև են (ընդ որում մեկը համեմատարար ուղղանկյուն է), վերին ռուրեցիկ մասը դեպի ցած նեղացող երկայնակի ակոսով, ստորին աշխատանքային մասը՝ հարթ (չափերն են. երկ. 2,9 սմ, լայն. կենտրոնում՝ 17 սմ, եղրերում՝ 9 սմ, հասա. 5 սմ, ակոսի լայն. 4 սմ):

Հիշյալ աղորիքները պատկանում են ղարդացման սյն փուլին, երբ գործիքը աշխատեցվում էր լծակի օդնությամբ: Վերջինս ագուցում էին վերին քարի երկայնքով արված սկոսի մեջ և ամրացնում: Այսպիսով, լծակը շարժում էր վերին քարը՝ ստորին, հարթ սալի վրա աջ և ձախ աղեղնաձև պտույտով: Լծակի կիրառումը աղորիքի աշխատանքի արտադրողականության բարձրացման առաջին խթանը հանդիսացավ: Ի տարբերություն լեռքով և ու առաջ շարժվող ավանդական-պարզունակ աղորիքների, լծակովոր աղացներն արդեն պահանջում էին համեմատարար ավելի պակաս ֆիզիկա-

կան ուժ, միևնույն ժամանակ (հատկապես վերին քարի շափերի մեծացման շնորհիվ) տալով շատ և առավել որակյալ հումք:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում լծակալոր աղորիքների առուջին նմուշները հանդես են գալիս ավանդալան-պարզունակ աղորիքների կողքին ղեռնո մ.թ.ա. IV դ. (Նոյեմբերյանի շրջան, Զագացատեղի)<sup>1</sup>, սակայն կատարելագործվում և լայն տարածում են գտնում կապված արգեն երկրի ընդհանուր տնտեսական վերելքի հետ հատկապես բուն հելլենիստական դարաշրջանում (Արտաշատ, Արմավիր, Գառնի, Շիրսկավան և այլն)<sup>2</sup>։ Ուստի լծակալոր աղորիքների երևան դալը Դվինում նույնպես պայմանավորված է ժամանակի արտադրական պորժունեության զարգացման որոշակի մասնարդակով:

Երկրագործական մթերքների մշակման նպատակով (հաճախ նաև արհեստային արագործության մեջ) օգտագործվել են նաև սանդեր: Ժամանակաշրջանին ընդհանր է իր ձևով՝ հատկապես ծակոտկեն բազալտից պատրաստված, խնամքով հղկված արտաքինով, շուրթի վրա շորս տնկանման կանթի-րով սանգր (շափերն են. բարձր. 28 սմ, ար. 35 սմ) (տախտ. XII, 8): Հնագույն ծագում տենեցող այս հարմարանքները, որոնք գալիս են գեռես նեոլիթից, թեպետ ձևով ըավական պահպանողական են, սակայն անտիկ գարաշրջանում հաճախ ստանում են ունկանման կանթեր: Նման խուլ կանթերով սանդեր հայտնաբերվել են Արտաշատում<sup>3</sup>: Կսմթավոր սանգեր հայանի հն Հյուսիսմերձսեծովյան անախկ ընկավայրերից<sup>4</sup>:

\* \* \*

1976 թ. Դվինի միջնաբերդից հարավ-արևմուտք, քաղաքային թաղամասում, գաշտային աշխատանքների ժամանակ գտնվել է խնամքով մշակված բազալտե մի սալ<sup>5</sup> (տախտ. XII, 6): Սալի վերակաղմությունը տրվում է պահպանված մասի հիման վրա: Այն եղել է գրեթե օվալաձև, եզրված բարձր կլորավուն կողերով և ակոսառվակով, որը մի ծայրում վեր է տեղի ծորակի: Սրանից գեպի սալի կենտրոնական հարթակը ձգվել է մեկ այլ, ավելի նեղ ակոս: Նկարագրված սալը բոլոր մանրամասներով րուցահայտում է իր արտագրական նշանակությունը:

Անտիկ աշխարհում քաջ հայանի նմանօրինակ սալերի ամենարդամադան տարրերակներ օգտագործվել են ձիթապաղի յուղի արգյունագործության և խաղողագործության մեջ<sup>6</sup>: Այսպես, Կալիմեն մ.թ.ա. IV—III և Կրետե կղզիների մ.թ.ա. II դդ. պատկանող ձիթհաններում ձիթապաղի դանգվածը գրվել է նման սալերի ըաց հարթակի վրա և ճղմվել ամենապարզ լծակի ճանությամբ: Յուղը հոսելով ակոսառվակով, ծորակի միջոցով լցվել է առջևում տեղագրված անոթի կամ ավաղսնի մեջ:

Հնագիտական և աղագրական նյութերի համագրումը չի ըացառում, որ այս նույն սկզբունքով պարաստված Դվինի սալը նույնպես օգտագործ-

ված իրնի ձիթագործութիւն մեջ: Սակայն պետք է նկատի առնել, որ այն շուներ համապատասխան չափեր և հղորութիւն քունջութի կամ, օրինակ, կտավատի սերմերից ձեթ ստանալու համար: Քանի որ սրանց ճղմամբ, նախնական վերամշակումից հետո, կատարվում էր բաղալտից կամ գրահիտից շինված մեծ կալաքարի վրա, ձիու կամ եղան ուժով պտտեցնելով զանգվածեղ և ծանր ձիթաքարը: Գոյութիւն են ունեցել նաև մամլիչավոր ձիթհաններ, որտեղ ճղմողը երկուսից շորս վլիթիարի գերաններն էին, որոնք հզան կամ գոմեշի ուժով իջնում էին սերմով լի պարկերի վրա: Մինչգետ նույն աղագրական համեմատական նյութի շնորհիվ հնարավոր էր Գվինի սալի վրա տիղկանեփի մշակումը\*: Վերջինիս համար օգտագործվում էր քառանկյուն կամ կլոր քարե տաշտ՝ հղրաշրթերով և ջրհորղան հիշեցնող հասկովածով, որից կիսահեղուկը հոսում էր դուլլի մեջ: Ծղմամբ կատարում էին կանայք կանգնած վիճակում քարե հատուկ ճղմիչներով, որոնց հատակը հարթ էր, իսկ ընկնող մասը կլորավուն: Տաշտը գրվում էր պատվանգանի վրա կնոջ հասակին համապատասխան: Ճիշտ նույն տաշտի գերը անտիկ ժամանակաշրջանում, երբ ձիթագործութիւն մեջ, ինչպես վերը հիշատակվեց, ամենուրեք օգտագործվում էին համանման քարեր, հավանաբար կատարել է նաև Գվինի սալը, նույնպես հատուկ պատվանգանի վրա դրված: Այս դիպքում աշխատանքը կրթանար արագ և ըրածը արտադրողականութիւնը, քանի որ մի քարի վրա առանց միմյանց խանգարելու կարող էին աշխատել երկու կին շնորհիվ վերջինիս հարմարավետ կառուցվածքի՝ հիմնական և օժանգակակոսառվակների առկայութիւն:

Չարկ է նշել նաև, որ այս սալաքարը գտնվել է Գվինի կենտրոնական թաղամասին բավական մոտ, որտեղ հնագիտական տվյալները հավաստում են քննվող ժամանակաշրջանում տարրեր ընդլիցի կառուցների գոյութիւնը: Իսկ վերջիններիս տնտեսական պահանջների համար տիղկանեփի մշակումը խիստ անհրաժեշտ էր, քանի որ այն մշակվում էր բացառապես երկու նպատակով՝ որպես գեղամիջոց և որպես լուսածին ձեթի ճրագի համար: Այսպիսով, ստացված ձեթը կարող էր օգտագործվել սննդի, օժման, լուսավորութիւն և տնտեսական այլ պահանջների համար ընդհանրապես:

Նման սալերը, ինչպես վերը նշվեց, օգտագործվել են նաև խաղողագործութիւն մեջ՝ հնձաններում որպես տարապան: Խաղողը ոտօքերով տրորելուց հետո մնացած ղանգվածը լցրել են գամբյուղի կամ պարկե մեջ, գրել տարապանի բաց հարթակի վրա և կրկին ճղմել որևէ ծանրակի կամ մեծ մասամբ լծակավոր մամլիչի օգնութիւնը, որի շնորհիվ քաղցուն լցվել է ակոսառվակը և ծորակով թափվել տնոթի մեջ:

Չայտնի է, որ Գվինի հղել է խաղողագործութիւն կենտրոն, հետևաբար

\* Տիղկանեփի հատկը մշակվում էր հետեյալ ձևով՝ թրջոց դնել, կծկահան անել, քարե աշտում ճղմիչներով ճղմել և ստացված մածուկը օրում տաքացնել, որով և կատարվում էր ձեթի անջատումը հատրձի գանգվածից (ազգադրական համեմատական նյութը մեզ է տրամադրել Վ. Հ. Բգոյանը):

ուսումնասիրվող սալի գերր այս բնագավառում ևս չպետք է անտեսել: Խաղողի վերամշակումը աակավին ուրարտական ժամանակաշրջանից համարվել է տնտեսության կարևոր և եկամտարբեր ճյուղերից մեկը<sup>7</sup>: Այդ նպատակով կառուցվել են մի քանի բաժանմունքներով հատուկ հնձաններ: Ուշագրավ է Գառնի ամրոցի պալատական շինքի նկուղային հարկում հայտնաբերված մ.թ. III դ. հնձանը, որի ողորկ և անջրաթափանց մակերեսով թեք հաակր կաղմված է կրաշաղախի լիցքից, իսկ ցածրագիր պատերը սվաղ ված են: Խաղողը լցրել են ողորկ հաակի վրա և տրորել բոքերով: Քաղցուն հատակի թեքության շնորհիվ հոսելով պատի տակ կավե փողրակով, լցվել է հարևան սենյակում ավելի ցածրագիր հատակը զրա գրված անոթե մեջ<sup>8</sup>: Միջնագարում, նույնպես, խաղողագործության նշանակությունը տնտեսության մեջ այնքան մեծ է եղել, որ կառուցել են տաըատեսակ հնձանների ամրոցական համալիրներ (Ջվարթնոց, Եղվարդ, Գառնի, Արմավիր և ուլն): Բացի հիշյալ հաակ կառույցներից, Հայաստանի շատ շրջաններում մինչև այժմ էլ օգտագործվում են նաև ձեռքի հնձաններ, որոնք փորածո գերաններից, աախտակներից կամ քարից պատրաստված տաշտեր են: Վերջիններս շատ հարմար էին օգտագործման համար, քանի որ գրանք հնարավոր է դնել բակի ցանկացած մասում, երբեմն էլ անշարժ ամրացնել հատուկ պատրաստված պատվանգանի վրա:

Հայաստանում խաղողի վերամշակման հիմնական եղանակը եղել է ուքերով ճղմելը: Նույն երևույթը դիտվում է անտիկ ժամանակաշրջանից ի վեր բոլոր այն երկրներում, որտեղ դարգացած է եղել տնտեսության այս ճյուղը: Հունաստանում ձիթագործության մեջ օգտագործվող ամենապարզ լծակավոր մամլիչները հետագայում միայն թափանցեցին խաղողագործության բնագավառը<sup>9</sup>: Հյուսիս-մերձսևծովյան բնակավայրերում հայտնաբերված հնձաններում, որոնք խաղողագործական-գինեգործական մեծ համալիրներ էին, ոտքերով արդեն ճղմված խաղողի դանգվածը կրկին ճղմել են լծակավոր մամլիչի օգնությամբ՝ ակոսառավակով և ծորապով օժտված նման տարապանների վրա<sup>10</sup>: Պաղեստինի ժայռափոր հին հնձաններում խաղողի վերջնական մշակումը նույնպես կատարվել է լծակավոր մամլիչի օգնությամբ, անմիջապես հարթակներից մեկի վրա, և քանի որ հնձանը ժայռափոր էր, ուստի հատուկ սալի պահանջ չի դրացվել: Առաջավոր Ասիայի շատ երկրներում ժամանակակից հնձանները բաղկացած են երկու հարթակից՝ մեկի վրա խաղողը ճղմում են ոտքերով, իսկ մյուսում՝ մամլում մնացորդները<sup>11</sup>: Աղագրական տվյալներից հայտնի է, որ Վրաստանում մինչև այժմ գոյություն ունեն քննվող սալի նման սալաքարեր, որոնց վրա դրվում է ճղմված խաղողի մնացորդներով լի արկղը և մեկ անգամ ևս ճղմվում լծակավոր մամլիչի օգնությամբ: Ըտացված գինին կռվում է նակաչի, որը հաճախ իստում են մաքուր գինուն, վերջինս ավելի թունդ գարձնելու նպատակով<sup>12</sup>:

Դվինին հյուսիս-արևելքից հարող մերձակա Քաղցրաշեն գյուղի հեղեղատից, որտեղ տարիների ընթացքում հաճախ երևան են գալիս կարասային թաղումներ, 1950 թ. հայտնաբերվել է տուֆե, քառանկյուն, բայց նույն սկզբունքով պատրաստված սալաքար (չափերն են. 0,80×1,0 մ), որի

հարթ մակերեսը ընդհանուր առմամբ կհաստատվի մի կողմում վերածվում է ծորակի (տախտ. XII, 9):

Արմավիր քաղաքի արևմտյան ծայրամասում պեղումների ժամանակ հայտնաբերվել են հելլենիստական գարաշրջանին պատկանող նմանօրինակ սալեր<sup>13</sup>: Ընդ որում գրանցից մեկը պատրաստված է կարմիր տուֆից, ոժտված ակոստովակով և ծորակով, ունի նաև քարե գուռ, որի մեջ լցվել է քաղցուն: Իսկ մյուսը՝ թեպետ պարզ ձևով սալ է (առանց ակոսի և ծորակի), սակայն ուշագրավն այն է, որ ի հայտ է եկել in situ. մ.թ.ա. III—I դդ. բնորոշ հնձանի շինություն մեջ՝ խաղողի տրորման հրապարակի հյուսիսային մասում, երեք կողմից սվաղի մեջ առնված:

Հելլենիստական դարաշրջանի տարապաններ հայտնի են նաև Լուրի-չատից, Եղեգնաձորի շրջանից, Շամիրամի բնակավայրից<sup>14</sup>: Նմանօրինակ սալ ցուցադրված է Նախիջևանի թանգարանում:

Հետաքրքիր է նշել, որ Հայաստանի ոչ միջնադարյան, ոչ էլ ժամանակակից հնձաններում նման նշանակություն ունեցող սալեր չեն եղել: Դրանք, ամենայն հավանականությամբ, սոսկ ժամանակի և միջավայրի ազդեցություն արգասիք էր՝, որոնք հետագայում իսպառ վերացան: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մ.թ.ա. I դ. առ սալաքարերը անհետանում են անգամ հյուսիս-մերձսևծովյան խաղողագործական և գինեգործական Ե. Բ. համալիրներից և խիստ սահմանափակ քանակությամբ օգտագործվում մ. ա. տնային հնձաններում: Նախկինում խնամքով պատրաստված և մշակված տարապանները փոխարինվում են կոպիտ, փոքր չափերի, ինքնագործ սալաքարերով: Եվ արդեն մ.թ. I դ. վերջիններին գերը մեծ կառույցներում կատարում էր խաղող ճղման հարթակներից մեկը, որի հատակը երեսապատվում էր մեկ՝ քառակուսի կամ մի քանի սալերով, իսկ լծակավոր մամլիչը փոխարինվում կատարելագործված, պտուտակաշարով մամլիչով:

Այսպիսով, հնագիտական տվյալները համաձայն, քննվող արտադրական նշանակություն ունեցող սալաքարերի ամենավաղ օրինակները պատկանում են մ.թ.ա. IV դ., իսկ ամենավաղ օգտագործումը՝ հելլենիստական դարաշրջանին<sup>15</sup>:

Նկատի առնելով քննվող սալերի վերահիշյալ աղբյուրները, ամենալայն օգտագործման ժամանակաշրջանը, պատրաստման և մշակման կատարելությունը, ինչպես նաև հնագիտական և ազգագրական տվյալները՝ Դվինում և մերձակա Քաղցրաշենում հայտնաբերված տարապանները պետք է թվագրել հելլենիստական ժամանակաշրջանով, թերևս ամենաուշը՝ մ.թ.ա. I—մ.թ. I դդ. սահմանագծով:

\*  
\* \*

Խնդրագործության բուն պրոցեսին վերաբերող շատ կարևոր մանրամասն են գուրգի անիվները<sup>16</sup>: Դվինի միանավ եկեղեցու շրջակայքից, V—VI դդ. միջնադարյան շերտին նախորդող՝ հելլենիստական գարաշրջանին բնորոշ

գունագարգ և հասարակ իրեցանոթների բազմապիսի նմուշներով հագեցված՝ 0,5 մ հզորութիւնը հորիզոնում 1974 թ. հայտնաբերվել է դուրզի տուֆից պատրաստված անիվի ստորին մաս (տախտ. XII, 1, 3): Վերջինս ունի գեպի ցած լայնացող, խնամքով հղկված կարծ վիղ և կոնաձև ակոս (չափերը են. պահպանված բարձր. 7 սմ, հիմքի բարձր. 3 սմ, տր. 13 սմ, ակոսի տր. 5,5 սմ):

Տակավին 1966—1967 թթ. միջնաբերդի գագաթի «բակ» կոչված պեղվածքում, վաղ միջնագարյան շինությունների հատակի տակից (մոտավորապես՝ 0,2 մ խորությունից). հայտնաբերվել են բացառապես հելլենիստական ժամանակի նյութեր, որոնց թվում նաև գուրգի անիվի գրեթե գլանաձև ստորին մաս՝ կոնաձև ակոսով (չափերն են. պահպանված մասի բարձր. 9 սմ, հիմքի ար. 10 սմ, ակոսի տր. 5,5 սմ): Անիվը գեղնավուն կավից է, բաց վարգագույն փայլեցման հետքերով (տախտ. XII, 2, 4): Նման հարգարումը բնորոշ է հելլենիստական գարաջրջանի իրեցեղենին:

Հնագիտական և աղագրության նյութերի համագրումը հնաբանություն է ընձեռում արծարծել Դվինում հայտնաբերված գուրգի անիվի կառուցվածքային և տեխնոլոգիական որոշ հարցերը՝ նման գուրգերը կաղմված են եղել սկավառակից, առանցքից և հենակից: Սկավառակը՝ կոնաձև ծայրերով առանցքի միջոցով, ամրացվել է հենակին և գրվել շարժման մեջ ձեռքի կամ ոտքի օգնությամբ: Դատելով Դվինի գուրգերի անիվների շափերից, վերջիններս եղել են ոչ այնքան ղանգվածեղ և, անշուշտ, պատկանում են ձեռքով պտտվող գուրգերի շարքին:

Դուրգի անիվների առկայությունը Դվինում արտահայտվում է իրեցեղենի կայուն և հաստատուն ձևերի, հաճախ ստույգ կրկնությունների, նաև մի ձևի բաղման և բաղման տարրերակների, անոթների բարդ ձևավորված շուրթերի, տարբեր մասերի սահուն և համաչափ անցումների, շափերի և ղարգանկարների կայուն և գեղարվեստորեն ներգաշնակ լուծման մեջ: Դուրգը ապահովելով արտագրության արագ և որակյալ ընթացքը, նպաստում էր անոթների ոչ միայն կիրառական, այլև գեղարվեստական նշանակության ի հայտ գալուն: Դվինի իրեցեղենի մեծագույն մասը, գուրգով պատրաստվելուց հետո, ենթարկվելով հետագա մշակման (հղկման և անգորուպատման՝ հատկապես գունավոր լուծույթներով), կորցրել է անիվի հետքերը, սակայն կան առանց անգորի նմուշներ, որոնց վրա պահպանվել են գրանք՝ նեղ, շրջանաձև, կանոնավոր, խիտ ակոսագծերի ձևով:

Ուշագրավ է, որ անտիկ հունական նրբագեղ անոթների մեծագույն մասը պատրաստվել է հենց ձեռքի դուրգով: Մասնագետները նշում են վերջիններիս կիրառությունը նաև Հյուսիս-մերձսևծովյան անտիկ րնակավայրերում<sup>17</sup>:

Տուֆից պատրաստված գուրգի անիվ հայտնաբերվել է Արտաշատում (բարձր. 10 սմ, տր. 23 սմ): Վերջինիս ակոսավոր կոնաձև հիմքը այնպես ցայտուն չի ընգծված, ինչպես Դվինի տուֆե անիվինը: Սակայն ելնելով կառուցվածքից, ենթադրվում է, որ սա ևս աշխատել է նույն սկզբունքով՝ ձեռ-

բի օգնութիւամբ: Մասնակագրական առումով ևս ուսումնասիրվող անիվներն աղերսվում են, քանի որ Արտաշատի դուրգի անիվը հայտնաբերվել է 7-րդ դարի մ.թ.ա. II—I դդ. պատկանող շերտում<sup>18</sup>:

Բրոնզեդարյան խեցեղենի ուսումնասիրութիւնը հիմք է տալիս ենթուդրելու, որ պարզ հաստոցային սարքը Հայաստանում սոռաջին անգամ հանդես է գալիս մ.թ.ա. III հազարամյակում, տեխնիկապես կատարելագործվել է մ.թ.ա. II հազարամյակի ընթացքում<sup>19</sup>, կալից պատրաստված գուրգի ամենավաղ անիվներ և մանրամասներ (այդ թվում դուրգի քարե հենակ) հայտնի են ուրարտական հուշարձաններից՝ Կարմիր բլուր, Արինբերգ, Արգիշախիխիլի<sup>20</sup>: Դուրգի լավ պահպանված անիվներ հայտնի են Դվինի միջնադարյան շերտերի պեղումներից, ընդ որում դրանցից մեկը պատվել է ուրբի օգնութիւամբ<sup>21</sup>:

Ուրարտական, հելլենիստական և միջնադարյան գուրգի անիվներն արտաքնապես էական փոփոխութիւնների, բացառութիւամբ որոշ մանրամասների, շեն ենթարկվել: Հնագիտական նյութերի սակավութիւնը թույլ չի տալիս դուրգի անիվների ստույգ տիպարանական պատկեր ստեղծել ժամանակագրական կարգով: Սակայն ակնհայտ է, որ ժամանակն ստանձնապէս չի ազդել ուսումնասիրվող ստրքի կառուցվածքային սկզբունքի, հետևապէս՝ ձևի վրա: Այժմ էլ հայ տնայնագործը օգտագործում է ձեռքի գուրգ, որի խուլ ակոս-առանցքակալով շրջանաձև սկավառակը նույնպէս պատվում է բարի մեջ ամրացված առանցքի շուրջը (որպեսզի անիվը շտատանվի, այն լրացուցիչ ամրացվում է խաւկապով պահվող շորս ճաղերով)<sup>22</sup>:

Ուրարտական և միջնադարյան համանման նյութերի շարքում Դվինում և Արտաշատում հայտնաբերված հելլենիստական ժամանակաշրջանի դուրգի անիվները եղակի նմուշները վկայում են Հայաստանի անսկիզբ արաշրջանի խեցեղործութիւնի աճի և զարգացման թրոշակի մակարդակի մասին, որը բնութագրվում է անհղական խեցեղենի գանգվածային արտադրութիւամբ:

## 2. Խեցեղեն

Հայաստանի անսկիզբ արաշրջանի գրեթե բոլոր հուշարձաններում, այդ թվում Դվինում ևս, քննվող ժամանակի խեցեղենը երևան է գալիս առատութիւամբ: Բազմաձևութիւամբ, հարուստ հարգաբանքով և աղերսներով այն անգերադանց հնագիտական նյութ է, որ բնութագրում է հետագոտվող հնավայրի նյութական մշակույթը բազմակողմանիորեն, բացահայտում է խեցեղենի արադրութիւնի զարգացման աստիճանը ու ինքնատիպութիւնը, միաժամանակ հուշարձանը թվագրող ամենակարեւոր կովաններից մեկն է:

Դվինի հելլենիստական դարաշրջանի խեցեղենի հավաքածուն հայտնաբերվել է հիմնականում հնագիտական պեղումների ընթացքում՝ քննվող ժամանակի շերտերից և դամբարանադաշտից<sup>23</sup>: Այդ խեցեղենը, հեաագա

դարերի շինարարական դործունեության հետևանքով, հաճախ խառնված լինելով հուշարձանի վերին շերտերի հետ, երևան է դալիս նաև միջնադարյան շերտերում՝ հորերում, նկուղներում, շինությունների հիմքերում: Խեցեղենի ամրողական նմուշները ստկավ են, սակայն պահպանված ընկոթների շնորհիվ վերտկանդնվում են դրեթև ընդհանր անոթների ձևերը: Եվ խեցեղենի ռուսումնասիրությունը կատարվում է վերջինիս ամենաէական «ստկանիշների» ձևի և զարգացումների վերլուծության շնորհիվ:

Կաբառները ունեն տափակ նստուկ, հաստաղատ կողերով թուուցիկ իրան, կարճ վիղ և դուրս ցցված կամ լայն փոված դանգվածեղ շրթով պսակ (տախտ. XIV, 5, տախտ. XVII, 6, տախտ. XVIII, 2, 4): Սրանք ձևով բավական վարպետորեն սլատրատուված, բայց ընդհանուր առմամբ կոպիտ անոթներ են (չափերն են. բարձր. 110—120 սմ, բերանի բացվածքի տր. 50 սմ, փորի տր. 80—90 սմ, նստուկի տր. 15 սմ, իսկ կողի հաստ. 2—2,5 սմ): Բացակայում է արտաքին որևէ մշակում, որևէ զարդ, բացառությամբ երկու կարասների, որոնցից մեկի շուրթը պատած է փորագիր ատամնաձև, իսկ մյուսի իրտնի ռուսումնասր ընդհանր երկու նեղ ուուցիկ զարգացողներով: Այս անոթների մի մասը օդադարձվել է որպես թաղման կարաս: Եթե դատենք թաղման կտրասների հաճախ անմշակ հողադույն կամ դունտափ (նարնջագույն, դեղնավուն) արտաքինից և պատերի վրա ներսից պահպանված հետքերից, ապա նշանակված, որ սրանք լայնորեն կիրառվել են նաև կենցաղում: Հաստափոր իրան, բայց փոքր նստուկ ունենալու պատճառով, հավանաբար, հարմար են նկատվել դրանք կիրով չափ թաղել դեռևս մեջ: Այդ յուրահատուկ կիրառման պատճառով էլ, ըստ երևույթի, հիշյալ անոթների արտաքին մշակման և նկարազարդման սահմանափակումն չի եղել:

Փոված, լայն շրթով միջին տարողությամբ կարասների մի մասը գունազարդված է (տախտ. XV, 3, 7, 13, 17, տախտ. XVII, 1, 2): Այս անոթների բաց նարնջագույն ուուցիկ իրանը, վղից անմիջապես ներքև զարգացավ է միմյանց հաջորդող նեղ ժապավենների, հղերված՝ վառ կարմիր և սև ցանցկեն, սլուքաձև, եռանկյունաձև, ալիքաձև զարգացողներով: Բեկորներից մեկի բաց նարնջագույն մակերեսի վրա կարմիր և սև միմյանց զուգահեռ, ուղիղ և ալիքաձև ժապավենների միջև նկարված է ըուսազարդ, մյուսի վարդագույն մակերեսի վրա՝ բաց շաղանակագույն ոճավորված ծառ՝ կարմիր անոթներով (տախտ. XV, 1, 14): Նման զարգացողներ պատկերված են Արմավիրի, Գաննիի և Արտաշատի գունազարդ խեցեղենի վրա: Հելլենիսական ժամանակի գունազարդ, բայց հսկայական չափերի կարասներ հայանարեղվել են Սամաղլուում<sup>25</sup> (Վրաստան):

Գլխի գունազարդ կարասներից մեկի շրթի բեկորի վրա պահպանվել է ցլադուխ կանթ (տախտ. XVI, 1, տախտ. XVII, 1): Յլի դուխ (երկ. 7 սմ) օժտված է երկու կողմից դուրս ցցված ալքերով և փոքրիկ թմրիկներով (ոճավորված եղջյուրներ), թթի վրտ առկա են կնճռաձև ակոսներ, իսկ բերտը արտահայտված է ուղիղ գծով: Ուշագրություն արժանի է ցլի ճակատի դե-

դին գույնի սեպածն նշանը. որը աղերսվում է Դվինում պահվող, շափերով ավելի փոքր (4,5×4 սմ) ցլագուլի կանթի նման նշանին (տախա. XVI, 2, տախտ. XVII, 3):

Յլագուլի կանթերի ճակատին առկա դեղին գույնի սեպածն նշանները հիշեցնում են Հայոց մայր դիցուհի Անահիտի մեհյանի սրբազան ցլերին, որոնց մասին Պլուտարքոսը գրում է. «Այս եզներին օգտագործում են միայն զոհաբերության համար, իսկ ուրիշ ժամանակ դրանք ազատ արածում են դիցուհու ջահր խարանած նրանց (ճակատներին)<sup>26</sup>»: Այս տեղեկությունը վերարերում է Եկեղյաց գավառի Երեղ ավանում դանվող նշանավոր անահտական տաճարին: Յուր, որ բնական արգասավորության անսպառ աղբյուր էր, կապված լուսնի կենսատու խոնավության աղբյուրի հետ, ապահովելով երկրային խոնավությունն ու պտղաբերությունը, դրանցով իսկ սերտորեն առնչվում էր մայրաստվածուհու պաշտամունքի հետ: Պաշտամունքային այս կապակցությունը մշտապես այնքան հզոր է եղել, որ մինչև XIX դ. վերջը Քաջբերունյաց խաթուն Տիրամոր վանքում պահվել են «տիրամոր նշանով», այսինքն՝ ճակատի վրա սպիտակ խալ ունեցող եղներ և կովեր<sup>27</sup>: Եղը կամ ցուր, շնորհիվ իր հզոր տնտեսական նշանակության, դեռևս նախնադարից սկսած կապված լինելով հատկապես երկրագործական արգասավորության հետ, յուրաքանչյուր երկրագործի օջախի հովանավորյալ պահպանիչն էր, նրան հաց ու բերքառասություն պարգևողը, ուստի և հաճախ տների ճակատից կախում էին եղան գանդ<sup>28</sup>:

Յլի պաշտամունքը խոր արմատներ է ունեցել նաև այստեղ՝ Դվինում: Վերջինս որպես երկրագործական արգասավորության և պտղաբերության խորհրդանշան հանդես է գալիս նաև մ.թ.ա. I հաղարամյուկի սկզբի պաշտամունքային համալիրում՝ սրբազան զոհաբանների և ցլադուխներով ղարդարված մի շարք ծիսական խեցանոթների վրա<sup>29</sup>: Այսպիսով, ցլակերպ կանթերով օժաված կարասների առկայությունը անտիկ Դվինում վկայում է աեղի երկրագործ ժողովրդի հավատալիքների հետ առնչվող, հիշյալ ավանդական պաշտամունքի մասին:

Վերը նկարագրված կարասների խումբը սերտորեն աղերսվում է Արմավյրի, Արտաշատի, Գառնիի, Օշականի հելլենիստական ժամանակի նման կարասներին<sup>30</sup>, որոնք նույնպես օգտագործվել են և՛ տնտեսության մեջ կենցաղային տարբեր նպատակներով, և՛ ծառայել որպես թաղման անոթներ:

Կճուճների մեծադույն մասը տափակ ճարթ հստակով, ուռուցիկ իրանով, կարճ վզով, դուրս հակված նուրբ կամ հասաաշուրթ պսակով անոթներ են (րևրանի բացվածքի տր. 16—25—30 սմ): Երկկանթանի կճուճների ուռուցիկ իրանը կանթի տակից (այսինքն՝ ուսամասից) դեպի վեր նկատելի նեղանում է (տախտ. XXII, 9): Առկա են նաև երկուրավուն, ձգված իրանով, երկար նեղացող վզով, ուղիղ կտրված շրթով կճուճներ (տախտ. XXII, 5):

Սրանք հիմնականում հարդարված են միագույն՝ դարչնագույն, շագանակագույն, մոխրագույն գույներով: Կճուճներից մեկի վիզը և դուրս հակ-

ված շուրթը բոլորված են ակոսագծերով (տախտ. XVII, 5), մյուսը գունա-  
դարգված է՝ վարգագոյն ուսամասի վրա կարմիր գույնով, նկարված է  
եղջերավոր կենգանու ոճավորված պատկեր (տախտ. XIV, 7, տախտ. XXII,  
8):

Առսունձանում են գնդաձև իրանով, դուրս հակված նուրբ շուրթով պու-  
լիկները (րերանի բացվածքի տր. 7—12 սմ) (տախտ. XXII, 2, 6, 7): Սրանք  
ղեղին կամ կարմիր գույնիով են հարգարված: Դեղնավուն անոթներից մե-  
կի վերնամասը լրացուցիչ երանգավորված է կարմրաշագանակագույն վրձնա-  
հարվածներով (տախտ. XXII, 7):

Կարասային թաղումից հայտնություններով են նաև ձեռածիփ, գորշ գույնի  
պուլիկներ (տախտ. XIV, 6, 8), որոնցից ունկանման կանթերով հնաոճ պու-  
լիկը անգամ չափերով աղերովում է Գառնիի նույնպես մ.թ.ա. II—I դդ. կա-  
րասային թաղումից ի հայտ եկած, բայց կարմիր անգորով պատված, ա-  
նոթին<sup>31</sup>,

Տնտեսության մեջ և կենցաղում ամենալայն կիրառություն ստացած  
բնավոր անոթները, դարձր շարունակ տիպաբանորեն պահպանողակտն լո-  
նելով հանգրծ, խնչպես տեսնում ենք, հելլենիստական դարաշրջանում ներ-  
կայացվում են ժամանակին ընդորշ ձևավորմամբ և արտաքին հարդարմամբ  
Օլոնտայաները ունեն հարթ նստուկ, գնգաձև իրան, հմտորեն ձևավոր-  
ված երեքնուկաձև պսակ և շրթից անմիջապես ձգվող երկայնակի ակսս-  
ված կանթ (տախտ. XX, 1): Սրանք ներկված են գեղնավուն կամ մոխրա-  
գույն և խնամքով կոկված են:

Քեև ուրարտական խեցեղենի մեջ առաջնակարգ տեղերից մեկը գրա-  
վում են նման սափորներ<sup>32</sup>, այսուհանգրծ ուսումնասիրողները հակված են  
տեսնելու նաև հունական նախաալպի աղբեցությունը Հայաստանի հելլենիս-  
տական ժամանակի օլոնտայաների պսակների ձևավորման մեջ<sup>33</sup>: Ուստի  
քննվող ձեռն սափորների կենսունակությունը բացատրվում է ինչպես տե-  
ղական խոր արմատներով, այնպես էլ ժամանակի և հունական աշխարհի  
աղբեցությամբ:

Հետաքրքիր է հարթ նստուկով տանձաձև իրանով, բարձր ներձկված  
վղով, պոր պսակով և շեղված աղեղնաձև կանթով սափորը (չտփերն են.  
րերանի բացվածքի տր. 10 սմ, նստուկի տր. 18 սմ, բարձր. 36 սմ), (տախտ.  
XX, 2): Անոթը գարշնադույն է՝ նկատելի վարդագույն երանգով, իսկ շուր-  
թը և վղամասը բոլորված են նեղ ակոսագծերով:

Սյս սափորը իր նախատիպը գտնում է Հայաստանի մ.թ.ա. VI—IV դդ.  
խեցեգործական արտագրանքի մեջ, վերապրուկային ձևով պահպանվելով  
նաև Արմավիրի, Արտաշատի, Դվինի հելլենիստական ժամանակի խեցտ-  
նոթների շարքում<sup>34</sup>:

Ներկայացված են ուռուցիկ իրանով, լայնաբերան անոթներ՝ եռաթերթա-  
ձև շրթով ձևավորված ծորակով (րերանի բացվածքի տր. 10—19—26 սմ),  
(տախտ. XVI, 3, տախտ. XX, 3, 5): Այս անոթները հիմնականում ներկված  
են կարմիր գույնով և փայլեցված դեղնավուն, դարչնագույն, նարնջագույն

երանդներով: Մեկ օրինակ գունազարդված է, ընդհանուր մակերեսը վարդագույն է, իսկ բերանի և ծորակի շուրթը երիզված վառ կարմիր, նեղ ժապավենով (տախտ. XV, 2, 4—6, 8—12): Նման ժապավեններով են երիզված նաև կարմիր և սե գույներով անոթի վրա նկարված՝ ցանցկեն և եռանկյունաղարդ միմյանց հաջորդող զարդագոտիները: Վերջիններս առնչվում են Արմավիրի նույնատիպ խեցանոթի զարգապատկերներին<sup>35</sup>,

Առկա է նաև ներս կորացող շրթով փոքր թաս, որը պսակի և իրանի միացման մասում ունի գլանաձև ծորակ (բերանի տր. 7 սմ, բարձր. 4 սմ): Թասը բաց գալանագույն է, շուրթը և պսակը հարդարված կարմիր գույնի վրձնաբծերով (տախտ. XX, 4):

Հայաստանի անտիկ զարաշրջանի հուշարձաններում (Արմավիր, Գառնի, Արտաշատ, Նոր Արմավիր, Կարճազբլուր, Մոխրարլուր, Զրառատ) երկայացված են քննվող անոթների՝ կճուճ, սափոր, քրեղան, թեյնիկ հիշեցնող բազմաթիվ տարատեսակներ, օտարաժան ուղղահայաց կամ հորիզոնական դիրքով ամրացված երեքնուկաձև, գլանաձև կամ ուղղակի ձգված և կախ ընկած ծորակով<sup>36</sup>, թեև ժամանակագրական առումով, այս անոթները գործածություն մեջ են մտնում 5—4-րդ դդ., բայց ձևավորվում են (հատկապես երեքնուկաձև ծորակները), հարդարվում գունային տարբեր երանգներով և պսակեղարդվում հելլենիստական զարաշրջանում:

Տափաշշերք սևավառակաձև ուռուցիկ իրանով, կարճ վզով, բոլորակ պսակով, դուրս ցցված կոորսմուն կողերի վրա երկու փոքրիկ կանթերով անոթներ են (չափերն են՝ 28×22—38×27—47×44 սմ), (տախտ. XIII, 1—2): Ուս Դվինի խեցեղենի առավել բնորոշ և բաղմաքանակ ձևն է:

Տափաշշերքի բաց գույնի (սպիտակ, դեղին, վարդագույն, նարնջագույն, դարչնագույն, մոխրագույն), խնամքով կոկված, փայլեցված մակերեսը նկարադարձված է վառ և մոգ (վարդագույն, կարմիր, բալի երանգով, նարնջագույն, գարնագույն, շագանակագույն, սև) գույների տարբեր լայնութային համակենտրոն շրջանագծերով: Սրանք անոթի կենտրոնում կաղմուճ են խաշած և կամ ճառագայթաձև զարդապատկերներ: Առկա են նաև այս նույն հարդարման, գունային նման կոլորիտով պատկերված, առավել բարդ տարրերակներ: Այստեղ, միմյանց հաջորդող համակենտրոն շրջանագոտիների միջև, նկարված են ալիքաձև, զիգզագաձև, ծաղկաշղթայաձև, շեղանկյունաձև և ցանցկեն զարդապատկերներ (տախտ. XIII, 5—6): Իսկ մի քանի բեկորների բեղնավուն մակերեսի վրա, դարչնագույն և շագանակագույն կամարների միջև, նույն գույններով պատկերված են թռչուններ (տախտ. XIII, 4): Այս թռչնաղարդ գոտին բոլորել է տափաշշի կենտրոնական մասը, որին հաջորգել են արգեն վերը հիշատակված ալիքաձև, ծաղկաշղթայաձև և նման այլ զարդագոտիներ: Հայտնաբերվել են բեկորներ՝ պարող մարդկանց հիշեցնող ոճավորված պատկերաղարդումով:

Դվինի տափաշշերքը ձևաբանորեն, նկարաղարդման ընդհանուր բնույթով, և վերջապես ժամանակագրորեն աղերսվում են Հայաստանի անխտիր բոլոր հելլենիստական բնակավայրերից, նաև վերջինիս գոյությունը վկայող

չերտերից ե դամբարաններ՝ ց հայտնաբերված և մ.թ.ա. II—I դդ. խեցեղև-  
նի մեջ նույնպես առաջատար տեղ գրավող նման անոթներին<sup>37</sup>։

Դվինի դամբարանադաշտում, կարասային թաղման մեջ հայտնաբեր-  
վել է զնդաձև տափաշիշ (չափերն են՝ 26×33 սմ) (տախտ. XIII, 3)։ Անոթի  
կարմիր դույնով ներկված իրանի վրա եկատեի են վրձնահարվածների և թե-  
թեակի փայլեցման հետքեր։

Դիտոգոթյունները ցույց են տալիս, որ Հայաստանում հայտնաբերված  
տափաշիշերը՝ երկու կամ մեկ կողմից սեղմված սկավառակատիպ ուռուցիկ  
իրանի վերոհիշյալ ընդունված ձևը միայն մ.թ.ա. I դ. (հատկապես վերջում)  
կորցնում ե դատնում են զնդաձև<sup>38</sup>, Բացի այս, Դվինի զնդաձև տափաշիշը իր  
արաքին մշակմամբ, կարմիր ներկով, անփուլի, թեթեակի փայլեցման  
հետքերով, ոչ հարթ մակերեսով և վերջապես նկարադարձման րացակայու-  
թյամբ հարում է մ.թ.ա. I դ. իսցեղենին, ուստի և թվագրվում ոչ վաղ քան  
մ.թ.ա. I դ. երկրորդ կեսով։ Ոչ հելլենիստական ժամանակաշրջանով են  
թվագրվում նաև Արմավիր, Արտաշատ, Սրաբս հնավայրերից հայտնաբեր-  
ված զնդաձև ջրամանները<sup>39</sup>։

Տափաշիշերը, հնագույն արևելյան ծագում ունեցող այս անոթները, ու-  
րոնք հայանի էին դեռևս մ.թ.ա. III հազարամյակից՝ որոշ ընդհատումի-  
նով, սակայն պահպանելով հիմնականում իրենց ձևը, կենցաղավարեցին և  
ամենալայն ասարածումը դառան հատկապես հելլենիստական դարաշրջանում,  
գրավելով Անդրկովկասը, Հյուսիս-մերձսևծովյան ընկավայրերը, Փոքր  
Ասիան, Միջին Ասիան և Առաջավոր Ասիան<sup>40</sup>։ Տափաշիշերը այս հսկայա-  
կան տարածքում երևան եկան րազմատեսակ ասրբերակներով՝ միակող-  
մանի կամ երկկողմանի ուռուցիկ, սկավառակաձև նույնիսկ ասփակ իրա-  
նով. առանց դարգապատկերների և դարձարված գունադարձումով կամ  
ակոսադձերով։

Հելլենիստական կերպարանքով Դվինի տափաշիշերը՝ ծագումնաբանու-  
րեն, ձևաբանորեն, հաճախ նաև նկարադարձումով հարում են հելլենիստա-  
կան աշխարհի վերոհիշյալ անոթներին։ Այսպիսով, Հայաստանի, այդ թվում  
նաև Դվինի տափաշիշերը պե՛ս է համարել հելլենիստական երկրների  
նյութական ամենասերտ առնչությունների և ընդհանրությունների արդասիք։

Թաս-բեղաճեղեքի տափակ, հարթ նստուկից աստիճանարար լայնացող  
կողերը ընդգծված անցումով կաղմում են ներձկված վիղ, դուրս հակված՝  
կլորափուն կամ թեթությամբ կտրված շո-րթ (չափերն են. րերանի րացված-  
քի ար. 19—30 սմ, նստուկի ար. 7—10 սմ, վղի բարձր. 2,5—4 սմ, խոր-  
6—7 սմ) (աախա. XIV, 3, 4, տախա. XXI, 1, 3, տախա. XXII, 4)։ Սրանք  
ներկայացված են ժամանակին ընտրող դունադարձմամբ. իրանը՝ դեղին, դարչ-  
նագույն, նարնջագույն, վարդագույն, իսկ ներձկված վիղն ու շուրթը հարձար-  
ված են եղել այլ ցտյտուն դույներով՝ կտրմիր, դարչնագույն, մուգ շաղանա-  
կագույն։

Առկա են նաև նման ուրվապատկերներով, րայց վերնամասի կտրուկ  
ներձկումով և դուրս ցցված, փոված, լայն շուրթով թասեր (աախա. XXI,  
4)։ Սրանց՝ դունային վառ երանդներով (դեղին, դարչնագույն, նարնջա-

դույն, կարմիր) հարգարված շուրթերի վրա պատկերված են անրեններ կամ ցանցաղարգ գոտիներ:

Կարճ վզամառով, կլորավուն շրթով խոր թոսերի՝ դեղնավուն, դարչնագույն կամ նարնջագույն, ներքին մակերեսի վրա նկարված է վառ կարմիր գույնի խաչաղարղ (տախտ. XVIII, 1): Ձևով դրեթե նման վառ դարչնագույն, փայլուն թափ, ուշիղ կարված, հարթ շուրթի վրա պատկերված են ռաց և մուգ շագանակագույն գծիկներ (տախտ. XXI, 8):

Ներկայացված են նաև ներս կորացող շրթով թասեր (շափերն են. րե-րանի րացվածքի տր. 10—18 սմ, խոր. 1,5—1 սմ), բրոնզից մեկի վրա պահպանվել են թեթևակի ձևավորված սոք-նստուկի հետքեր: Այս թասերը դեղնավուն, գարչնագույն կամ նարնջագույն են, իսկ ներքուստ և վերնամասը արտաքուստ հարգարված վառ կարմիր, շագանակագույն (տախտ. XIV, 1—2, տախտ. XVII, 3, տախտ. XIX, 4, տախտ. XXII, 3):

Խոր ափսե է հիշեցնում հարթ, համեմատաբար նեղ հատակով, շեղ՝ թեթևակի կորացող կողերով, փոված, լայն պսակով ամանը (տախտ. XIX, 5): Սա արտաքուստ վարգագույն է, ներքուստ՝ գարչնագույն, փոված պսակը հարգարված է կարմիր գույնի շեղանկյունիներ: Գ կաղմված դարդագոտիով: Արմավրի հելլենիստական ժամանակի նման անոթների վրա նույնիսկ կրկրնվում է հիշյալ դարգագոտին (երբեմն ցանցկեն)<sup>41</sup>:

Ուշագրավ է ծանծաղ պնակի՝ թանձր կարմիր գույնի ներկով պատված շրթնամասի բեկորը. ներքին՝ ռաց գարչնագույն մակերեսի վրա վառ նարնջագույն և սև գույնի կարված ծաղիկների և այլ ըուսական ոճի դարգապատկերներով (տախտ. XXI, 7):

Թաս-քրեղանների ներկայացված խումրը անցնում է ավանդական-էվոլյուցիոն դարգացման հետաքրքիր ուղի: Հարթ նստուկով, ներձկված վզով, տարածե վերնամասերով թաս-քրեղանները՝ սկսած ուրարտական ժամանակներից ձևարանորեն էական փոփոխությունների շին ենթարկվում: Նման անոթներ առատորեն հայտնաբերվում են վաղ հայկական և հելլենիստական ժամանակի հռչարձաններում<sup>42</sup>: Եվ թեպետ ժառանգական և օրգանական կապ է ստեղծվում տարածամանակյա այս անոթների միջև, այսուհանգերձ սրանցից յուրաքանչյուրը ներկայացվում է արդեն իր գարաշրջանին բնորոշ հարդարմամբ: Նկատելի են գտնում նաև որոշ ձևարանական փոփոխություններ: Այսպես՝ հարթ նստուկով թասերը ուշ հելլենիստական ժամանակաշրջանում օժտվում են օղակաձև սոք-նստուկով (Դվին, Գառնի, Արտաշատ, Կարճաղբյուր)<sup>43</sup>: Թասերի մի մասն էլ, ընդհակառակը, պահպանում է արխաիկ գծեր (փայլուն մակերես, ուռուցիկ բոլորագծերով կամ ակոսագծերով վերնամաս և այլն):

Դվինի թաս-քրեղանները իրենց գունաղարգմամբ և բուն միջավայրում հայտնաբերվելու հանգամանքով իսկ լրացնում են Հայաստանի հելլենիստական ժամանակի նման անոթների հավաքածուն:

Հայնարհրան, խոր տաշտերի փոքր նստուկից աստիճանաբար լայնացող կողերը վերնամասում կաղմում են ներձկված ակոսագոտի և փոխարկ-

վում կլորավուն շրթի (չափերն են. բերանի բացվածքի տր. 44—52 սմ, նստուկի տր. 15—15,5 սմ, բարձր. 18—19 սմ) (տախտ. XVI, 5, տախտ. XIX, 2—3): Վերջինիս հարուս են նման տաշտերի, բայց ղանգվածեղ շրթնամասեր, որոնց հաստ և լայն շրթի վրա առկա են եղունգաղարղ կամ էլ ակոսագծեր: Տաշտերը միագույն են՝ դեղնավուն, սարնչագույն՝ թեթիակի փայլեցումով:

Ներկայացված է նաև դուրս ցցված շրթով, ուղիղ, հասա պատերով, խոր տաշա, որի շրթի տակ, հորիզոնական դիրքով, պահպանվել է ակոսված, փոքր կանթը (պահպանված բեկորի երկար. 70 սմ) (տախտ. XVI, 4, տախտ. XIX, 1): Բաց դարչնագույն ներկով պատված անոթի մակերեսը հարթ է և լավ կոկված:

Վերը նկարագրված տաշտերը լայն կիրառություն են գտել տնտեսության մեջ, օգտագործվելով կաթի և խմորի համար: Այս անոթները գրավում են ժամանակագրական լայն շրջանակներ: Սրանց նախատիպերը առկա են ուրարտական խեցեղենում<sup>44</sup>: Արաաշատի մ.թ. I—III դդ. և Դվինի միջնագարյան խեցեղենը ևս ներկայացնում է կաթնամանիների բազմազան տարրերագներ<sup>45</sup>: Ասկայն քննվող տաշտերը ձևով և արտաքին մշակումով աղերսվում են Հայաստանի հելլենիստական գարաշրջանի նմանօրինակ ամաններին՝ գտնված Արմավիրում և Արտաշատում<sup>46</sup>: Թեպետ հիշյալ դարաշրջանի Հյուսիս-մերձսևծովյան բնակավայրերի նման տաշտերը ունեն շրթի և ակոսագոտու ամենատարբեր ձևավորումներ, այգուհանգերձ Դվինի տաշտերն իրենց ընդհանուր տեսքով աղերսվում են նաև գրանց<sup>47</sup>: Բացի այս, Դվինի նկարագրված տաշտերից երկուսով ծածկված էին մ.թ.ա. II—I դդ. թվագրվող թաղման կարասները:

Ըմպանակներ (փիալաներ) նուրբ շրթով բարձր պսակները շեշտակի և ընգծված անցումով միանում են կիսագնդաձև իրանին (չափերն են. բերանի բացվածքի տր. 6—19 սմ, պսակի բարձր. 2,5—5 սմ) (տախտ. XV, 15—16, տախտ. XXI, 2, 6): Այս անոթները հիմնականում նրբախլեցի են, լավ թրծված, կոկված և գունաղարգված: Ըմպանակների ընդհանուր ֆոնը՝ գեղնավուն, գարչնագույն, նարնչագույն, մարգագույն է, իսկ ավելի վառ գույնի պսակների վրա պատկերված են՝ կարմիր, սև, մուգ շագանակագույն ցանցազարգ շեղանկյունիներ, դիզազաձև. ալիքաձև զարդագոտիներ: Իրբեմն էլ փիալաները պսակը և իրանի միացման տեղում բոլորված են վառ գույնի ժապավենով:

Փիալաները թե՛ մետաղագործության և թե՛ խեցեղեղեղության բնագավառներում հայտնի են ուրարտական (Կարմիր բլուր, Արինբերգ, Արգիշտի-խինիլի)<sup>48</sup>, Աքեմենյան Իրանի (Պերսեպոլիս)<sup>49</sup>, մ.թ.ա. VI—IV դդ. և հելլենիստական Հայաստանի հուշարձաններում (Ջրառատ, Բերդ, Նորաշեն, Ջուզևան, Աթարբեկյան, Արգիշտի-խինիլի, Կարնաղբյուր, Հացավան, Օշական, Գառնի, Արմավիր, Արտաշատ)<sup>50</sup>: Անտիկ գարաշրջանում, Աղվանքը և Վրաստանը ևս անմասն չեն մնացել փիալաների արտադրությունից<sup>51</sup>:

Այսպիսով, անոթների այս տիպը ծագման հին արևելյան ակունքներով

Հանգիւրծ, իսկ ստ կենսունակ է իր արտագրական ավանգույթով: Վերջիններին գոյատևման շնորհիվ, Հայաստանի հելլենիստական դարաշրջանի մշակույթի մեջ կրկին հանդես է գալիս արեւելյան-ավանդական տարրը, սակայն արգեն իր ժամանակին ընդդէմ ձեւավորմամբ:

Դվինում հայտնաբերված ըմպանակները հարելով հելլենիստական ժամանակի նման անոթներին, իրենց ամենասեւըտ աղերսները գտնում են Օշականում, Գառնիում, Արմավիրում և, հակասելու, Արտաշատում, որտեղ զիզ-զագածե, ալիքածե, եռանկյունաղարդ գոտիներով հարդարված փխալաները հայտնաբերվում են մ.թ.ա. II—I գդ. պատկանող շերտերից<sup>52</sup>:

Սկսած Վեր բարձրացող կարճ կողերով, թեթևակի ներս հակված շերտով, հարթ, լայն հատակի վրա՝ օղակավոր ոտք-նստուկով ամառ (չափերն են. բերանի ընդհանուր տր. 32 սմ, նստուկի տր. 12 սմ, բարձր. 2 սմ, ոտք-նստուկի բարձր. 5 սմ) (ախա. XVI, 6, տախո. XXII, 1): Այն պատրաստված է գուրգով՝ լավ հունցված, բարձրորակ կավից: Ակուտեղը հիմնականում ընդ ջագանակագույն է. արտաքուստ՝ կարմիր, իսկ ներքուստ՝ գարշնագույն երանգներով փայլեցված: Հատակի վրա պատկերված են կարմիր համակենտրոն ժապավեններ:

Նման սկուտեղներ կան Գառնիի ամրոցում հայտնաբերված առաջին գարբի խեցանոթների հավաքածուի մեջ, սակայն վերջիններս միագույն են՝ կարմիր<sup>53</sup>: Արտաշատի 8-րդ բլթի՝ II շինարարական ջերտից, նաև գամբարանագաղտերից հայտնաբերվել են Դվինի ամանին աղերսով ու՝ 35—36 սմ բերանի ընդհանուր տրամագծով, 3—4 սմ բարձրությամբ, կարմիր և գարշնագույն անգորներով երեսպատված, օղակավոր նստուկով սկուտեղներ: Սրանց ներսից, երբեմն էլ դրսից հատակի վրա սեղմումով արված են երեքից վեց շրջանաձև ակոսներ, ի տարբերություն Դվինի սկուտեղի գունազարգամանը: Արտաշատի այս անոթները թվագրվում են մ.թ. I—II գդ.<sup>54</sup>: Մինչդեռ Շիրակավանում սրանք հայտնաբերվում են մ.թ.ա. I—մ.թ. I գդ. շերտից՝ գունաղարդ խեցեղենի հետ: Ի դեպ նման սկուտեղները հայտնաբերված Պանտիկապեյում, հարելով միջերկրածովյան օրինակներին, ժամանակագրորեն շեն անցնում մեր թվականության սահմանները<sup>55</sup>:

Դվինի սկուտեղը անտիկ աշխարհի նմանատիպ անոթների տեղական մի տարրերակ է: Վերջինս հելլենիստական ժամանակին ընդդէմ գունաղարդմամբ, հատկապես համակենտրոն շրջանագծերով և արտաքին հարդարմամբ, ամենայն հավանականությամբ, թվագրվում է հին և նոր գարաշրջանների սահմանագծով<sup>56</sup>:

Զիթաճագները թասանման, հարթ նստուկով, ուղիղ կողերով, պատույզի համար նեղացող քթիկով, դարչնագույն՝ նարնջագույն երանգով, մրապատ անոթներ են (ախա. XVII, 4):

Թասանման ճրագները իրենց պարղագույն ձևի և կիրառական մեծ նշանակության շնորհիվ հարսուտում են նաև միջնադարում: Այսպես, Դվինում ներկայացված են նման ճրագների նաև միջնադարյան օրինակները՝ օժաված փոքր պոչուկով կամ ուրարտական ճրագների նման միջնորմով<sup>57</sup>:

Առանձնակի ուշադրության է արժանի մաքուր, միատարր, կարմրագույն

կավից պատրաստված, արտաքուստ սև լաքանման քսուկով պատված, բարձրորակ թրծուսով, նրբախեցի սրվակի բեկորը: Սա թե՛ որակապես և թե՛ արաարին հարդարաւոր առանձնանում է Դվրնի տեղական խեցեղենից և սերտորեն աղերսվում Արմավիրում, Արտաշատում հայտնաբերվող, հավանարար, փոքրասիական հելլենիստական նկարոններից ներմուծված, անոթների նման նրբախեցի բեկորներին<sup>58</sup>:

Ինչպես տեսանք, Դվրնի հելլենիստական ժամանակի խեցեղենի հավաքածուն ներկայացված է բազմաթիվ գունազարգ նմուշներով: Վերջիններս ևրեսապատված են տարրեր, բաց դույնի ներկերով, իսկ պատկերազարդված և փայլեցված՝ որպես կանոն մուգ և վառ գույներով: Դունազարգ խեցանոթների գարգապակերները ըստ իրենց ընույթի կարելի է դասակարգել երեք հիմնական խմբերի՝ երկրաչափական, ռուսական և կենդանական:

Երկրաչափական բնույթի զարդապատկերներ.

ա) ուղիղ գոտիներ՝ միմյանց ղուգահեռ կամ հորիզոնական, անկյուններ կազմող, և որպես համակենարոն շրջանագծեր:

բ) ալիքաձև, ղիգղագաձև, սլաքաձև, կիսաշրջանաձև, եռանկյունաձև ճառագայթաձև զարգագոտիներ,

գ) իրար մեջ գծված՝ եռանկյունիներ, կիսաշրջանակներ, ցանցազարգ շիղանկյունիներ, հորիզոնական գոտիների միջև պատկերված ցանցկեն կամ եռանկյունազարգեր և այլն:

Քուսական բնույթի զարդապատկերներ.

ա) ծաղիկներ և այլ ռուսական զարգեր,

բ) ծառ հիշեցնող ոճավորված պատկերներ:

գ) ռուսական զարգեր՝ ուղիղ և ալիքաձև գոտիների համադրությամբ: Կենդանական բնույթի զարդապատկերներ.

ա) խոշոր եղջերավոր կենդանու ոճավորված պատկերներ,

բ) թռչունների պատկերներ՝ երկրաչափական ընույթի ուղիղ գծերով կազմված կամարների, ուղիղ և ալիքաձև գոտիների համագրությամբ:

Այսպիսով, ուսումնասիրվող հավաքածուին ընորոշ են հատկապես երկրաչափական բնույթի զարգապատկերները, ավելի ստույգ՝ ալիքաձև գոտին, որը հանդես է գալիս խեցանոթների վրա պարզ և բարգ տարբերակներով՝ թե՛ առանձին և թե՛ այլ երկրաչափական, ռուսական, կենդանական բնույթի զարգապատկերների համագրությամբ:

Վերոհիշյալ ռազմարնույթ զարգապատկերները կատարելիս օգտագործված է բազմերանգ ներկապնակ.

1. սև՝ սև, մոխրագույն,

2. սպիտակ,

3. կարմիր՝ կարմիր, բալագույն, վարգազույն,

4. դեղին՝ գեղին, նարնջագույն,

5. շագանակագույն՝ շագանակագույն, սրճագույն, դարչնագույն:

Դիտողությունները ցույց են տալիս, որ խեցանոթների վրա հանդես են

գալիս ինչպես մի գունախումբի՝ բաց և մուգ երանգները ներդաշնակ (դուր- նագույնի վրա՝ շագանակագույն, սրճագույն, մոխրագույնի վրա՝ սև, վար- դագույնի վրա՝ կարմիր, բալագույն, դեզնավունի վրա՝ նարնջագույն)։ այն- պես էլ տարբեր խմբերի գույնային երանգները՝ իրարամերժ համադրությամբ (սպիտակի վրա սև, կարմիր, սրճագույն, նարնջագույնի վրա՝ սև, կարմիր, շագանակագույն, մոխրագույնի վրա՝ մուգ շագանակագույն)։

Պարզվում է իշխողը նարնջագույնի վրա՝ սև և կարմիր գույների իրա- րամերժ համադրություն է։

Քննվող խեցանոթների ձևի և զարդապատկերի վերլուծությունը մաշ- նանշում է, որ յուրաքանչյուր զարդապատկեր հանդես է գալիս անոթի վրա ինչպես առանձին տարր կամ մոտիվ, այնպես էլ հաճախ զուգորդ- վելով միմյանց ստեղծում հորինվածքային փոխադարձ կապ, արժեքավո- րելով անոթը գեղարվեստական տեսանկյունից։ Այստե՛հանգերձ, յուրաքան- չյուր զարդապատկեր, անկախ իր բնույթից, ավարտուն հորինվածքային լու- ծում ստանում է անոթի այն մասում, որը ձևարանական տեսակետից ընդ- գծված է։ այսպես՝ տափաշշերի, կարասների ուռուցիկ իրանի կենտրոնում, ըմպանակների բարձր պսակների, թաս-քրեզանների շրթնամասերի վրա և այլն։ Այսպիսով առկա է անմիջական կապ անոթի ձևի և զարդապատկերի միջև։ Եթե անոթի ավյալ ձևի շնորհիվ հնչում է զարգագոտին, ապա ձևն իր հերթին ընդգծվում է վերջինիս միջոցով, որտեղ մեծ գեր է կաարում նաև ճիշտ ընտրված գունային գամման։ Ուստի զարդապատկերի հորին- վածքային լուծումները ունեն ոչ միայն գեղարվեստական նպատակ, այլև ընդգծում են անոթի ձևը, իսկ վերջինս իր հերթին բացահայտում է նաև անոթի կիրառական նշանակությունը։ Յուրաքանչյուր խեցանոթ հանդես է գալիս ձևի, զարդապատկերի, գույների և կիրառական նշանակության տես- քակտելի միասնության մեջ։

Եվ ինչպես վերը ներկայացվեց, Դվինի խեցանոթները հենց այդ միաս- նության մեջ ազդեցվում են Հայաստանի հելլենիստական դարաշրջ- ղանի խեցեղենին, կազմելով վերջինիս օրգանական մասը, որը և հնարու- վորություն է ընձեռում երևան բերել ընդհանուր գծեր նաև Հելլենիստական աշխարհի նման գունազարդ խեցեղենի հետ։ Այսպես, Դվինի հավաքածուին այնքան բնորոշ երկրաչափական բնույթի զարդապատկերները (նեղ և լայն գոտիները, համակենարոն շրջանագծերը, ալիքաձև ժապավենները) երևան, են գալիս նաև Ուլլիսցիխում (Վրաստան) և նրա շրջակայքից, Ագրեջա նում՝ Խանլարից և Միլի տափասանի բլուրներից, Հյուսիս-մերձսևծովյան բնակավայրերից, Սիրիայի՝ Անախթե, Կիլիկիայի՝ Տարսուս, Փոքր Ասիայի՝ Պերգամոն քաղաքներից, Հունաստանից՝ Աթենքի Ագորայի և Կորնթոսի հել- լենիստական շերտերից<sup>59</sup>։

Նյութի մանրակրկիտ վերլուծությունը մատնանշելով, հատկապես Ար- տաշատի մ.թ.ա. II—I գգ. խեցեգործական կենտրոնի մեծ ազդեցությունը Դվինի քննվող բնագավառի արտադրանքի վրա և բացահայտելով, ինչպես վերը ներկայացվեց, բազմաթիվ ընդհանրություններ թե՛ ձևերի, թե՛ զար- դապատկերների, ի հայտ է բերում նաև առանձնահատկություններ, որոնք

խսկ ընորոշում են Դվինի արտադրանքի ինքնուրույնությունը: Արտաշատի առևտրատնտեսական և մշակութային առնչությունները Մերձավոր արևելքի, Միջերկրական ծովի արեւելյան ավազանի, Փոքր Ասիայի հոնիական-հելլենիստական կենտրոնների հետ իր նշանակալից ազդեցությունն է թողել նաև նրա խեցեղործության վրա: Ոտար խեցեղենի ներհոսքը այստեղ՝ ինչպես արդեն նշել են մասնադեմները, ազդեց ոչ միայն տեղական խեցեղենի տոնանձին աիպերի վրա՝ մասամբ կերպարանափոխելով դրանք, այլև տվեց մինչ այդ Հայաստանին անհայտ մի շարք ընդօրինակումներ («ձկան փսեններ», ունգվենտարիումներ, գուռուսներ, սկյութոսներ և այլն), փոխառնվեցին նաև զարդածեկեր<sup>80</sup>, Բնականաբար, Արտաշատի խեցեղեն արտադրանքի վրա ակնառու է ներմուծված խեցեղենի զգալի ազդեցությունը, մի բան, որը նման ցայտունությամբ չի ընդգծվում Դվինի անտիկ խեցեղենը բուսամասիբելիս, քանի որ վերջինս կրում է ավելի «տեղական-հելլենիստական» կերպարանք: Բացահայտ են նաև գունազարդման և զարդապատկերների առանձնահատկությունները: Այսպես, Արտաշատի խեցանոթները նկարազարդելու նպատակով դրանց մակերեսը երեսապատվել է անգորի խիտ լուծույթով, ներկվել և նոսրացվել է սառնալուծ որակյալ, ընտիր մի փայլեցում, որի վրա արված զարդապատկերները, ձուլվելով ընդհանուր ֆոնի հետ, թողնում են լաթապատ անոթի ապավորություն (սա ակնհայտ է. հատկապես, կավանոթների զիզնավունից մուգ դարչնադույն երանգի վերափոխվող ֆոնի վրա): Մինչդեռ Դվինի գունազարդ անոթների մակերեսը մշակված է անգորի ավելի նոսր լուծույթներով, թեթեակի փայլեցված և վերջինիս նկարազարդումները ընդգծվում և սվելի՛ցայտուն են հնչում ընդհանուր ֆոնի՝ սրտ նշեմք, որ նման գունազարդմամբ անոթներ առկա են նաև Արտաշատում, սակայն սրանց մեծ մասի մակերեսը նույնքան հարթ չէ և հենց «փշոտ» մակերեսով տարբերվում են Դվինի խեցեղենից: Ի տարբերություն Դվինի, Արտաշատի գունազարդ խեցեղենը թե՛ զարդապատկերներով և թե՛ գույներով խիստ հագեցված է: Այսպես նույն անոթի վրա առկա են ոչ միայն ասրատեսակ զարդապատկերներից կազմված միմյանց հաջորդող գոտիներ, այլև այդ գոտիները կազմող յուրաքանչյուր զարդապատկեր իր մեջ կրում է մեկ ուրիշը, ինչպես օրինակ՝ միմյանց հատող և անկյուն կազմող զույգ ուղիղ գծերը լրացվում են հորիզոնական գծիկներով, իսկ զույգ ոլորածն շղթան՝ ցանցկեն, գծազարդով, կետազարդով կամ ուղղակի լցվում գույնով, ձվածիր պատկերների մեջ ի հայտ են գալիս գույնով լեցուն և նոսնկյունիներ, ցանցկենի մեջ՝ կետազարդ, եղենազարդ և այլն<sup>81</sup>: Այս զարդածեկերը նման համադրություններով ընդհանրապես բացակայում են Դվինի անոթների պարզ և հստակ զարդագոտիներում: Ի լրացումն այս բոլորի, Դվինի խեցեղենը ցուցարբերում է ինքնուրույնություն ունեցող նմուշների, այսպես՝ օգակավոր ոտք-նստուկով սեուտեղի ավելի վազ գունազարդ օրինակի (Արտաշատում որանք հայտնի են միայն մ.թ. I—II դդ. և ունեն արտաքին այլ հարգարում), ցլագուլի կանթերով օժտված գունազարդ կարասների, ինքնատիպ թուխապատկերներով նկարազարդված տափաշների առ-

կայութիւն, միաժամանակ նաև, արդեն վերը նշված գունաղարդման և դար-  
դասատկերների առանձնահատկութիւնները շնորհիվ:

Դվինի քննարկվող ամբողջ նյութի թվագրումը՝ մ.թ.ա. II—մ.թ. I դդ., ի-  
րականացվում է, ինչպես հումապատսսիան հնագիտական շերտի և համա-  
ժամանակյա դամբարանադաշտի առկայութեամբ, այնպես էլ նյութը վեր-  
լուծելիս Հայաստանի և Հելլենիստական աշխարհի նույնաաիպ խեցեղենի  
հետ ունեցած աղերսների և առնչութիւնների շնորհիվ:

### Յ. ԶԱՐԴԵՐ, ԿՆԻՔՆԵՐ, ԴՐԱՄՆԵՐ

Ուշադրութեան են արժանի Դվինի հելլենիստական դարաշրջանի գաւ-  
բարանադաշտից՝ կարասային թաղումներից հայտնարեւրված դարդերը:  
Դրանք ապարանջաններ են, մատանիներ, աշխարհօղբեր, շքասեղներ, կոճակներ,  
ուլունքներ, կնիքներ և այլն<sup>62</sup>:

Ապարանջանները և մատանիները բրոնզյա պարզ օղակներ են, երբեմն  
ծայրերը միմյանց շրջված, իսկ հաստ մի բնկոր, ըստ երևութիւն, պատ-  
կանել է տքի ապարանջանի (ընդ որում նման հաստ ապարանջաններ  
հայտնարեւրվել են Մինդեշաուրի կարասային թաղումներից)<sup>63</sup> (տախա. XXV,  
5, 6, 8, 14): Նորաշենում, կարասային թաղումից հայտնարեւրվել է բրոն-  
զե ձուլածո, մանկական ապարանջան՝ ծայրերը ոճավորված օձի տափակ  
գլուխներով (տր. 5,5 սմ), (տախա. XXV, 7): Օձագլուխ վերջավորութիւն-  
ներով ապարանջանների ավանդական արադրութիւնը Հայկական լեռ-  
նաշխարհում սկսվում է դեռևս մ.թ.ա. առաջին հազարամյակի սկզբներից  
և նույն սովանդութի ուժով հարատեւում անգամ միջնադարում<sup>64</sup>: Արաշա-  
տի, Գառնիի, Օշականի հելլենիստական ժամանակաշրջանի կարասային  
թաղումներից հայտնարեւրվել են նման ապարանջաններ, երբեմն օձերի ավելի  
ռեալիստական պատկերմամբ<sup>65</sup>: Օձագլուխ ապարանջանները, բացի սոսկ  
դարդ լինելուց, հավանաբար, ունեցել են նաև պահպանիչ նշանակութիւն՝  
կապված օձի պաշտամունքի հետ:

Ականջօղբերը նույնպես բրոնզից են՝ պարզ օղակներ են, երբեմն ակո-  
սադարդված և սուր ականջակալով (տախա. XXV, 9, 12): Բրոնզից պատ-  
րաստված շքասեղները թերի են, կոտրված: Համեմատարար լավ են պահ-  
պանվել վարպետորեն պատրաստված գնդաձև փոքր զլխիկով, վերին մա-  
սում՝ երկու կողմից ուռուցիկ նեղ գոտիներով բոլորված շքասեղները  
(տախա. XXIII, 4, տախա. XXIV, 2, տախա. XXV, 15): Շքասեղները հան-  
դուցյալի անբաժան իրերից են նաև Արտաշատի, Գառնիի, Մինդեշաուրի կա-  
րասային թաղումներում<sup>66</sup>, Հետաքրքիր են պղնձե կոնաձև կոճակները, ո-  
րոնք հատուի են նաև Գառնիի կարասային թաղումներից<sup>67</sup>:

Բրոնզից, երբեմն էլ ցածրորակ արծաթից վերահիշյալ նման պարզ դար-  
գեր մեծ թվով հայտնարեւրվել են տշ միայն Հայաստանի (Գառնի, Օշական),  
այլև ներկայիս վրաստանի (Պարցխանականևի, Գափնարի), Ազրբեջանի  
(Մինդեշաուր) տարածքում հայտնի հելլենիստական գարաշրջանի կարասա-  
յին թաղումներից<sup>68</sup>: Այսուհանգերձ, բրոնզե ալգորիմայ պարզափույն դար-

գերը, որոնք ընտրող են դեթե ընտրող դարաշրջաններին, շեն կարող օգնել քննվող թաղումների թվագրմանը: Այդ տեսակետից ավելի ուշագրավ են ագաթե կախիկներով արծաթե քունքի օղբեր և ուլունքները:

Քննվող հավաքածուի մեջ կարեոր տեղ են գրավում ցածրորակ արծաթից պատրաստված, ադաթե նուրբ կախիկներով, քունքի շրջանաձև օղբեր (տախտ. XXIII, 3, տախտ. XXIV, 4, 5): Ագաթե կախիկները ժամանակին ընտրող կաթիլանման ուլունքներ են, որոնք վերին մասում ունեն թելի անցքեր: Դվինի քունքի օղբեր հար և նսան են Գառնիի և Արտաշատի կարասային թաղումներում հայտնաբերված ականջօղբերին: Վերջիններս, բնականարար, ունեն ավելի փոքր տրամագիծ և ներկայացնում են բրունդե օղակի և ապակու շաղախից պատրաստված կաթիլանման ուլունքի գուգակցում: Գառնիի և Արտաշատի այս ականջօղբերը գտնվել են ապակե բաղամանիստ կնիքների և հելլենիստական ժամանակին ընտրող ուլունքների հետ և թվագրվում են մ.թ.ա. II—I գդ.<sup>69</sup>: Մ.թ.ա. առաջին հազարամյակե վերջին քառորդով են թվագրվում Խընրսիի (Աղբեջան) դամբարանադաշտից հայտնաբերված արծաթե նման ականջօղբերը:

Այսպիսով, Դվինի քունքի օղբեր ևս կարելի է թվագրել մ.թ.ա. II—I գդ., որը ճշտվում է նաև նույն կարասում հելլենիստական ժամանակի քարե սկարաբոիդի (սքրարդեզ) առկայությամբ:

Բաղմաքանակ և բաղմաձև են ուլունքները, որոնք պատրաստված են կիսաթանկարժեք քարերից (սարդիոն, խալկեզոն, հասպիս, գիշեր-գագա), Տետաղից (րոռնդ), ապակուց, այլ նյութերից (կրաքար, ոսկր, խեցի) և տարբեր նյութերի գուգակցումից (ապակի՝ ներսից ոսկեգծոված) (տախտ. XXIII, 1, 2, 7, տախտ. XXIV, 1, 3, 6, 7, տախտ. XXV, 10, 11, 13): Ուլունքների մեծագույն մասը հիմնականում ունի պարզ երկրաչափական ձևեր՝ դնդաձև, գլանաձև, տակառաձև, շրջանաձև, սկավառակաձև, ոսպնյակաձև, երկկոնաձև, քառանկյունի, կան նաև բարդ՝ կաթիլաձև, սլաքաձև՝ սրբարդեզի նման (սկարաբեզ) և այլն:

Հայտնաբերվել են ընգամենի 39 սարդիոնե ուլունք՝ գնդաձև (մանր ու խոշոր), գնդաձև երկու կողմից սեղմված, գլանաձև, քառանկյունի բաժանարար՝ երկայնքով բացված երեք նուրբ անցքով, եռաշար մանր ուլունքաշարի համար: Սրանք կիսաթափանց և թափանցիկ են, բաղմագույն՝ բաց վարգագույն, կարմրավուն, շագանակագույն, սուգ րուլագույն (հատկապես խոշորները): Սարդիոնե ուլունքներ մեծ թվով հայտնաբերվել են նաև Գառնիի կարասային թաղումներից<sup>71</sup>: Խալկեզոնից պատրաստված սրբաբզեղաձև 5 ուլունք բաց և մուգ մոխրագույն են՝ երկնագույն երակնէրով: Կարակտորեն հղկված հասպիսե գնդաձև ուլունքները՝ մուգ կարմիր գույնի են, վրան՝ մանր, սև խայտեր և թելանման մոխրագույն երակներ կամ ոսկրագույն՝ պուտերը վարգագույն: Պահպանվել են բարձրորակ գագատից (գիշերից) պատրաստված տակառաձև և տակառաձև-երկկոնիկ ուլվագծով ուլունքներ հայելանման մակերեսով:

Հավաքածուի մեջ կան որոնգե պարզ շրջանաձև ուլունքներ և մեկ՝ նույնպես բրունդե բաժանարար-երկգլանանի ուլունք, որը ձևով աղբրովում է

սերոն Գերեսի (Վրաստան) մ.թ.ա. I գ. գամբարանագաշտից գտնված նման ձևի բաժանարարին<sup>72</sup>:

Առանձին խուսր են կաղմում ապակուց և ապակու շաղախից պատրաստված ուլունքները, որոնք թե՛ իրենց ձևերով (գնգաձև, գլանաձև, սկավառակաձև, ոսպնյակաձև, երկկոնաձև, սլաքաձև) և թե՛ գույներով (գեղ-նավուն, երկնագույն, փիրուզագույն, կապույտ, սև) հարում են ոչ միայն Հայաստանի (Գառնի, Օշական), Աղբրեջանի, Վրաստանի, այլ նաև Հյուսիս-մերձսևծովյան ընկալալայրերից և գամբարանագաշտերից ձեռք բերված հելլենիստական գարաշրջանի ուլունքներին<sup>73</sup>:

Պարզ գլանաձև տարբեր երկարության ուլունքները ստացել են «ապակե շաղախից պտտրաստված երկար խողովակը կտրատելով»: Հետո սառը հողման ենթարկելով: Ելուստավոր ուլունքները պտտրաստվել են շղթայաձև կաղապարում և հետո առանձնացվել միմյանցից: Սրանք հիշեցնում են Գառնիի կարասային թաղումից հայտնաբերված նման ուլունքը, որն ի գնպ նույն կարասում հայտնարերված ձվաձիւր ս.սլակե կնիքի շնորհիվ թվագրվում է մ.թ.ա. I դարերով<sup>74</sup>:

Հելլենիստական գարաշրջանի հուշարձանների հետ առնչվում են նաև բաղմագույն ապակուց պտտրաստված և ղարղարված ուլունքները: Կան տա-նասաձև երկարավուն ուլունքներ, որոնց մուգ մոխրագույն միջուկով լայնակի անցնում է ըղմաշերտ ղարդ, կաղմված տարբեր խտությամբ դասավորված, բազմագույն (սպիտակ, դեղնավուն, երկնագույն, շագանակագույն), մանր թելերից: Սրանք ներթափանցելով և ձուլվելով միջուկին ստեղծել են գունային բնական ներդաշնանություն: Առկա են նաև տակառաձև, բայց սև փայլուն մակերեսով, միջուկի կենտրոնով լայնակի անցնող սլաղերտ՝ ժապավենաձև, բաց գեղնավուն գարգազոտիով ուլունքներ: Վերջիններս տղերսվում են նույնպես բաղմագույն ապակուց պտտրաստված նման ձևի ու գույնի հյուսիս-մերձսևծովյան ուլունքներին<sup>75</sup>:

Բաղմագույն ապակե ուլունքների թվին են պատկանում ակնուլունքները: Իմ նում հայտնաբերված այս կարգի ուլունքները տարատեսակ են: Ամենապարզ ձևով ղարգարված են սպիտակ պտտերով գնգաձև ակնուլունքները: Նման խայտավոր ուլունքներ ստանալու համար արգենի ձևավորված միջուկը տաքացնում և փափկեցնում էին և ընդելուղում ցտնկացած գույնի ապակու կաթիլներով: Ոսկայն այս խմբում կան նաև գնգաձև ակնուլունքներ, ընդելուղված կապույտ գույնի բարդ բաղկացուցիչ աչքերով: Այս ողակավոր, կապույտ բիրով աչքերն առանձին պտտրաստել են սպիտակ սկավառակի վրա: Հետո միայն մտցրել տաքացված, բայց արդեն ձևավորված միջուկի մեջ, որից վերջինս հաճախ կորցնում էր նախկին տեսքը: Նման ակնուլունքներ հայտնարերվել են Արտաշատի, Գառնիի հատկապես հելլենիստական գարաշրջանի թաղումներից<sup>76</sup>:

Հետաքրքիր են ոսկեգույն փայլով գնգաձև, երկու կողմից սեղմված և երկկոնաձև ուրվագծով ներգիրավոր ուլունքները: Մետաղե ներդիրով ապակին անտիկ աշխարհին քաջ ծանոթ է և լայնորեն կիրառվել է ապակեգոր-

ծության մեջ ընդհանրապես<sup>77</sup>: Ուսումնասիրողները երկկոնիկ, ոսկեղօծ նուրբ ուլունքները համարում են զուտ հելլենիստական դարաշրջանի արտադրանք: Ուշագրավ է, որ նույնը դիտվում է նաև հյուսիս-սերձսեծովյան նման ուլունքների հավաքածուներում<sup>78</sup>:

Առկա են նաև այլ նյութերից պատրաստված՝ կրաքարի տանառածե, քառանկյունի բաժանարար, ոսկրի գլանաձև ուլունքներ և այլն:

Այս հավաքածուի մեջ կան երեք կաուրը լսեցիներ: Սրանք հստակ են հաճախ կարասային թաղումների իրերի շարքում: Խեցիները հավանաբար բերված են Միջերկրական ծովի ափերից: Սրանց, ակնուլունքներին, հաճախ նաև քարե ուլունքներին վերագրել են հմայական զորություն, և կլրառել որպես հուսուլթ՝ «չար աչքից» պահպանելու համար, իսկ ավյալ դեպքում գուցե երկալզել է իբրև հողու պահպանության սիշոց:

Հեաաքքեր է իլիկի գլուխ հիշեցնող կոճական:Նան քարե ճարմանդր, որը քննչող ժամանակին բնորոշ հանդերձանքի անհրաժեշտ մանբաւաս լինելով, հաճախ է հայտնաբերվում թե՛ Դաոնիի և թե՛ Աւտաշատի թաղումներում<sup>79</sup>:

Դվինի դամբարանադաշտի կարասային թաղումներից ձեռք բերված զարգերը ուշագրավ տվյալներ են: Թեև վերը ներկայացված հավաքածուն հարուստ չէ, սակայն հատկանշականն այն է, որ ձեռով, մանրամասներով, մշակուսով և, վճռապես, ողջ նշանակությամբ խիստ բնորոշ է հելլենիստական դարաշրջանի այս ձևի թաղումներին ընդհանրապես: Տեսնում ենք նաև, որ Դվինի առանձին կարասային թաղումներից ձեռք բերված նյութերը միմյանցից չեն սարբերվում, մի բան, որ հնարավորություն է տալիս ոչ սիայն հնադիտական ամբողջ նյութի միասնական վերլուծության, այլև անվերապահորեն հաստատում է, որ Դվինի դամբարանադաշտը որոշակիորեն պատկանում է մի դարաշրջանի:

Վերը ներկայացված նյութի թվագրումները մեկ անգամ ևս թույլ են տալիս Դվինի մեղ հայտնի դամբարանադաշտը համարել մ.թ.ա. I — մ.թ. I դդ. հուշարձան: Առաջարկված թվագրումը հաստատում են նույն դամբարանադաշտից՝ կարասային թաղումներից, ձեռք բերված խեցեղենը, կնիքները:

•  
•

1950 թ. միանավ տաճարի արևելյան մասում հայտնաբերված կարասային թաղման մեջ՝ հանդուցյալի անձնական իրերի հետ հայտնաբերվել են նաև երկու կնիք (տախտ. XXIII, 5, 6):

Դրանցից մեկը, հասպիս հիշեցնող կանաչավուն քարից պատրաստված բաղմանիստ կնիք է, որը երկայնքով ունի թելի անցք (տախտ. XXVI, 2): Փորագրված ներքին մակերեսի շափերն են՝ 1,5×1,48 սմ: Սյուսեն՝ հեծյալի և հետևակի մեծամասրան է. երկուսն էլ դիմված են նիդակներով, հեծյալին աջակցում է նաև ձիու կողքին պատկերված հարձակվող շունը: Ձիու թամբին նստած հեծյալը՝ աջ ձեռքում բռնած նիդակով հարվածում է

հետիոտների գլխին: Պատկերված է միայն հեծյալի վերին կեսը, կլոր գլուխը զուրկ է գիմագծերից ու գեմքից, իսկ հագուստն իսպառ րացակայու՞ է: Հեռակալը պատկերված է հեծյալի գիմաց մարմնով մզված գեպի հակառակորդը՝ մեկը առաջ թեթևակի ծալած, մյուսը ետ ձգած ոտքերի գիրքով: Երկու ձեռքով նա բռնել է նիզակը և ուզել գեպի ձին: Ձին պատկերված է թռիչքի պահին, առջևի ոտքերից մեկը մյուսից բարձր. հետևի վերջավորութունները վատ են նշմարվում:

Հիշյալ կարասային թաղումից հայտնաբերված մյուս կնիքը սկարաբուխի է, պատրաստված է սարգիոնից ու երկայնքով ունի թելի անցք (տախտ. XXVI, 3): Կնիքի ներքին հարթ մակերեսի (չափերն են՝ 1,5×2 սմ) վրա պատկերված է ձվածիր վահաններով և նիզակներով զինված երկու հետլուստ նի մենամարտ: Հակառակորդները նույնատիպ են՝ կլոր, անդեմ գլուխով, երկար վզով, կարճ իրանով և ոտքերով, առանց հագուստի:

1961 թ. Դվինի միջնաբերդում վաղ միջնադարյան ակնագործի արհեստանոցի մոտ պատահական հայտնաբերվել է լավ պահպանված րազմանիստ կնիք (տախտ. XXVI, 1): Այն պատրաստված է կիսաթափանց, հյութեղ կարմրավուն սարգիոնից, երկայնքով ունի թելի անցք: Փորագրված է կնիքի ներքին ուղղանկյուն մակերեսը (չափերն են՝ 1.0×1.9 սմ), սյուսե է՝ հեծյալի և հետևակի մենամարտը, երկուսն էլ զինված են նիզակներով (հետևակը հակառակ վահանով), փորձում են խոցել միմյանց: Հեծյալը պատկերված է ջարժման մեջ՝ ձիու թամբից փոքր-ինչ վեր բարձրացած՝ ոտքը ձիգ վիճակում, իսկ գլխից վեր՝ աջ ձեռքով պարզած նիզակը պատրաստել է հարվածի: Հագուստը պատկերված չէ, բացի եզերը գուրս ոլորված փոստայր գլխարկից: Դեմքի վրա ընդգծված են սրածայր քիթն ու մորուքը: Հեռակալը պատկերված է հեծյալի դիմաց՝ ձախ ոտքը թեթևակի առաջ ծալած, ձախ ձեռքին ձվածիր վահանով. նա իր աջ ոտքը հետ է ձգել և աջ ձեռքում, գրեթե գլխարկի բարձրությամբ, բռնել է նիզակ և ուզել ձիու ճակատին: Հետիոտների վրա ևս հագուստ չի նկատվում, ուրվագծված են միայն գլխարկի սրածայր կզրը, իսկ գեմքին՝ սուր քիթն ու մորուքը: Հեծյալի ձին ծառս է եղել օգուտ, առջևի ոտքերից մեկը մյուսից ավելի վեր է բարձրացել, նման դիրքերում են գտնվում նաև հետևի վերջավորութունները: Երկարավիզ ձիու գլուխը, ցցված ականջով և կիսարաց երախով, ուզված է դեպի հետևակը: Մարմնի վրա ընդգծված են հատկապես գավակը և ծածանվող երկար պուշի:

Վերը քննարկված կնիքները իրենց ձևով (րազմանիստ, սկարաբուխի) և թեմաների ընտրությամբ հարում են առաջին հերթին այսպես կոչված «հունա-պարսկական» կնիքների խմբին: «Հունա-պարսկական» անվան ներքո առաջին անգամ, դեռևս գարասկզբին, գերմանացի հնագետ-դասուսան Ա. Ֆուրտվենգերը առանձնացրեց փոքրասիական կնիքների հատուկ մի խումբ, դնելով այն աշխույժ շրջանառության մեջ, որը ընդհուպ այսօր առիթ է առիս մասնագետ գիտնականների բազմաթիվ կարծիքների՝ հաճախ հակասական, նորանոր մեկնությունների և ենթադրությունների<sup>30</sup>:

Հարցի այդ աստիճանն պրորբնատիկ գառնալը խիստ ընկալն է, քանի որ այս կնիքները ծագել են սինչհելլենիստական Արևելքում (մ.թ.ա. V—IV դդ. սահմանագծին), այն է՝ Փոքր Ասիայում, որտեղ հանդիպելով րախվում, միաձուլվում էին ժամանակի երկու, մի կողմից Արևմուտքի (հունական աշխարհ), իսկ մյուս կողմից՝ Արևելքի (Աքեմենյան պետություն) զորքազարկությունները: Ստեղծվում էր նոր մի որակ, նոր մի պատկերաձև, ոճ, հագեցած այս երկուսի տարրերով, տեղական-փոքրասիական հենքի վրա, որի արհեստանոցներում պատրաստվում էին գրանք: Հետևաբար, հասկանալի պատճառով, այս խմբի կնիքները ուսումնասիրող մասնագետները տարակարծիք են: Նրանց մի մասը (Ա. Ֆուրտվենգլեր, Զ. Ռիխտեր) դրանց ստեղծման հեղինակային առաջնությունը շնորհում է հույներին, իսկ մյուս՝ ավիլի սովալը մասը (Ժան Գե Ֆուրվիլ, Ա. Մորգատ, Տ. Կնիպովիչ, Մ. Մարսիսովա, Վ. Պավլով), շանսեսելով հունական արվեստի աղբյուրները, հեղինակային մենաշնորհը վերագրում է պարսիկներին<sup>81</sup>: Կարծիք է հայանվել նաև, որ քննարկվող տիպի կնիքները պատրաստվել են կիլիկիայում<sup>82</sup>: Վերջին տասնամյակի մասնագետներից Ն. Մ. Նիկոլյանն է, որ այս տիպի կնիքները համարում է Աքեմենյան պարսկական պետության ժայռամասային շրջանների «խառը» ընույթի մի գործ, ստեղծված փոքրասիական՝ արևելյան հիմքի վրա, իր մեջ միաձուլած ե՛ հունականը, ե՛ պարսկականը, իսկ պարսկական և ռուն տեղական-սովանդական աարրերի արտացոլումը նա անսնում է Անգրկովկասում հայտնարերված ռաղմանիսաների պատկերների մեջ, համարելով դրանք փոքրասիական ռաղմանիսաների յուրատիպ ոճով ստեղծված, մի տարաանսակ<sup>83</sup>:

Իր ավանդական ընույթով ուշագրավ է հատկապես սկարբերոգի պատկերը (տախտ. XXVI, 3), որը կառուցված է երկհակադրության վրա: Այստեղ հակամարտությունը հանդես է գալիս ճիշտ միասնական և նույնակերպ հերոսների միջև, որոնք իրենց կոնֆիգուրացիայով, սյուսյերաձևի ընգհանուր ոճով, վերացարկված և ընդհանրուցված գծերով, հատկապես շեշտված ձեռքերով և համեմատարար կարճ ոտքերով հիշեցնում են Սյունիքի ժայռապատկերների այն դույզերին, որոնք համարվում են «Երկվորյակ» աստվածությունների պատկերները «Երկվորյակ» ստեղծությունները ներկայացնող պատկերները՝ իրենց մագուկան նշանակությամբ հանդես են դալիս Հայաստանում դեռևս մ.թ.ա. II հաղարամյակից սկսած, Սյունիքի և Գեղամա լեռների ժայռապատկերներում, կիրառական արվեստի հուշարձաններում, հենց Դավինում՝ մ.թ.ա. I հաղարամյակի դամրանարարի վրա և այլն<sup>84</sup>:

Դավինի կնիքի վրա, ամենայն հավանականությամբ, նույնպես «Երկվորյակ» աստվածություն է պատկերված, ըստ հակասության՝ հակամարտության պահին: Սրա փայլուն արտացոլումներն են «Սասնա ծռեր» դյուցադնավեպում «Երկվորյակ» աստվածությունը կերպարանավորող երկվորյակ դյուցադններ՝ Սանասարի և Բաղգասարի միմյանց հետ ընգհաման անսարանները:

«Նկանգար ինչ նեղացած,

դիրար տրորած,  
Մեկ մեկելի աչքեն ելած,  
Կ'ուզեն, մեկ ըղմեկ սպանեն» և այլն<sup>85</sup>,

Այսպիսով քննվող կնիքը ունի խոր տեղական և ավանգուական արմատներ: Եվ, քանի որ կնիքները օգտագործվել են ոչ միայն որպես այդպիսին, այլև որպես ղարգ կամ հուռուք շար աչքից պահպանելու համար, ուստի այս կնիքը իր պատկերի մոգական նշանակության շնորհիվ, մասնաջան հավանականությամբ, ֆունկցիոնալ առումով հանդես է գալիս որպես կնիք հուռուքի:

Դվինի բաղամանիստ կնիքների վրա հեծյալի և հետիոսնի մենամարտի պատկերները նույնպես կառուցված են երկհակագրության վրա (տախտ. ՏՃՎԼ, 1, 2): Ամենայն հավանականությամբ, այդ մենամարտի մեջ թուքը ված է հին առասպելի վիպականացած մոտիվ, երբ հերոսը ձիու վրա (մյուս դեպքում՝ նաև շան ուղեկցությամբ, որն ավելի է ընդգծում հերոսի առավելությունը) հանգես է գալիս հայրենի արգար ե ճշմարիտ, իսկ հետիոսն՝ հակառակորդ: Եվ ինչպես գտնում են մասնագետները, նույնասյուժե «հունա-պարսկական» կնիքների վրա, որ ձիավորը, պարսիկ հերոսն է, իսկ հետիոսն՝ օտարը (հույն, սկյութ, լիկիացի), ուստի այս գաղափարական հիմքը պետք է ձևավորված լիներ հենց իրանական միջավայրում կամ իրանական կուլտուր-քաղաքական ազդեցության տակ գտնվող երկրներում:

Սակայն, ի տարբերություն Դվինի կնիքների, մ.թ.ա. V—IV գդ., այսինքն՝ աքեմենյան ժամանակաշրջանի «հունա-պարսկական» խառը ոճով ստեղծված կնիքները նախ հիմնականում գրվադված են հատուկ եղանակով\*, արտացոլում են որոշակի ուղագրական մանրամասներ (հերոսները հանգես են գալիս արևելյան՝ պարսկական հանդերձանքով, ձիերը հանգուցակապ պոչերով), իսկ ձիերը պատկերված են մեծ մասամբ քառատրոփ վաղքի վիճակում<sup>86</sup>: Մինչդեռ Դվինի կնիքների վրա մարտիկները և կենդանական պատկերները իրիստ ոճավորված են, վերացարկված և պատկերված ընդհանրացված գծերով. շեշտված է հատկապես այս կամ այն պատկերի որևէ էական հատկանիշ, օրինակ՝ ձիու մեծ ռացված անրնական հրախը, կովողների նույնքան անրնական սրածայր մորուքները ու երկար ըթերը, տձի դուլինները, չհանդերձավորված մարմինները, որոնք փաստորեն արտա-հայտում են գեղարվեստական սեփական սկզբունքներ: Ուշագրավ է, որ մենամարտ պատկերող տեսաբանները, կատարված այս նույն ոճական սկզբունքներով, այսինքն՝ ընդհանրացված և սխեմատիզացիայի ենթարկված, հանգես են գալիս նաև եվրոպական հավաքածուներում պահվող որոշ կնիքների վրա<sup>87</sup>: Սրանց ուսումնասիրությունը (գտնելով ժամանակագրական և աշխարհագրական գործոնների կապակցության մեջ) անգլիացի հնագետ Ջ. Բորդմանին բերում է այն եզրահանգման, որ վերջիններս պատկանում են «հունա-պարսկական» կնիքների շարքին, ընդհանրապես կատարված են ժամանակագրորեն հաջորդող մի ոճով, որը կրում է հունական աննշան աղ-

\* С помощью круглого сверла—рундперля.

ղեցութիւն և բնորոշ է հատկապես արևելյան տարածքից ծագած բաղմանիստներին:

Այսպիսով, Ջ. Բորգմանը քննարկվող ոճը համարում է հետաքեմենյան, որը հավանաբար շարունակվել է նաև մակեդոնական դարաշրջանում<sup>89</sup>: Եվ իրոք, ինչպես ցույց են տալիս վերոհիշյալ դիտողութունները, այս երեւոյթը ավանդաբար կարող էր շարունակվել և այդ նույն տիպաժները կարող էին կիրառվել ժամանակագրական ավելի ուշ շրջանում, ընդ որում արդեն մի այնպիսի ընդհանրացված, սխեմատիկ և պայմանական վերարտադրմամբ, որը դիտվում է և՛ վերոհիշյալ եվրոպական, և՛ Դվինից հայտնաբերված կնիքների վրա: Ի յրացումն վերջինիս, ասենք, որ հնագիտական ստույգ տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանի մ.թ.ա. V—IV դդ. հուշարձաններում առավել բացարձակապես չի հայտնաբերվել ոչ մի բաղմանիստ կնիք, բացառությամբ Կեղադերի դամբարանում գտնված միակ օրինակի, որը Ալեքսանդր Մակեդոնացու գրամի օգնությամբ թվադրվել է մ.թ.ա. IV դ.<sup>89</sup> Սակայն նշենք, որ հիշյալ գրամները շրջանառության մեջ հարատևեցին բավական երկար, ընդհուպ՝ մ.թ.ա. I դ., հետևաբար ե շին կարող լինել հղբարի թվագրող նյութ: Մինչդեռ քննվող տիպի քարե և ապակե կնիքների մեծագույն մասը, եթե ոչ բոլորը, հայտնաբերվել է մ.թ.ա. II—I դդ. թաղումների մեջ (Արտաշատ, Գառնի, Օշական, Սիսիան, Դվին)<sup>90</sup>:

Պարզվում է, որ վրաստանում ապակե բաղմանիստ կնիքները ևս սինքրոն են այն հնագիտական իրերին, որոնց հետ հայտնաբերվում են, իսկ դրանք սովորաբար թվադրվում են հենց մ.թ.ա. II—I դդ., նույնիսկ՝ մ.թ. I դ. (Սամթավրո, Ներոն-Դերեսի, Արկնետի, Բամբերի, Ուրբնիսի)<sup>21</sup>:

Աղբբեզանական ԽՍՀ տարածքում այս կնիքները նույնպես ի հայտ են գալիս Մինդեշատի մ.թ.ա. II—I դդ. կարասային թաղումների մեջ<sup>92</sup>:

Ուշագրավ է, որ Դվինի կնիքները ժամանակագրական առումով համախոս են հիշյալ հնագիտական կոմուններին: Քանի որ դրանց, ց երկուսը գտնվել են մ.թ.ա. II—I դդ. թվադրվող կարասային թաղման նյութերի համալիրի մեջ, այստեղ ի հայտ եկած՝ արծաթից պատրաստված, ազաճե կախիկներով քունքի օղբրը հար և նման են Գառնիի և Արտաշատի կարասային թաղումներում ապակե բաղմանիստ կնիքների հետ հայտնաբերված ականջօղբրին, որոնք թվադրվում են մ.թ.ա. II—I դդ.<sup>93</sup>:

Եվ վերջապես, քննվող բոլոր երեք կնիքները երևան են գալիս մի հուշարձանում, որտեղ գեոես շին հայտնաբերվել մ.թ.ա. V—IV դդ. հնագիտական շերտ կամ այդ շրջանին պատկանող որևէ առարկա:

Հիշյալ հանգամանքը և, ընդհանրապես, քննվող նյութի ուշ թվադրման վերը բերված հնագիտական բոլոր կոմունները, նաև առանձնահատկութուններն ուղեբոսները, որոնք բացահայտվում են հետաքեմենյան և Դվինի կնիքների ոճական վերլուծության ընթացքում, թույլ են տալիս Դվինում հայտնաբերվածները թվադրել հելլենիստական ժամանակաշրջանով (ի դեպ, Դվինի կարասային թաղումից հայտնաբերված բաղմանիստը ժամանակին թվադրվել է մ.թ.ա. I դ. երկրորդ կեսով)<sup>94</sup>: Փաստորեն եվրոպական հավաքածուն կազմող հետաքեմենյան և Դվինի կնիքները հանդիսանում են «հունա-պարսկական»

մանդուլթները շարունակող, սակայն պատմականորեն մեկ այլ դարաշրջանի և համապատասխան աշխարհագրական միջավայրի ոճաարտահայտչական ուղղութիւն արգասիք:

• •

Դվինի հնագիտական հետազոտութեան տարիների ընթացքում միջնագարյան քաղաքի տարածքից դտնվել և տեղի բնակիչներից ձեռք են բերվել հնավայրի հելլենիստական գարաշրջանի կյանքին առնչվող դրամներ<sup>95</sup>:

Դվինում հայտնարեբված մակեդոնական արծաթյա դրամը (չորեքդրամյան, տր. 27 մմ, կշ. 16,65 դ) պատկանում է Ալեքսանդր Մակեդոնացուն հաջորդած՝ Փիլիպոս III Արիդայոս թադովորին (մ.թ.ա. 323—317), (տախտ. XXVI, 4): Դրամի ա. կողմի վրա մերկամարմին Ջեսն է գահին բաղմած՝ արծիվը ձեռքին, արձանագրութուն՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΦΙΛΙΠΠΟΥ [M] [LY]: Դրամը երկու կողմից եղեբված է կետողարդ շրջանակով:

Տիգրան Բ (մ.թ.ա. 95—56 թթ.) արծաթյա դրամայի (տր. 19 մմ, կշ. 4,02 գ) ա. կողմի վրա պատկերված է թագավորի դիմաքանգակը աջ դիրքով՝ գլխին ճառագայթաձև վեբջավորությամբ «հայկական թագը»<sup>96</sup> (տախտ. XXVI, 7): Թագի արքայական ժապավենի վրա պատկերված է արևի պաշտամունքը խորհրդանշող աստղը՝ երկու արծիվներ՝ միջև: Աննաու են էիրանու ծալքերը ճարսանդված ուսից ցած: Տիգրանի պատկերը եղեբված է ուլունքաշարի շրջանակով: Դրամի բ. կողմի վրա պատկերված է ժայռաբեկորի վրա բաղմած երկրի հովանավորյալ մայր դիցուհին, գլխին բրդաձև թագ, իսկ ոտքերի տակ ջրի աստվածութունը մարմնավորող՝ մերկամարմին մարդու կերպարանք և հունական արձանագրութուն՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΟΥ:

Հայաստանի վաղ հելլենիստական դարաշրջանի դրամաշրջանառութունը բնութագրվում է Մոփոթի և Փոքր Հայրի աւղական բրամներէ թողարկմանը զուգահեռ նաև մակեդոնական դրամների մուտքով. որոնք փաստորեն հանդիսացան Փոքր Ասիայի և Միջագետքի հետ Հայաստանի ունեցած առևտրատնտեսական կապերի արդյունք: Այո սուտմով նշենք, որ Հայաստանում հայտնարեբված Փիլիպոս 3-րդ Արիդայոսի դրամները դրվագվել են Բասելոնում, Մագնեդիոյում և Կոլոֆոնում<sup>97</sup>: Վերջիններս հանդիսանալով Ալեքսանդր Մակեդոնացու անմիջական հաջորդի թողարկած դրամները, ոչ միտյն կրկնում են իրենց հաջորդի պատկերաւորությամբ բացառությամբ, իհարկե, տրքայի հունատուտ անձնանունների, այլև պահպանում իշխող թագավորի պաշտամունքը արտահայտող նույն ձեբ՝ մակեդոնական ավանգական հերոս Հերակլեսին ոժտելով տիրակալի դիմադեբրով<sup>98</sup>. Մակեդոնական տյս դրամների ժամանակագրական իրական ստհմանները մատնանշել գժվար է, քանի որ դրանք երկարատև հարատեւեցին դրամաշրջանառություն մեջ ներառյալ մ.թ.ա. I դարը<sup>99</sup>:

Այսուհանդերձ Հայաստանի դրամաշրջանառության հելլենիստական փուլը, ներքին և արտաքին կապերով հանդերձ, միջադգային տոնտրի լայն

մասշտաբներ է ստանում Դսակապետ Տիգրան Բ Արտաշեսյանի դրվագված դրամների շնորհիվ ինչպես ըստ հայրենիքույ՝ (Տիգրանակերտ, Արտաշատ), այնպես էլ նրանից դուրս՝ սիրիական քաղաքներում (Անտիոքում՝ Սրոնտեսի վրա և Դամասկոսում)<sup>100</sup>։ Դվինում հայանարհրված Տիգրան Բ-ի դրամը արքայի ամենալավ տարածում գտած արծաթյա դրամաներից է, իսկ հիշվալ դրամաները Հայաստանի՝ Մերձավոր արևելքի հետ ունեցած տարբերությունների առնչությունների նյութական վկայություններն են։

Հայաստանի դրամաշրջանառության հիլինիստական փոփոխ բնորոշ այս դրամները հանդիսանում են Արաշատի և ընդհանրապես Այրարատի առևտրատնտեսական ընդարձակ կապերի աբտահայտություն։

### III. ԴՎԻՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

Հելլենիստական դարաշրջանի Դվինի ուսումնասիրությունը որոշակիորեն բացահայտել է մ.թ.ա. II—մ.թ. I դդ. պատկանող հնագիտական շերտ, հավաստելով նաև, որ բնակավայրը դադարել է իր գոյությունը մ.թ. I դ. քաղաքական դեպքերի հետևանքով: Թեպետ մ.թ. I—IV դդ. հնագիտական շերտերը ուսումնասիրված հատվածներում բացակայում են, այսուհանդերձ Դվին ըրրի մերձակայքից պատահական հայտնաբերվել են հիշյալ դարաշրջանին պատկանող նյութեր, որոնք թերևս հավաստում են այստեղ կյանքի հարաանման մասին:

Ճարտարապետական մանրամասներից հասուկ ուշագրություն են արժանի սյան «աստիկական» տուֆե խորիսխները<sup>1</sup>: Խորիսխներից մեկը բաղկացած է երկու գլանից, ստորին մեծ գլանը վերինից բաժանվում է երկու նեղ դարակների և սրանց միջև գտնվող սկոցիայի (ներճկվածքի) միջոցով (տախտ. VIII, 1, տախտ. IX, 9): Մյուսը՝ կազմված է քառանկյուն ներքինասալից և միմյանցից դարակիկների և սկոցիաների միջոցով բաժանված երեք գլաններից (տախտ. VIII, 2, տախտ. IX, 8):

Գտնիի հեթանոսական տաճարի խորիսխները հույնական «աստիկական» աիպի են՝ կազմված քառանկյուն ներքինասալից և սկոցիայի միջոցով բաժանված՝ երկու գլաններից<sup>2</sup>:

Նման սյան խորիսխներ թե՛ պատահական և թե՛ in situ հայտնաբերվել են Պարթևական (Դուրա-Սվրոպոս, Շապուր, Հաթրա, Աշուր, Նիսա) և Բակարա-Քուշանական (Թերմեզ, Խալջայան, Կորագիսան, Այրթամ, Խաթին-Ռաբաթ, Վախշյան հովիտ, Սուրի-Քոթալ, Քունգուղ, Բեհրամ, Շոթարակ) աշխարհում<sup>3</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ Միջին Ասիայում հայտնաբերված խորիսխների վերին գլանի վրա առկա են նեղ դարակիկներ, որոնք բացակայում են Դվինի քննվող նմուշների վրա և գրանցվ իսկ ավելի սառույգ վերաբառում «աստիկական» խորիսխի ձևը<sup>4</sup>:

Հոնիական օրդերի սյան խորիսխ «աստիկական» կոչված տարրերակը մ.թ.ա. 478—475 թթ. հանգես գալով Դելֆիքում, իր հետագա ձևավորումն ու վերջնական վերամշակումը սաանում է մ.թ.ա. V դ. երկրորդ կեսին հենց Ասիայում՝ Աթենքի Ակրոպոլիսում (նիկե Ապոներոս, էրեքթոն,

Պրոպիլետի ներքին սյունասորակ): Լերդեն մ.թ.ա. III—II դդ. Փոքր և Առաջավոր Ասիայում տարածվում է հոնիական օրդերի խարիսխների «ատտիկական» տարրերակր: Հնդ որում մ.թ.ա. III՝ ընդհուպ մ.թ. I դդ. ճարտարապետական հուշարձաններում հանդես եկող «ատտիկական» խարիսխները (ինչպես և սոաջարկում է Վետրուվիոսը) խստորեն պահպանում էն ընդունված կանոնիկ ձևը՝ երկու գլան բաժանված սկոցիայով և դարակիկներով: Շիշտ նույն ձևն են ներկայացնում նաև Գառնիի հեթանոսական տաճարի խարիսխները: Մինչդեռ, Դվինի «ատտիկական» խարիսխներից մեկը՝ բաղկացած էր երեք գլանից և սրանք բաժանող հրկու սկոցիաներից (տախտ. VIII, 2, տախտ. IX, 8), փաստորեն շեղվում է հելլենիստական ժամանակաշրջանում ընդունված հիշյալ կանոնիկ ձևից: Թերևս քննվող խարիսխը պետք է համարել ժամանակագրական առումով ավելի ուշ՝ մեր թվականության առաջին դարերի արտահայտություն: Ի լրացումն նշենք, որ նման սյան խարիսխներ հանդես չեն դալիս Հայաստանի վաղ միջնադարյան ճարտարապետության մեջ:

Եղած տվյալները վկայում են, որ սյան «ատտիկական» և տորածե խարիսխները հիմնականում թվադրվում են մ.թ.ա. III—մ.թ. III դդ. միջև ընկած ժամանակահատվածով: Այդպիսիք կրող բազմաթիվ հուշարձաններում խարիսխների այդ երկու տիպերը հաճախ հանդես են դալիս համատեղ՝ ղրաղեցնելով աշխարհագրական հսկա տարածք, որի շատ հատվածներ ունեն քաղաքական և կուլտուր-պատմական ամենասերտ ադերսներ: Ուստի ընավ պատահական չէ (աեղական տարրերակներով հանդերձ), «աատիկական» և տորածե խարիսխների առկայությունը նաև Հայաստանում:

Հայաստանը, բաղմակողմանիորեն շփվելով վերոհիշյալ երկրներից մի մասի հետ, յուրացրել է ժամանակին ընորոշ ճարտարապետական ձևերը, վերամշակել դրանք, ներմուծելով աեղական-ինքնաաիպ դժեր, որոնք ենթաա են հատուկ մասնադիտական ուսումնասիրության: Թերևս հոնիական օրդերի փոքրաաիական ծագումն ունեցող մատնեքավոր սյան գլանի աղղեցությունը կերտված, անտիկ ժամանակաշրջանի տեղական, յուրատիպ մի արտահայտություն պետք է համարել 1975 թ. Ներքին Դվինից հայտնարերված մատնեքավոր սյան գլանի վերնամասը (տր. 0,50 մ, բարձր 0,35 մ), (տախտ. VIII, 4, տախտ. IX, 7):

Հետաքրքիր է 1965 թ. կաթողիկե եկեղեցու շրջակայքից՝ ժ—19 քաաակուուուց հայտնարերված, որձաքարից պատրաստված ծածկաաալը<sup>7</sup> (տախտ. XXVIII, 2): Սալի պահպանված մասից կարելի է ենթադրել, որ այն եղել է ուղղանկյուն, երկու կողմերի երկույնքով ձգվել են կողերը (սրանցից պահպանվել է մասամբ մեկը), իսկ լայնքով՝ եղրերին ղուգահեո՝ ելունը (սալի ընդհանուր բարձր. 7 սմ է, կողի բարձր. 2,5 սմ, ելունինը՝ 1,5 սմ): Դվինի ծածկաաալի մասին այս ամրողչական պատկերացում կաղմեկուն օգնում են Գառնիի հեթանոսական տաճարի շրջակայքում հայտնարերված՝ բաղաաից պատրաստված, ծածկի նմանաձև սալերը<sup>8</sup> (տախտ. XXVIII, 3—4): Սրանք նույնպես ուղղանկյուն են՝ երկալնքով հրկու կողմից ձգվող կողերով

և կարճ եղբրին ղուդահեռ 1 սմ բարձրությամբ ելունով: Այս տափակ սալերը շարել են ասճարի քարակերտ տանիքի կրտաղախի վրա, իսկ միացման հանդուցները ձածկել որսից երկթեք, երկու կողային նիւտնորը միմյանց ղուդահեռ, իսկ ներսից՝ ուղղանկյուն խոռոչով, քառանիստ կալիպտերներով (տախտ. XXVIII, 5):

Դվինի ուսումնասիրվող ծածկասալը ընդհանուր առմամբ աղերսվում է նաև Արտաշատից հայտնաբերված՝ հատկապես մ.թ. 1—II դդ. պատկանող տափակ կղմինդրներին, որոնք ունեցել են երկթեք կամ եռանիստ՝ վերին հարթ նիստը կողային նիստերի միացման անկյուններում թեք կտրվածքներով կալիպտերներ<sup>9</sup>:

Դվինի ծածկասալը աբուբին մակերեսի ելունի առկայությամբ աղերսվում է նաև Աղվանքից (Կասաղակ) և Բոսփորի թաղավարության քաղաքներում և բնակավայրերում յայնորեն տարածված նույնաձև: կղմինդրներին<sup>10</sup>: Վերջիններս ի տարբերություն քարե ծածկասալերի ունեն փայտաշեն տանիքների կղմինդրներին բնորոշ հակառակ կողմում՝ դեպի ներքև ուղղված ծավաժք: Բոսփորի կալիպտերները նույնպես բազմանիստ են, բայց որոշ հավելվածներով:

Այսպիսով, Դվինի ծածկասալը ունենալով որոշակի ընդհանրություններ վերը ներկայացված կղմինդրների հետ և հարևան լինելով Գառնիի տաճարի մ.թ. I դ. թվադրվող սալերին, ամենայն հավանականությամբ, պատկանում է մ.թ. I-ին դարին<sup>11</sup>:

Անտիկ աշխարհում, պաշտամունքային և աշխարհիկ շենքերի տանիքները ծածկելու այս տեխնիկան՝ կղմինդրներով ինչպես նաև քարե ծածկասալերով, կապված էր ծովալուծ շինարարության հետ, իսկ վերջինս տնտեսական բարգավաճման արդասիք էր: Հելլենիստական Հայաստանը նույնպես մասնակից դարձավ այդ տնտեսական վերելքին, ձեռնարկելով ծավալուն քաղաքաշինություն:

Այսպիսով, ծափի քարե սալի թեկուղ և եղակի օրինակի հայտնաբերման է վերը ներկայացված ճարտարապետական մանրամասներն առկայության փաստերն իսկ ցույց են տալիս, որ անտիկ դարաշրջանում՝ Դվինում դուրսբերված են ունեցել ժամանակի շինարարական արվեստի և տեխնիկային բնորոշ կառույցներ:

Դվին քաղաքի տարածքից հայտնաբերվել է մի ինքնատիպ հուշարձան<sup>11</sup>: Դա որձաքարի քառանիստ ղոհասեղան է՝ 55 սմ բարձրությամբ, միջին մասում համեմատաբար նեղացող, հիմքում և վերին մասում լայնացող

<sup>9</sup> Ժ. Խաչատրյանը հայտնում է կարծիք, որ Դվինի ծածկասալը բերվել է միջին դարերում՝ Գառնիից, երբ սր բանի անգամ վերանորոգման ենթարկված տաճարի տանիքի սալերը կրկնակի օգտագործվել են կենցաղային տարրեր նպատակներով (Խաչատրյան Ժ. Դ., Իրանահայկական դիցարանական աղբյուրների չարցի շուրջ, ԿԷԿ, 1981, № 2, էջ 61, նույնի՝ Գառնիի պեղումները, ԵՂԱԿԱԿԱՆ ՍՍՀ-ում 1981—1982 թթ. գաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Զեկ. թեզիսներ, Երևան, 1983, էջ 23): Նման կարծիքը մեզ անհավանական է լինում. տե՛ս էջ 14—15:

ուրվապատկերով (17,5×17,5—25×15—25×11 սմ): Չոհսսեղանի յուրա-  
քանչյուր կողմի, բավական լավ մշակված մակերեսի կենտրոնում քանդակ-  
ված են տարրեր պատկերներ. մի կողմում ուռուցիկ մակերեսով սկավառակ  
է, որի կենտրոնը փոս է, ընկած, հակառակ կողմում՝ պատվանդանին կանգ-  
նած թռչուն, մյուսում՝ ցլի գլուխ, կիսալուսնաձև եղջյուրներով, լսկ շոր-  
ըորդ կողմում՝ կարիճ, շոշափուկներով կլոր գունդ ընած (տախտ. XXVII,  
1—3, 5):

Գլխի ղոհասեղանը իր արտաքին ձևով, մասամբ նաև շափերով, աղբր-  
վում է Հոռմեական կայսրության ընդարձակ սահմաններում լայնորեն տա-  
րածված նմանաձև կոթողներին, որոնք հայտնի են նաև հյուսիս-մերձսե-  
ծովյան ընկալվալրերից (Խարաքս, Խերսոնես), բանգակված տեղական  
սարմատական կրաքարից, ձոնված՝ Յուպիտերին, Նեմեսիզային և այլն:  
Չոհսսեղանը միաժամանակ հիշեցնում է անտիկ ժամանակաշրջանի փոքր-  
ասիական և Արևելյան Իրանի (Քուհի-Քհվադչահ, Արշակունի թագավորի կա-  
ռավարչի հրո տաճարի) ղոհասեղանները<sup>12</sup>:

Ներկայացվող հուշարձանի ընդթը բացահայտվում է բարձրաքանգակ  
պատկերների շնորհիվ, որոնց քննարկումը հանդեցնում է որոշակի հետե-  
վություն:

Իրանական Միհր կամ Միթրա աստվածության պաշտամունքը ղեռն  
մ.թ.ա. I դ. ներթափանցելով Արևմուտք<sup>13</sup>, մասնավորապես Հոռմեական  
կայսրության սահմանները, արադությունը ձեռք է բերում անթիվ երկրպա-  
ղուններ և ստեղծում միթրայական մի ուրույն գաղափարախոսություն իր պատ-  
կերադրությունը՝ հարուստ և բազմազան մանրամասներով, խորհրդանշան-  
ներով, ամենատարբեր կրոնադադափարախոսական մեկնություններով: Այդ  
նոր գաղափարախոսությունն ու պատկերադրությունը, հանդես գալով Հոռ-  
մեական կայսրության ընդարձակ տարածքի վրա, առաջ են բերում դրու-  
ման տարրեր ձևեր՝ արձաններ, բարձրաքանդակներ, ղոհասեղաններ, որմնա-  
նկարներ և այլն, ծիսական-խորհրդապաշտական բազմապիսի արարողու-  
թյուններով<sup>14</sup>:

Միթրայական պատկերադրության մեջ ամենատարածվածը և սիրվածը  
Միթրայի՝ ցլի հետ մենամարտելու տեսարանն է. տրին հիմք է ծառայել հետ-  
ևյալ դիցարանական ավանդությունը<sup>15</sup> (տախտ. XXVII, 4): Արեի աստծու  
հետ հավատարմորեն դաշնակցած Միթրան հանդիպում է լեռնային արտա-  
վայրերում արածող, Յուպիտեր-Արամադադի կողմից ստեղծված նախասկզբ-  
նական կենդանի էակ, անդուսպ ու կատաղի ցլին: Միթրան խորամանկ հա-  
մարձանդությունը ամուր ընդունում է ցլի եղջյուրներից, թռչում նստում մեջքին:  
Մեծ դժվարությունը նրան հաջողվում է կատաղած ցլին փակել քարայրում:  
Սակայն վերջինս կարողանում է այնտեղից դուրս պրծնել: Այնժամ, արեի  
ստեղծածը տուրբկում է լրարբեր ադռավին Միթրայի մոտ, որպեսզի օգնի  
իր դաշնակից ընկերոջը՝ սպանելու փախստականին: Միթրան կատարում է  
Երկնքի հրամանը. նա իր ճարպիկ շան հետ հետապնդում է ցլին, որը փա-  
խել մտել էր քարանձավը. մեկ ակնթարթում Միթրան ընդունում է ցլին, մի

ձեռքով ունեցնող քոնած, մյուսով ցլի կողմ է խրում որսորդական դաշույնը: Կատարվում է հրաշագործություն. ցլի մարմնից առաջ են գալիս բոլոր բուժիչ խոտերն ու բույսերը, ողնուղեղից ժայթքում է հասկը, որից և հացը, իսկ արյունից՝ գինին:

Այսպիսով, ցլասպան հերոսը դառնում է նոր, հարուստ և բեղմնավոր կյանքի արարիչ:

Ահա այս աստվածությունն է նվիրված Դվինի ղոհասեղանը, որի քանդակապատկերներն իրենց ոճով ու բովանդակությամբ համապատասխանում են միթրայական գաղափարախոսությունն ու պատկերագրությանը: Համոզվելու համար անդրադառնանք ղոհասեղանի քանդակներին:

Արև խորհրդանշող սկավառակի ձիշտ հակառակ կողմի վրա պատկերված է թուշուն՝ ամենայն հավանականությամբ ագռավ, Միթրայի հավատարիմ ուղեկիցներից մեկը, որը Միթրայական պատկերագրության մեջ միշտ հանդես է գալիս արևի խորհրդանշանի հետ սերտորեն կապված (տախտ. XXVII, 2—3): Որոշ հուշարձանների վրա այն արևի առջևում է. որպես նրա ճառագայթների ստվեր, հաճախ Միթրայի ծածանվող թիկնոցի, այլ դեպքերում՝ քարանձավի կամարի եզրին, երբեմն էլ, երկնակամարի վրա կանգնած: Թուշնի (ագռավ, աքուղաղ) պատկերներ հանդիպում են նաև Պոնթոսի (Պաննոնիա) առաջին միթրեոմի Միթրային նվիրված ղոհասեղանի քանդակներում<sup>16</sup>:

Արևի խորհրդանշանը գրեթե միշտ առկա է միթրայական հուշարձաններում՝ լուսապսակի կամ շրջանի մեջ դրված, երբեմն էլ այն մի պարզ սկավառակ է փորագրված ճառագայթներով, որոնք արևի ամենաուպարդ պատկերումներն են. կան, անշուշտ, շատ ավելի կատարելագործվածները<sup>17</sup>:

Հաջորդ պատկերը ցլի գլուխն է. որի ճիշտ հակառակ կողմի վրա քանդակված է կարիճ՝ շոշափուկներով ցլի ամորձիքը բռնած (տախտ. XXVII, 1, 5):

Միթրան, ըստ առասպելի, այս երկնային ցլին գողանում է տոհմարից կամ քարանձավից և վարում երկնային օվկիանոսում: Պատահական չէ. որ ցլի եղջյուրները կիսալուսնաձև են. երկնային ցուլը, ըստ հին հավատալիքների, խոնավության աղբյուր էր՝ օժտված բեղմնավորման գործությամբ, որը հենց մարմնավորված էր լուսնի մեջ: Լուսինը ցլի սերունդների և նրանց կենսունակությունը պահպանողն էր: Որոշ հուշարձաններում կիսալուսինը պատկերված էր լուսնի մարդակերպ խորհրդանշանի զլիի վրա որպես եղջյուրներ (Lunar-aurus—լուսնացուլի մոտիվ), մի քանիսի վրա՝ լուսինը վարում է ցուլերով լծված կառքը, իսկ Ապոլլոմի (Դակիա) բարձրաքանդակում ցուլը պատկերված է լուսնաձև նավակի մեջ<sup>18</sup>:

Ցլասպան հերոսի ուղեկիցներից է կարիճը, որը հանդիպում է հատկապես Սիգոնի, Հոմի, Իալիայի և Միջին Իվրոպայի բարձրաքանդակներում և որմնանկարներում: Կարիճը մեծ մասամբ պատկերված է ցլի ամորձիքը իր շոշափուկներով բռնած (տախտ. XXVII, 4): Բացառություն են կազմում Սիդոնի և Քրեյսի բարձրաքանդակները, որոնք ապիս են նույն պատկերի տարբերակները: Ուշագրավ է, որ Հոմի և Բոնոնիայի բարձրաքան-

դականերում կարիճը նույնացվում է սաղարթախիտ և մրգառաս ծառի, յսկ ցլի գլուխը՝ անպառուղ ծառի հետ<sup>19</sup>։

Միթրայական գաղափարախոսությունը և պատկերադրությունն ուսույնասիրող Լ. Քեմբրլը հասամիտ չէ Ֆ. Կյումոնի այն տեսակետին, թե միթրայական կարիճը թշնամի էակ է և թունավորում է ցլի սերմը. ընդհակուռակը, կարիճի կապը մրգառաս ծառի, Միթրայի. ցլի սեռական օրգանների հետ մատնանշում է նրա բարերար աղղեցությունը (հասունություն, պաղարերություն)։ այս հավատալիքի արմատները, հավանարար, գալիս են ավելի ճիշտ սեմական կամ անատոլիական ավանդություններից, բան իրանականից։

Լ. Քեմբրլը նշում է նաև, որ Ջոզիակի կարիճ ամիսը մոտենում է իրանական օրացույցի Միթրա ամսին, որից սկսվում էր աշունը։ Հարավային Միջագետքում այն խորհրդանշում էր անպտուղ եղանակի վերջը և աշնանային անձրևների սկիզբը։ Հատ Քեմբրլի, ցլի և կարիճի վերոհիշյալ կապը կարող է լինել ցլի կենսունակությունը սեկ այլ ձևի վերափոխման խորհրդանշան<sup>20</sup>։ Լ. Քեմբրլը, ի սարբերություն Ֆ. Կյումոնի, օձը նույնպես համարում է Միթրայի ուղեկից՝ գործակից և օգնական։ Նա գտնում է. որ միթրայական օձի գաղափարախոսությունը չի ծագում իրանական՝ զրադաշտական կրոնից, որտեղ օձը Ահրիմանի կերպարանափոխումն է. և նշում է լճի բարերար դերը հունական կրոնում։ Օձը, ուտելով ցլի միսը և խմելով նրա արքունը կամ սերմը, հավանարար ապահովում էր μετεμψύχωσις-ը (հոգիների վերաբնակեցումը)։

Այսպիսով, կասկածից վեր է, որ Դվին քաղաքից հայտնարեբրված զոհասեղանը նվիրված է Միթրային և պատկանում է հռոմեական ժամանակաշրջանին։

Միհրի պաշտամունքը նշանակալից տեղ է գրավել հայ հեթանոսական կրոնում։ Հստ մատենագրական վկայությունների, Բագահառիճում Միհրին նվիրված է եղել հատուկ տաճար, որն ավերվում է Գրիգոր Լուսավորչի կողմից, գանձերը նվիրվում են աղքատներին, իսկ տաճարի վայրը՝ եկեղեցուն<sup>21</sup>։

Ֆ. Կյումոնի կազմած Միթրայի միստերիաների տարածման քարտեզի համաձայն Փոքր Ասիայում միթրայիզմի առավել մասսայականությունը աչքի է ընկնում հատկապես Կապադովկիան, որը կից էր Հայաստանի արևմրտյան սահմաններին։ Իսկ Հայաստանի տարածքում, ըստ այդ քարտեզի, նշված է Բագահառիճը, որտեղ, Կյումոնի կարծիքով, անկասկած կարող են հայտնարեբրվել միթրայական հուշարձաններ<sup>22</sup>։

Ինչպես հայանի է, նորագույն հետազոտողներից շատերը հակված են կարծեղու, որ Հայաստանում Տրգատ Առաջինի կառուցած Գառնիի հեթանոսական տաճարը ևս նվիրված է եղել Միթրա-Միհրին<sup>23</sup>։

Ուշագրավ է, որ Դվինի պեղումներից հայտնարեբրված մ.թ. I դ. պատկանող որձաքարի ծածկասալը իր նյութով, ձևով և քանդակագործական մշակումով բազմաթիվ զուգահեռներ ունի Գառնիի տաճարի ծածկող սալերի հետ<sup>24</sup> (տախա. XXVIII, 2, 3—4)։ Ավելին, Դվինից հայտնարեբրված ծածկի որձաքարի սալի և զոհասեղանի որձաքարի պետրոգրաֆիական և քի-

միական անալիզները պարզեցին, որ երկուսն էլ միևնույն րադադրութունն ունեն, երկուսի հումքն էլ վերցված է նույն հանքավայրից, այն է՝ Գտոնի գետի հովտով Գառնի դյուղից մինչև Ջաննաթլու գյուղի ավերակները ձգվող անդեղիտա-բաղալտային շերտից. այդ վայրում պահպանվել են միջնադարյան քարհանքերի հետքեր (տախտ. XSLX, 1, Ջ)\*: Բացի այդ, ըստ ստույգ աղերսների, Դվինի ծածկասալը, զոհասեղանը, ինչպես նաև Գառնիի հեթանոսական տաճարի ծածկի սալերն աներկրայորեն պատկանում են հոռմեական ժամանակաշրջանին: Այսպիսով, համաձայն հղած տվյալների, կասկածից վեր է սրանց կերտման ժամանակաշրջանի եթե ոչ նույնությունը, ապա դոնե մերձավորությունը:

Հայտնի է, որ Հոռմ ժամանած Տրդատ Առաջինը ներոնին դիմում է Մըթրա տիտղոսով<sup>25</sup>. մի հանդամանք, որ եթե մի կողմից վկայում է Տըրդատի համար Միհր-Միթրայի լուսի ու մեծության աստվածություն լինելը. ապա, մյուս կողմից հավաստում է. որ ներոնի համար ևս Միթրան սըրազան մեծ հեղինակություն պետք է լիներ, որպեսզի Տրդատի արտաբերած աստվածային տիտղոսը շոյեր կայսեր քահանա ինքնասրբությունը:

Լատինական աշխարհում Փոքր Ասիայից ներթուփանցած Միհրական կրոնը մ.թ. I դ. արդեն բավական լայն տարածում էր գտել<sup>26</sup>: Հետևաբար, Հոռմում աստիճանաբար մոզայիկ դարձող Միթրա-Միհրի պաշտամունքը, որ Փոքր Ասիայում և Հայաստանում արդեն վաղուց ի վեր ընտանի էր, պառնառ դարձավ, որ ներոնից թագադրված Տրդատ Առաջինը, նույն ներոնից անվեր» ստացած 50 միլիոն դենտրի ու Հոռմից բերած շինարար վարպետների օգնությամբ Հայաստանում ծավալած շինարարական լայն գործունեության մեջ պատշաճ տեղ հատկացներ նաև պաշտամունքային կառույցների, և առաջին հերթին իր ամենանվիրական աստծու տաճարների շինարարությանը: Իսկ այդպիսին, ինչպես ցույց է տալիս Գառնիի հումարեն արձանագրության մեջ Տրդատին տրվող «Հելիոս» (արեգակնային) տիտղոսը ('Ηλιος Τριδότης), որ Միհր-Միթրայի աստվածային տիտղոսն էր, կարող էր լինել միայն Միթրան: Եվ միանգամայն բնական է, որ Տրդատ Առաջինի կառուցած (?) Գառնիի տաճարը նվիրված լիներ Միթրային:

Բացի այդ, հավանական է, որ հոռմեացի վարպետների օգնությամբ նույն հոռմեացիներից ավերված Արտաշատ մայրաքաղաքը վերականգնող և Գառնին շինացնող Տրդատ Առաջինը շինարարական վերականգնման աշխատանքներ կատարած լինի Արտաշատի և Գառնիի միջև ընկած հնադարյան ընկավայր Դվինում (կամ վերջինիս մերձակայքում), որն ըստ որոշ հետազոտողների, մ.թ. 59 թ հոռմիացիների կողմից ավերման նույն թախտին էր տրժանացել, ինչ Արտաշատը<sup>27</sup>: Կարելի է ենթադրել, որ Տրդատ Առաջինի կողմից աչքաթող չի արվել արքայական երկու նստավայրերը (Արտաշատն ու Գտոնին) միմյանց հանդուցող Դվինը: Հնարավոր է, որ այստեղ

\* Այս արժեքավոր ուսումնասիրությունները կապարել են կրկրարանական գիտությունների թեկնածուներ՝ Ա. Ա. Ջաֆարով և Կ. Ի. Կարապետյանը:

ես Տրդատը կառուցած լինի մինչև այժմ մեզ անհայտ մի որբավայր, որտեղ (քանդակվել) նաև դրվել է խնդրո առարկտ զոհասեղանը:

Արևմտյան պաշտամունքներում Միթրան հանգես է գալիս իրրև փրկիչ-աստված, որ ընդհարական է փրկչաբանական (սոտերոլոգիական) կրոնների դարաշրջանին<sup>28</sup>:

Միհրի առասպելների ու պաշտամունքի հետքերը քրիստոնեության հաղթանակից հետո գեո երկար շարունակել են պահպանվել հայ եկեղեցական մտայնության և ժողովրդի դիտակցության մեջ: Դրանց լավագույն ապացույցներն են հայկական հոգեոք երգերու, մասնավորապես շարականներում առկա լուսերգության ու լուսապաշտության հտրուստ երազմազան մոտիվները, որոնց մեջ ուսումնասիրողներն իրավացիորեն տեսնում են միհրապաշտության հիշատակներ<sup>29</sup>:

Առուվել խոսուև և ուշադրավ են «Սասնա ծոեր» ժողովրդական վեպի Մեծ և Փոքր Մհերի կերպարներում ու արարքներում պահպանված Միհրի առասպելի և աստվածային դերի այն րացահայտ փաստերը, որոնցով աւյուծասպան հերոսն ու անարդար և պիղծ աշխարհից հեռացող, քարսյրում փակվող, համրհհանուր հշմարտության ու արդարության աիրապետության պայմաններում նորից լույս աշխարհ էլնելու հույսով սպասող գիցամարտիկ դուցազնը դառնում է մի րաղծալի մեսիա, մի նոր սկիզբ լույսի և արդարության: Միթրա-Միհրի այս փրկչական գերը, որ պարզորոշ պահպանվել է «Սասնա ծոեր» ժողովրդական վեպում միանգամայն համապատասխանում է արևմտյան միթրայիզմին<sup>30</sup>:

Հետևարար, արևմտյան միթրայիզմին ընորոշ Դվինի զոհասեղանը կարող էր պաշաելի լինել նաև ահղի բնակչությանը:

Եթե Հայաստանը մինչև այժմ սոսկ մատինագրական վկայություններով, ժողովրդական րանավոր ավանդություններով, տեղանուններով ու անձնանուններով, հնամենի սովորույթներով, վերապրուկներով էր մտնում միհրապաշտական երկրների արեալի մեջ<sup>31</sup>, ապա այժմ, Դվինից հայտնարերված զոհասեգտնի շնորհիվ այդ կարծիքն ամրապնդվում է նյութական մշակույթի անաուարկելի տվյալով: Հսրկ է նշել, որ Արտաշատում և Քառնիում հայտնարերված հեծյալի կավե արձանիկները ևս պատկերում են Միհրին<sup>32</sup>:

Հոոմեական համանման կոթողների ոճով քանդակված միթրայական զոհասեգտնի առնայությունը Դվինում, վերոհիշյալ ենթադրությունից զատ, հիմք է տալիս նաև նույնքան հնարավոր մեկ այլ վարկածի, որը մեզ ավելի հավանական է թվում:

Տրայանոս կայսեր օրոք (98—117) մ.թ. 114 թ. Հայաստանը հռչակվում է հոոմեական նահանգ: Կայսրը հաղթարշավով հասնում է Արտաշատ և, Դիոն Կասսիոսի վկայությամբ, նվաճված Հայաստանում տեղակայում պահպան զորքեր<sup>33</sup>, 1967 թ. Փոքր Վեղի դյուղում հայտնարերված լատիններեն արձանագրություններից պտրղվում է, որ Արտաշատում հիշյալ ժամանակաշրջանում անդակաված են եզել I-ին Իտալիկների և IV Սկյութական լեգիոնները: Այդ արձանագրությունները ուսումնասիրող Բ. Ն. Առաքելյանի

կարծիքով, ընդհանրապես արձանագրությունը կասկած չի թողնում, որ Տրայանոսը գրավել էր Հայաստանի մեծագույն մասը. նաև նրա մայրաքաղաք Արտաշատը և Արարատյան գաղտը...»<sup>34</sup>:

Հայանի է, որ գրավված երկրի ներսում, անգամ հրկրորդական ճանապարհների անվտանգության, ինչպես նաև ընդհանուր խաղաղության պահպանության նպատակով, ճանապարհների հանգուցակետերում, տվյալ լեզուների կայանի սահմանի վրա, երբեմն էլ դրանից գուրս ստեղծվում էին ղինվորական հատուկ պահակակետեր (stationes). ուր և հիմնվում էին փոքր սրբավայրեր և տաճարներ՝ քրիստոսի զոհասեղաններով (գոյություն են ունեցել նաև շարժական զոհասեղաններ, որոնք կապված չեն եղել որևէ ճարտարապետական կառույցի հետ), ղինվորների կրոնապաշտամունքային պահանջները բավարարելու համար<sup>35</sup>: Այս երևույթը խլատ բնորոշ է հղև չոտմեական կայսրության գրեթե բոլոր նահանգներին: Ըստ Ֆրանց Կյումոնի, Միթրայի պաշտամունքը հոտմեական լեզուներում տարածված էր չլիավորապես ղինվորական ճամբարներում: Արեելյան աստվածություններից հոտմեական բանակում ամենասիրվածը եղել է Միթրան: Միթրայի պաշտամունքի տարածման զլիավոր գործոնը, նույն ուսումնասիրողի կարծիքով, եղել է գործը: Նա անգամ միթրայական կրոնն անվանում է «ղինվորների կրոն»<sup>36</sup>: Եվ այդ այն պատճառով, որ Միթրան փրկիչ էր, աղաոարար մարտիկ, մահկանացուների ուղեկից, աջակից և ոգնական, միշտ արի գեմ պայքարող, Տշմարտության և արդարության հովանավորող և ուշտպան:

Դվինը, լինելով հոտմեացիների գրաված Արարատյան գաղտի տվյալ ատվածի ամենաբարձր կետը, անկասկած արժանացել է հատուկ ուշադրության: Հավանաբար հոտմեական լեզուներից մեկի պահուկակետը է ղել է Դվինում իր սրբավայրով, ուր և ղրվել է Միթրային նվիրված գոասեղանը:

Այսպիսով, առաջին անգամ Հայաստանի տարածքում հայտնարերվել է միթրայական բնորոշ հուշարձան, հոտմեական ժամանակաշրջանի նույնուտիպ կոթողներին հատուկ գծերով, որ տանում է մ.թ. I—II գգ.:

Հոտմեական ժամանակաշրջանի ոճով ու արվեստով կերտված Միթրայի ղոհասեղանի առկայությունը Հայաստանի չին և միջնագարյան մայրաքաղաքների մերձակայքում նոր շավիղներ է բացում հայ-հոտմեական կուլուր-պատմական առնչությունների հետաղոտման բնագավառում:

Վերին Արտաշատում հողային աշխատանքների ժամանակ պատահական հայտնարերվել է կարասային թաղում: Կարասի մեջ՝ հանգուցյալի կողքին գտնվել են ապուկե սրվակներ (տախա. XXV, 1—4), մատնեքաղոր ուլունք պատրաստված եգիպտական մածուկից և ժովային խեցու բեկորներ: Արտաքին հարգարմամբ ակնաոու է գրեթե ձվաձև իրանով, հարթ հա-

տակով, երկար վզով, դեպի դուրս ուղղված նուրբ շրթով անկանթ սրվակը (չափերն են. բարձր. 8 սմ, հատակի տր. 2,5 սմ, բերանի տր. 1,6 սմ) (տախտ. XXV, 1): Անոթը բոլորված է երեք պարզագոտիներով: Ամենալայնը՝ միջին մասի ղարզագոտին է, որը վեց սլուններով երկայնակի բաժանված է հավասար հատվածների՝ յուրաքանչյուրում տարատեսակ անոթների (ամֆորա, հիդրիա, կանթարոս) ուռուցիկ պատկերներով: Սրանք հզերված են նույնպիսի ուռուցիկ, բայց ծաղկաշղթայաձև ղարզագոտիներով: Սրվակը պատրաստված է ռարակ, կապտավուն ապակուց կաղսուպարի մեջ փշելու եղանակով:

Ուռուցիկ գարգապուտկերներով՝ ռարակ, կապտավուն ապակուց պատրաստված նման, բայց կանթավոր սրվակ՝ հայտնաբերվել է նաև Գառնիի դամբարանադաշտում՝ սալարկղային թաղսան մեջ<sup>37</sup>:

Մասնագետ-ուսումնասիրողները բազմիցս անգրադարձել են հիշյալ սրվակների վերլուծությանը, պարզել՝ պատրաստման եղանակը, ծագման վայրը և ժամանակը: Հայաստանից գտնված այս անոթները թե՛ ձևարարներ են, թե՛ պատրաստման տեխնիկայով, ապակու որակով և հաճախ անգամ գույնով սերտորեն աղերսվում են Սիրիա-Սիրոնյան ուռուցիկ ղարզապատկերներով սրվակներին, որոնց մեծագույն մասը համարվում է մ.թ. I դ. արտադրանք<sup>38</sup>:

Երկրորդ սրվակը Լրկկանթանի է, ուռուցիկ իրանով, ցածրադիր օղակավոր նստուկով, գլանաձև երկսր վզով, որի վրա ծալված, լայնացող պսակով շուրթը բոլորված է ակոսագծով (չափերն են. բերանի տր. 2,5 սմ, նստուկի տր. 3,5 սմ, բարձր. 7 սմ) (տախտ. XXV, 2): Վզի միջին մասից դեպի վեր ցցված ակոսադարձ կանթերը հանդուս են անոթի ուսերի վրա: Սրվակը պատրաստված է՝ կանաչավուն, իսկ պսակի եղրերը՝ կաթնավուն անթափանց ապակուց, ազատ փշման եղանակով:

Վերը նկարագրված անոթը ձևարարներն և պատրաստման տեխնիկայով հարում է տարիների ընթացքում Գառնիի դամբարանադաշտի սիդոնների շնորհիվ (մեկ սրվակը՝ Սևանի ավազանից) ձեռք բերված ուռուցիկ իրանով, ձևավոր կանթերով՝ կապտավուն, մանուշակագույն, կանաչավուն, մուգ դեղնավուն ապակուց պատրաստված նման անոթների խմբին<sup>39</sup>: Վերջիններիս աղերսվում են Մինգեչաուրի և Ուրբնիսիի նմանօրինակ նյութերը<sup>40</sup>: Այս խմբի անոթների մանրագնին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Երանք արտադրվել են Իսրայելի միջերկրածովյան առափնյա կենտրոններում, հատկապես՝ Սիրիայի մ.թ. առաջին դարերի ապակեգործական արհեստանոցներում<sup>41</sup>:

Մյուս երկու միանման սրվակներից յուրաքանչյուրի կոր հատակից իրանն աստիճանարար նեղանալով սահուն անցումով փոխարկվում է փոված նուրբ շրթով, երկար, նեղ վզի (չափերն են. բերանի տր. 1,8 սմ, նստուկի տր. 3 սմ, բարձր. 8 սմ, վզի երկար. 3 սմ) (տախտ. XXV, 3—4): Անոթները պատրաստված են բաց կանաչավուն հաստ ապակուց, ազատ փշման եղանակով:

Նման անոթները իրենց բաղմամբիվ տարատեսակներով ունեն ուրույն

տեղ Հայաստանի մ.թ. 1—II դդ. ապակու մեջ: Սրանք ևս ուսումնասիրողների կողմից համարվում են ներմուծված Սիրիայից<sup>42</sup>:

Հյուսիս-մերձսևծովյան բնակավայրերի գամբարանագաղտերի պեղումներից ի հայտ եկած ձևաբանորեն նույն սրվակները ժամանակագրորեն ևս անշվում են վերոհիշյալ օրինակներին<sup>43</sup>:

Այսպիսով, Վերին Արտաշատի սրվակները համարվում են մ.թ. I—II դդ. սիրիական արտադրանք, իսկ նույն կարասում հայտնաբերված I դ. անոթների շնորհիվ թվագրվում ավելի ստույգ՝ մ.թ. I դարով:

Մերձավորարևելյան ծագում ունեցող ապակե անոթների վերոհիշյալ փոքր հավաքածուն խրատ բնորոշ է քննվող ժամանակի Հայաստանի ապակեգործությանն ընդհանրապես: Հայաստանի I—II դդ. ապակու ստվար մասը ներմուծված է հենց Մերձավոր արևելքի ապակեգործական կենտրոններից և հատկապես՝ Սիրիայից (Սիզոն, Դուրա-Նվրոպոս)<sup>44</sup>, Վերին Արտաշատի ապակյա անոթների խումբը արտացոլում է ժամանակի ապակեգործական տեխնոլոգիային համապատասխան աղատ և կողապարի մեջ փշման եղանակները: Այսպիսով, եթե այս անոթների ձևաբանական և տեխնոլոգիական քննությունը մեկ կողմից բացահայտում է մերձավորարևելյան, հատկապես սիրիական, ապակեգործական կենտրոնների արտադրանքի բնույթը, արտացոլելով առևտրատնտեսական և մշակութային առնչությունները այդ երկրների հետ, ապա մյուս կողմից՝ օգնում է սահմանադատել նաև տեղական նմուշները:

Ուշագրավ է, որ քննվող ապակե անոթների թվագրությունը համընկնում է բավական խաղաղ ժամանակներին, երբ երկու աշխարհակալ ունությունների՝ Հռոմեական կայսրության և Պարթևստանի միջև քաղաքական պայքարը ստանում է առևտրատնտեսական բնույթ, նպաստելով Հայաստանը՝ մասնավորապես Արտաշատը, միջուղային տարանցիկ առևտրի կենտրոն դառնալուն՝ սկսած թերևս Տրդատ Առաջին Արշակունու գահակալության տարիներից: Ուստի սիրիական ապակու երևան գալը Դվինում պետք է համարել հենց Արտաշատի տոկարատնտեսական և մշակութային առնչությունների արգասիք:

Վերին Արաաշատի կուրասային թաղման մեջ ապակե սրվակների հետ հայտնաբերվել են նաև մատնեքավոր ուլունք և ծովային խեցի:

Մատնեքավոր, զնգաձև, թելի խոշոր անցքով ուլունքը պարաստված է այսպես կոչված «եգիպտական մածուկից»: Հին եգիպտական ծագում ունեցող նման ուլունքները՝ համարվելով արտասանման առարկա, լայն տարածում են ստանում աշխարհում: Հայաստանում երևան գալով մ.թ.ա. I հազարամյակի կեսերից հայտնաբերվում են ե՛ հելլենիստական, և՛ հռոմեական դարաշրջանի հուշարձաններում: Ուշագրավն այն է, որ Գառնիի գալուստի արտադրանքի թաղումների մեջ վերջիններս հաճախ հայտնաբերվում են մ.թ. I—II դդ. ներմուծված ապակե սրվակների հետ, ինչպես և տվյալ՝ Վերին Արտաշատի դեպքում<sup>45</sup>:

Ուշագրավ են նաև Միջերկրական ծովի արևելյան ափերից բերված սագափե տափակ խեցու բեկորները: Նման, բայց վերամշակված ծովային խե-

ցի գտնվել է Գառնիի քարարկղայրն Բաղուսից՝ մերձավորարևելյան կենտրոններից ներմուծված ապակե անոթների հետ<sup>45</sup>, ի դեպ, Գառնիի այս նույն դամբարանի կողքից, հողի միջից հայտնաբերվել է ևս մեկ ապակյա անոթ և մատնեքավոր ուլունք՝ նույնպես պատրաստված եգիպտական մածուկից: Գառնիի ծովային խեցին ծառայել է իրրե հերադարդ, եսկ Վերին Արաշատին՝ հավանաբար օգտագործվել անուշահոտ յուղերի համար:

Հռոմի կայսերական Օգոստոս Չկտավիանոսի (2), Գոմիտիանոսի (1), ինչպես նաև Բոսփորի թագավորության՝ Ռիսկուպորիդես II-ի (1) և Ռիսկուպորիդես VI-ի (1) դրամների ոչ մեծ հավաքածուն նույնպես առնչվում է Հայաստանի մեր թվականության առաջին դարերի առետրատնտեսական կյանքի հետ:

Օգոստոս Չկտավիանոսի (մ.թ.ա. 30—մ.թ. 14 թթ.) դենարների (լուգդունում, մ.թ.ա. 2—մ.թ. 11 թթ., I. տր. 17—18 մմ, կշ. 3,40 գ: II. տր. 18 մմ, կշ. 3,47 գ) ա. երեսին պատկերված է Հռոմի կայսեր՝ Օգոստոս Չկտավիանոսի պսակադարդ գլուխը՝ ուղղված դեպի աջ և արձանագրություն՝ CAESAR AVGVSTVS DIVI F PAT [ER PATRIAE], իսկ հակառակ երեսին՝ նրա գույգ որդեգիրներ՝ Գայուսի և Լուցիոսի սխեմատիկ պատկերները հետևյալ արձանագրությամբ՝ [C.L.] CAESARE[S] AVGVSTI F. COS. DES IG [PRINC IVVENT]<sup>47</sup> (տախտ. XXVI, 5):

Գոմիտիանոսի (81—96 թթ.) դենարի (Հռոմ, 95 թ., տր. 18—19 մմ, կշ. 3,05 գ) ա. երեսին ղրոշմված է կայսեր պսակադարդ գլուխը՝ ուղղված դեպի աջ և արձանագրություն՝ IMP CAES DOMIT AVGV GERM PMTRPXIII, իսկ ր. կողմում՝ տղամարդու պատկեր՝ աջ ձեռքով հենված նիզակին և արձանագրություն՝ IMP XXII COS XVII CENS. PPP: Դրամի իրկու երեսն էլ եգերված է կետադարդ շրջանակով<sup>48</sup> (տախտ. XXVI, 5):

Դվինում ի հայտ եկած Օգոստոս Չկտավիանոսի ճիշտ նույն դենարների հոսքով մ.թ. I դ. Հայաստանում սկիզբ դրվեց դրամաշրջանառության նոր՝ կայսերական փուլին<sup>49</sup>: Չկտավիանոսի քննվող դենարները փաստորեն, երկու հարյուրամյակ շարունակ հանդիսացան Հռոմի միջազգային առևտուրը խորհրդանշող դրամներ, ի տարբերություն, որոշակի նեղ քաղաքական նկատառումներ հետապնդող կայսերական շատ ւսյլ դրամների:

Բոսփորի թագավորության արքա Ռիսկուպորիդես II-ի (68—92 թթ.) սևստերցիայի\* (տր. 24 մմ, կշ. 5,54 գ) ա. երեսին ղրոշմված են արքայի դեպի աջ ուղղված, իսկ ր. երեսին՝ Ափրոդիտեի կիսանդրին նույնպես դեպի աջ և արձանագրություն՝ K—[Δ]=24 միավորի (տախտ. XXVI, 9):

Բոսփորի թագավորության վերջին՝ Ռիսկուպորիդես VI-ի (318—332 թթ.) պղնձյա ստատերի (տր. 8 մմ, կշ. 7,65 գ) ա. երեսին ղրոշմված է արքայի կիսանդրին՝ գեպի աջ, իսկ ր. կողմում հռոմեական կայսեր կիսանդրին

\* Դրամագետ ն. Ա. Յրյուզյան ուսումնասիրվող դրամը համարում է սևստերցիա:

նույնպես ուղղված աջ՝ հետևյալ արձանագրութեամբ. ΓΚ—X [= 623 թ. բոսփորյան թվականութեան]=մ.թ. 326 թ.<sup>50</sup> (տախտ. XXVI, 8):

Բոսփորի թագավորութեան գրամները բնորոշ չեն Հայաստանի գրամաշարձանութեանը ընդհանրապես. Միայն Կոտայքի նմուշներ են՝ այսինքն՝ Սավրոմատ I-ի (93—123 ՔՄ.) պղնձյա գրամը՝ հորվիրապից և Ռիսկուպորիգես III-ի (210/211—226/227 թթ.) էլեկտրապից գրամը՝ Երևանի ժայրամասից<sup>51</sup>:

Դվինի հիշյալ բոսփորյան գրամները արտացոլում են Բոսփորի թագավորութեան թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական առումներով րացարձակապես տարբեր ժամանակաշրջաններ:

Մ.թ. I դ. Հռոմեական կայսրությունը թեև իր գերիշխանութեան ենթարկեց Բոսփորի թագավորությունը, այսուհանդերձ, Ռիսկուպորիգես II-ին և նրա հաջորդներին հաջողվեց պահպանել շեղբութուն և զբվտգել ոսկյա և պղնձյա գրամներ: Վերջինիս, իհարկե, նպաստեց հեղինակութեան պահպանման և պետական զանձարանի լրացման նպատակով Հռոմի իսկ վարած Կոտայքի գիվանագիտական քաղաքականությունը<sup>52</sup>: Մինչդեռ Ռիսկուպորիգես VI-ի օրոք Բոսփորի թագավորությունը կանգնած էր տնտեսական քայքայման շեմին, քնականաբար անկում էր ապրում նաև գրամների թողարկման գործը, որի հետևանքով գրամի զրկագումը իսպառ գազարեցվեց այսպիսով՝ բոսփորյան թվականութեան 629 թ. (=մ.թ. 332/33 թթ.)<sup>53</sup>:

Բոսփորի թագավորութեան գրամների խումբը ուրվագծում է Հայաստանը առևարատնտեսական առնչությունների հյուսիսային ուղիները՝ նրշված գարեբում ծաղկում էր ապրում: Սև ծովի ափերից՝ Տանալիսից և թե Կողքիսից եկող առևտրակտն հայտնի այն մայրուղին, որն Արտաշատի վրայով անցնում էր դեպի հարավ, գուրս գալով Պարսից ծոց, տնտեսից էլ դեպի Ցելսոնի և Հնդկաստանի նավահանգիստները<sup>54</sup>: Ուստի Բոսփորի թագավորութեան գրամների ներթափանցումը Արտաշատ, Դվին և նրանց շրջակայքը թերևս կարող էր իրականանալ հենց վերոհիշյալ ուղու միջոցով: Ուշագրավ է Բոսփորի թագավորութեան տսիական մայրաքաղաք՝ Ֆտնագորիայում Արտավազդ II-ի պատկերով բրոնզե մատանու հայտնաբերման փաստը<sup>55</sup>:

Այս և վերը նշված հայանաբերումների շնորհիվ Հայաստանի և Բոսփորի թագավորութեան միջև կուտուր-պտտմական առնչությունների հնազորութեան մի նոր ասպսրեղ է լոցողում:

• • •

Այսպիսով, վերը հիշատակված մեր թվակտնութեան առաջին գտրերին պատկանող հնագիտական նյութերը տնտիկ հուշարձանի պատմութեան երկրորդ շրջափուլից պահպանված սոսկ տրևագանքներ են: Հետևարար, փաստացի նյութի այս աստիճան սակավութունը գեոևս հնարավորութուն չի ընձեռում կաղմել քննվող դարաշրջանի կյանքի ամրողչական հնագիտական պատկերը, իմաստավորել վերջինս գիտական պատշաճ մակարգակով՝ եղած պատմական վկայությունների լույսի ներքո:

## Վ Ե Ր Զ Ա Ք Ա Ն

Դվինի անտիկ գտրաշրջանի հնագիտական շիրտի և նյութական մշակութի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ սկսած մ.թ.ա. II դ. այստեղ գոյություն է ունեցել մի ամբողջական բնակավայր իր գամբարանադաշտով:

Պատմական տեսակետից դա խիստ բարենպաստ մի ժամանակաշրջան էր, երբ Հայաստանը Հռոմի կողմից Սելևկյան պետության պարտության շնորհիվ թոթափում է քաղաքական այն կաշկանդվածությունը, որն արգելակում էր տրդեն հելլենիստական քաղաքակրթությունը թևակոխած երկրի սոցիալ-տնտեսական կյանքի լիարժեք զարգացումը: Քաղաքական և տնտեսական այս նպաստավոր իրողությունն արգյունքը դարձավ Արտաշատյան հարստության հիմնադիր՝ Արտաշես Առաջինի (մ.թ.ա 189—մոտ 160 թթ.) ուղղ գործունեությունը: Վերջինիս կողմից հայկական պետության սահմանների ընդարձակումը, որ զլիավորուպես ընթացավ հայկական հողերի միավորման նպատակով, պստկվեց հայ ժողովրդի կաղմավորման երկարատև և բարդ պրոցեսի ավարտմամբ: Ակնհայտ էր, որ երկրի սոցիալ-տնտեսական ամուր հիմքը միայն կարող էր իրակտնացնել և շարունակել արգեն ձևավորված յայնածավալ և անկախ հայկական պետության հետագա կյանքն ու ձգտումները: Բնականաբար երկրի ներքին կյանքը և նշանավորվեց մի շաբթ բարեփոխումներով՝ տնտեսական, վարչաքաղաքական, ռազմական, մշակութային բնագավառներում:

Ստրկտուրական հասարակարգի զարգացման նշանակալից դրսևորումներից էր Արտաշես Առաջինի կողմից իրագործվող հատկապես ծավալուն քաղաքաշինությունը, որի սկիզբը դրվել էր դեռևս մ.թ.ա. III դ.՝ Այգ տեսակետից նշանակալից երևույթ էր մայրաքաղաք Արտաշատի հիմնադրումը: Այն կառուցվեց Արաքս գետի միջին հոսանքի հովտում՝ Արարաայան գաղտավայրում: Ծիշտ և հմարեն ընտրված աշխարհագրական գիրքը հենց սկզբից ապահովեց թագավորանիստ քաղաքի բոլոր աճն ու զարգացումը, թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական առումներով, որը և շուտով նպաստեց նրա հոշակի տարածմանը առաջավորասիական նշանակալից քաղաքների շարքում:

Հավանաբար, ծավալուն շինարարության բոլոր զարգացման այս ժամանակաշրջանում, մասնավորապես Արաաշատ մայրաքաղաքի հիմնադրման

առնչութեամբ, իր արժանի տեղն ու գնահատումն է ունեցել նաև Դվինի բլուրը՝ աշխարհագրական նպաստավոր դիրքի շնորհիվ:

Ինքնին հասկանալի է, Արարատյան դաշտավայրի ընդհանուր հողերում Աղատ գետի ստեղծագործող ապահովում էր Դվինը թե՛ խմելու ջրով և թե՛ նրա հողերի ոռոգումը, որոնք մեծապես նպաստում էին նորաստեղծ բնակավայրի տնտեսական զարգացմանը: Բացի այդ, Դվինի բլուրը Արարատյան դաշտավայրի տվյալ հատվածում ամենաբարձր կետն էր և շրջակայքի նկատմամբ ունեւ իշխող դիրք: Ամրացված բնակավայրը շրջակա ընկերներին համար հարմար ապաստան էր և գիտակետ: Այն կարևոր դեր էր խաղում նորաստեղծ մայրաքաղաքը հյուսիս-արևելքից պաշտպանելու համար: Եվ, ի վերջո, Դվինի բլուրը գտնվելով Արտաշատի և Գառնի ամրոցի հանգուցակետում կարող էր մեծապես նպաստել արքայական այս երկու նրասավայրերի հաղորդակցմանը: Հարկ է, սակայն նշել, որ Դվինը իբրև բնակատեղի նոր չէր, այստեղ դեռևս մ.թ.ա. III հազարամյակում բավական երկարաակ գոյություն է ունեցել ընդարձակ մի բնակավայր իր գամբարանադաշտով, իսկ մ.թ.ա. I հազարամյակի սկզբում այն հղել է արհեստագործական և պաշամունքային նշանակալից կենտրոն: Ուստի չի բացառվում, որ անտիկ ժամանակաշրջանում բնակատեղին, թեև այնտեղ ընդհատված կյանքին, պահպանած լինեւ պաշտամունքային ավանդական նշանակությունը, մի հանդամանք, որն իր հերթին, բնականաբար, կնպաստեւ նորաստեղծ բնակավայրի հիմնադրմանը արդեն հնից հնդիակություն վայելող այդ բլրի վրա:

Եթե անդամ սոսկ տեսական դիրքերից նայենք Դվինի անտիկ բնակավայրի հիմնադրման խնդրին, ապա պատմական ժամանակաշրջանի ուսումով խիստ բնական է դառնում կենտրոնական իշխանության նստավայրի և մերձակա բնակավայրերի միջև դոյություն ունեցող փոխադարձ կապերի ամրապնդումը՝ նորաստեղծ մայրաքաղաքի անմիջապես թիկունքում և գրեթե միաժամանակ պաշտպանական և հաղորդակցման նոր հենակետերի ստեղծման անհրաժեշտությունը:

Հնագիտական ուսումնասիրությունները հավաստում են Արտաշատը հյուսիս-արևելքից օղակող բնակավայրերի բավական հզոր պաշտպանական գոտու գոյությունը: Դրանք անդադրված են ներկայիս Դիտակ, Նորաշեն, Քաղցրաշեն գյուղերի տարածքում: Դվինը ես, հավանաբար, իր կարևոր ուրույն տեղն է ունեցել հիշյալ պաշտպանական գոտում: Թերևս խորքը մերարեբրում է նաև այդ պաշտպանական գոտուն, երբ V դ. պատմիչ Նղիշեն գրում է՝ «Յայնմ ժամանակի դարձեալ յարձակեցան ի վերայ բերդիցն և աւանաց, զոր ունէին Պարսիկքն ի տեղիս տեղիս. յամրոցս աշխարհին, տապալէին քանդէին գրեականութիւնս նոցա: Առաջին դմե՞ն Արտաշատ հանդերձ աւանօք իւրովք. և առիուլն զանմասոյց ամուրսն՝ զԳառնի քաղաքն, զԱնին, զԱրտագերս և զաւանս իւրեանց. ...»: Մեկ այլ տեղ հիշատակվում է. «... զնահանգն Արտաշատու և զԱրտաշատն ինքնին գլխովին, և զամենայն դեղս և զաւանս, որ շուրջ զնովաւ էին ...»:

Անտիկ Դվինի նյութական մշակույթի ուսումնասիրության շնորհիվ ուրվագծվում է բնակավայրի տնտեսական և մշակութային կյանքի պատկերը:

Դվինի անտիկ բնակավայրը, գտնվելով Արարատյան գաղտավայրում՝ երկրագործական այդ խոշորագույն օջախում, բնականաբար աչքի է ընկել երկրագործության ղտրագացման ղգալի մակարդակով: Այն պայմանավորված էր առաջին հերթին ռոոգմտն ցանցի առկայութլամբ, որն իրականացվել է, ամենայն հավանականութլամբ, Աղատ գետի շնորհիվ Դվինում: Կայտնարեբրված երկրագործական հումքի վերամշակման հնագիտական նյութերը, մի կողմից րացահայտում են բնակավայրի երկրագործական բնույթը, մյուս կողմից՝ ուրվագծում տնտեսական գործունեութլամբ պատկերն ու մակարգակը: Պտրղվում է, որ բնակչութլունը ինքն է իր առաջին անհրամշտութլամբ տնտեսական պահանջները հոգացել:

Հացահատիկային կուլտուրաների մշտկման և վերամշակման նյութերն վկայութլուններն են Դվինից հայտնուբերված, ժտմանակաշրջանին բնորոշ ակահավոր աղորիքները, սանգերը, մեծ ու տարողունակ կարասները:

Այգեգործութլամբ, մասնավորապես խաղողագործութլամբ-գինեգործութլամբ անտարկելի ապացույցներն են տարապանների, ինչպես նաև մեծ կարասների առկայութլունը: Արարատյան գաղտավայրում խաղողի վերամշակումը տնտեսութլամբ կարևոր և եկամտարեր ճյուղերից մեկն է եղել գրեթե բոլոր գարաշրջաններում: Արտագրական նշանակութլուն ունեցող այգ ստլերը ապահովել են գինեգործութլամբ բարձր արտագրողականութլունը: Սրանց արտագրական նշանակութլունը փաստորեն կրկնապատկվում է. եթե նկատի առնենք, որ վերջիններս, ինչպես ընգունված է եղել անտիկ աշխարհում, օգտագործվել է նաև ձիթագործութլամբ բնագավառում: Հնագիտական և աղգագրական նյութերի տվյալներով չի բացառվում, որ տարապանները ճառայած իրենն նաև ձեթ ստանալու նպատակին: Ուտի, բնակչութլունը գրաղվել է ձիթագործական կուլտուրաների, մասնավորապես տիղկանեփի մշակումով, որի անհրաձեշտութլունը նշանակալից էր բնակչութլամբ համար և թե որպես ղեղամիջոց, և կենցաղային կարիքների նպատակով՝ բնակարանները լուսավորելու և այլն:

Գյուղատնտեսութլամբ մեջ ոչ պակաս կարևոր գեր է ունեցել նաև անասնապահութլունը: Դվինի հելլենիստական շերտում հաճախ հայտնարերվում են րաղմաթիվ մանր և խոշոր եղջերավոր կենգանիների ոսկորներ և անասնապահական մթերքների մշտկման ժամանակ օգտագործված խեցեղեն անոթներ (ժորակավոր կաթնամաններ, մեծ կոնքեր և այլն):

Պահպանվել են նաև արհեստագրծական բնույթի արտագրական գործունեութլամբ նյութերն վկայութլուններ:

Քննվող ժամանակաշրջանի ուրգի անիվների բացառիկ մուշները վկայում են խեցեգործութլամբ աճի և ղարգացման որողակի մակարակի մասին, որը բնութագրվում է տեղական խեցեղենի գանգվածային արտագրութլամբ: Հետևարար, բնակավայրը ունեցել է խեցեղենի իր սեփական արտագրութլունը և պահահտկան չէ, որ Դվինում հայտնարերված հնագիտ-

կան նյութերի մեջ խեցեզներ առաջնակարգ տեղ է գրավում: Թե՛ քանակապես և թե՛ որակով: Խեցեզործության զարգացման բարձր մակարդակի մասին են վկայում: ոչ միայն վարպետորեն պատրաստված տարբեր շափերի, բաղամալն և բազմապիսի անոթների առկայությունը, այլև գրանց գեղարվեստական գունազարգումը: Լյսպիտով, թե՛ ձևի կատարելության, թե՛ հարգարման հորինվածքային գեղարվեստական շուրջի շուրջի, շատ խեցեզներ կերտվածքներ արհեստագործական արտագրանքից վեր են ածվում արվեստի նմուշների: Դժվարագույն, ինչպես արդեն նշվել է, առատորեն հայտնաբերվող խեցեզներ հնագույնական այն անփոքարրնելի նյութն է, որ տրվյալ ղեպում աղերսվելով Հայաստանի և Հելլենիստական աշխարհի հուշարձանների նույնատիպ խեցեզներին, նախ՝ հանդիսանում է քննվող բնակավայրի թվագրման ամենակարևոր կովաններից մեկը և երկրորդ՝ բացահայտում հուշարձանի հելլենիստական կերպարտները: Հատկապես այս բնագավառում են հանդես գալիս այն սերտ աղերսները Արտաշատի խեցեզործական արտադրանքի հետ, որոնք մի կողմից բացահայտում են ավյալ ժամանակի, տվյալ ասրածքի նույնությունից ըստղ արտադրանքի ընդհանրությունը ու բնույթը, մյուս կողմից՝ ընդգծում քննվող բնակավայրին՝ Դվինին բնորոշ արտադրանքի ինքնուրույնությունը:

Բնակավայրի նյութական մշակույթի տարրեր բնագավառներում իր ուրույն տեղն է ունեցել քարի մշակումը: Քարը լայնորեն օգտագործվել է տնտեսության և կենցաղի, շինարարության, ինչպես նաև արվեստի մեջ: Օգտագործվել են՝ որձաքար (բաղալտ), օձաքար, տուֆ, սպիտակ ավաղաքար:

Հայտնաբերվել են վարպետորեն կերտված, գարաշրջանի շինարարական տեխնիկային և տրվեստին բնորոշ սյան՝ տորտձև և «ատտիկական» տիպի բաղամալի իարիսիններ, որոնցից մի քանիսի ստորուսների տրամագծերի մեծությունը թույլ է տալիս ենթադրել, որ վերջիններիս վրա հենվել են սյան, քարե գլաններ (ի գեպ հայտնաբերվել է նաև տուֆե մատենքավոր գլանի վերնամաս): Խման մանրամասներով զորեղ կառույցը, բնականարար կպահանջեր և քտրե ծածկ: Ընդ որում, տյստեղ առկա է նաև նման ծածկի բաղալտի սալ, որ սերտորեն աղերսվում է. հատկապես Գառնիի հեթանոսական տաճարի ծածկասալերին: Փաստորեն ճարտարտպետական այս մանրամասները կենգանի արձագտնքներն են ժամանակի ոգով կառուցված հասարակական-պաշտամունքային քնույթի՝ երրեմնի շքեղ կառույցների:

Քանգակագործության զարգացման յուրահատուկ գրեկորումներից մեկն է Դվինի մերձակայքում հայտնաբերված տեղական ըտղտլտից՝ հոռմետկան նմանատիպ կոթողների արվեստով և ոճով կերտված Միթրայի պաշտամունքին նվիրված զոհասեղանը, [ր սրտահայտիչ պատկերաքանդակներով:

